



# «ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԱՆԱՆՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՉՈՐԱՑՄԱՆ ՕՐԱԿԱՐԳ»

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ  
ԶԵԿՈՒՅՑ

*Մեպտեմբեր, 2025թ.*

Այս հրապարակումը պատրաստվել է «ՎԻՆՆԵԹ Գորխ» զարգացման հիմնադրամի կողմից՝ «ՀԱՎԱՍԱՐ - ԵՄ-ն հանուն կանանց իրավագործման Հայաստանում» և «Մարդու իրավունքների պաշտպանության խթանում և ազգային հաստատությունների հզորացում» ծրագրերի և Սեքյուդ Պոպուլե Ֆդանսե կազմակերպության ֆինանսական աջակցությամբ:

«ՀԱՎԱՍԱՐ - ԵՄ-ն հանուն կանանց իրավագործման Հայաստանում» ծրագիրն իրականացվում է ՕքսեՋեն հիմնադրամի, «Եվրոպական գործընկերություն հանուն ժողովրդավարության» ՀԿ-ի, «Նիդեռլանդների հերիմկյան կոմիտե» ՀԿ-ի, «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ի, «ՎԻՆՆԵԹ Գորխ» զարգացման հիմնադրամի կողմից, «Վիննեթ Շվեդիա» ՀԿ-ի հետ համագործակցությամբ: Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

«Մարդու իրավունքների պաշտպանության խթանում և ազգային հաստատությունների հզորացում» ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից և իրականացվում է ՄԱԶԾ-ի, ՅՈՒՆԻՍԵՖ-ի, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի կողմից:

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «ՎԻՆՆԵԹ Գորխ» զարգացման հիմնադրամը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության, ՕքսեՋեն հիմնադրամի, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի, ՅՈՒՆԻՍԵՖ-ի, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի և Սեքյուդ Պոպուլե Ֆդանսե կազմակերպության տեսակետները:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Հապավումների ցանկ ..... 4
- Ամփոփագիր ..... 5
- Ներածություն ..... 21
- Քաղաքականության հետազոտության շրջանակ ..... 22
- Կանանց տնտեսական հզորացման քաղաքական և գործընկերային հիմքեր. 23
- Մեթոդաբանություն ..... 24
- Իրավիճակի գնահատում. ընդհանուր շրջանակ – Հայաստան ..... 28
- Կանանց տնտեսական հզորացման քաղաքականության հիմնադրույթներ ... 34
- Վերլուծություն. խնդիրների և առաջարկությունների համապարփակ փաթեթ  
..... 37
- Ամփոփիչ դիտարկումներ և ռազմավարական առաջարկություններ ..... 72
- Եզրակացություն ..... 76
- Օգտագործված գրականության ցանկ. *քաղաքականության փաստաթղթի  
կառուցվածքի մշակման համար* ..... 77
- Օգտագործված գրականության ցանկ. *քաղաքականության փաստաթղթի  
բովանդակության մշակման համար* ..... 78
- Հավելվածներ ..... 79

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

- ԱԱՏՄ – Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին
- ԱՍՀՆ – ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
- ԲՏԱՆ – ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
- ԵՄ – Եվրոպական միություն
- ԷՆ – ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն
- ԿԲ – Կենտրոնական բանկ
- ԿԳՄՄՆ – ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
- ԿԶՆ – Կայուն զարգացման նպատակներ
- ԿԶՆԱԿ – Կրթական զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն
- ՀԸԳՀ – Հայաստան–Եվրոպական Միություն համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր
- ՀԿ – Հասարակական կազմակերպություն
- ՀՀ – Հայաստանի Հանրապետություն
- ՄԱԿ – Միավորված ազգերի կազմակերպություն
- ՄԻՊ – Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ
- ՊԵԿ – Պետական եկամուտների կոմիտե
- ՏԻՄ – Տեղական ինքնակառավարման մարմիններ
- ՏԿԵՆ – ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
- ՏՏ – Տեղեկատվական տեխնոլոգիաներ
- ՓՄԶ – Փոքր և միջին ձեռնարկություն
- ԲՀԿ – Բաղաքացիական հասարակական կազմակերպություն
- ՖԻՄ – Ֆոկուս խումբ
- ՖԻՍԲ – Ֆոկուս խմբային քննարկում

## ԱՄՓՈՓԱԳԻՐ

Սույն հետազոտությունը ներկայացնում է Հայաստանի հինգ մարզում իրականացված ուսումնասիրության արդյունքները, որոնք նպատակ ունեն բացահայտել կանանց տնտեսական հզորացման հիմնական խոչընդոտներն ու հնարավորությունները և առաջարկել իրագործելի քաղաքական լուծումներ: Ուսումնասիրությունը հիմնված է համայնքային քննարկումների, ֆոկլուս խմբային քննարկումների և փորձագիտական հարցազրույցների վրա, որոնց ընթացքում վեր են հանվել կանանց տնտեսական հզորացման հիմնախնդիրները, մասնակցության խոչընդոտները և նշմարվել են հզորացման հնարավոր ուղիները:

### Հիմնական խնդիրներ և հնարավոր լուծումներ

*Խնդիր 1. Կարծրատիպերի սահմանափակող ազդեցությունը կանանց տնտեսական ակտիվության վրա*

**Խնդրի նկարագրություն.** Ընտանեկան և համայնքային միջավայրում պահպանվող ու շրջանառվող կարծրատիպերը շարունակում են լրջորեն խոչընդոտել կանանց տնտեսական ակտիվությանը՝ սահմանափակելով նրանց կրթական, մասնագիտական և տնտեսական իրավունքները և հնարավորությունները, խորացնելով վերջիններիս ֆինանսական կախվածությունն ու նվազեցնելով մասնակցությունը երկրի զարգացմանը: Մասնակիցների դիտարկմամբ՝ հատկապես Ծիրակի մարզում, պահպանողական միջավայրը և ընտանիքի դերի շուրջ ձևավորված կարծրատիպերը առավել ուժեղ են, ինչի հետևանքով կանանց ու աղջիկների ընտրության հնարավորությունները և տնտեսական ներգրավվածությունը զգալիորեն կրճատվում են:

### Խնդիրների շրջանակ

1. **Ընտանեկան կարծրատիպեր.** «Կինը չպետք է աշխատի» մոտեցումը գրկում է կանանց զբաղվածության և ֆինանսական անկախության հնարավորությունից:
2. **Կրթության սահմանափակում.** աղջիկների համար բարձրագույն կրթությունը հաճախ չի խրախուսվում կամ նույնիսկ արգելվում է:
3. **Անվտանգության կանխակալ պատկերացումներ.** համարվում է, որ կանանց համար վտանգավոր է աշխատել կամ սովորել համայնքից դուրս, ինչը սահմանափակում է նրանց շարժունությունն ու հեռանկարները: Անվտանգության երաշխիքը պետք է ապահովի պետությունը:

4. **Տնտեսական կախվածություն.** վճարովի աշխատանքի սահմանափակ մասնակցությունը խորացնում է կանանց կախվածությունը ընտանիքի անդամներից:

### **Լուծումների շրջանակ**

1. **Կարծրատիպերի հաղթահարում և ներգրավվածության խթանում.** իրականացնել իրազեկման և կրթական ծրագրեր՝ վնասակար կարծրատիպերը հաղթահարելու և կանանց ներգրավվածությունը խթանելու համար:
2. **Կանանց և աղջիկների կրթության խրախուսում և աջակցության ծրագրեր.** ներդնել կրթաթոշակներ, մենթորություն և խրախուսական մեխանիզմներ՝ հատկապես մարզաբնակ կանանց և աղջիկների բարձրագույն կրթության և մասնագիտական կողմնորոշման և զարգացման համար:
3. **Անվտանգության ապահովում, ընկալումների փոփոխություն և շարժունության խթանում.** կազմակերպել իրազեկման արշավներ և ծրագրեր կանանց անվտանգ տեղաշարժի ու աշխատանքի հնարավորությունների մասին, ինչպես նաև զարգացնել հանրային տրանսպորտի մեխանիզմները:

---

*Խնդիր 2. Գենդերային խզվածքը տնային չվճարվող աշխատանքում և կանանց տնտեսական հզորացման հարցերը*

**Խնդրի նկարագրություն.** Կանայք շարունակում են կրել «երկակի» կամ «բազմակի բեռ»՝ համատեղելով վճարովի աշխատանքը տնային ու խնամքի աշխատանքների հետ: Սա խոչընդոտում է նրանց մասնագիտական աճին, հանգեցնում է քրոնիկ հոգնածության և խորացնում անհավասարությունը՝ նվազեցնելով կանանց տնտեսական ինքնավարությունն ու սոցիալական կայունությունը:

### **Խնդիրների շրջանակ**

1. **Չվճարվող աշխատանքի անհամաչափ բաշխում.** տնային տնտեսության և խնամքի բեռը գրեթե ամբողջությամբ կանանց վրա է՝ նույնիսկ վերջիններիս կողմից գուգահեռ վճարովի աշխատանք կատարելու պարագայում:
2. **Խնամքի ծառայությունների սահմանափակ հասանելիություն.** մարզերում մանկապարտեզները, զարգացման և խնամքի կենտրոնները, այդ թվում՝

երեխաների, տարեց անձանց, հաշմանդամություն ունեցող անձանց համար, կամ բացակայում են, կամ էլ անհասանելի են ու ոչ մատչելի:

3. **«Երկակի» և «բազմակի բեռ».** աշխատող կանայք վճարովի աշխատանքային ժամերից հետո նաև հիմնականում ամբողջությամբ կատարում են չվճարովի խնամքի և տնային տնտեսության գործերը, որն առաջ է բերում քրոնիկ հոգնածություն և աշխատանք-կյանքի անհավասարակշռություն:
4. **Գյուղատնտեսական աշխատանքում կանանց ծանրաբեռնվածություն.** կանայք ներգրավված են նաև տնամերձ ու դաշտային աշխատանքներում՝ գուգահեռ խնամքի չվճարովի և վճարովի աշխատանքի:
5. **Մասնագիտական աճի խոչընդոտում.** բազմակի բեռը սահմանափակում է կանանց մասնագիտական առաջխաղացումն ու եկամտի բարձրացման հնարավորությունները:
6. **Գենդերային խզվածք տնային և գյուղատնտեսական աշխատանքում.** տղամարդկանց սահմանափակ մասնակցությունը տնային տնտեսության ու խնամքի աշխատանքներում խորացնում է կանանց կախվածությունն ու գենդերային անհավասարությունը:

## **Լուծումների շրջանակ**

1. **Չվճարվող աշխատանքի բեռի կրճատում և խնամքի ծառայությունների համալրում.** մարզերում զարգացնել մատչելի խնամքի ծառայություններ՝ մանկապարտեզներ, ցերեկային և տարեցների խնամքի կենտրոններ:
2. **Երկակի/բազմակի բեռի թեթևացում.** ներդնել ճկուն զբաղվածության ձևաչափեր և մեխանիզմներ, ինչպես նաև խրախուսել գործատուներին ապահովելու ընտանիքամետ/ընտանիքահեն բարենպաստ պայմաններ:
3. **Գյուղատնտեսական աշխատանքում կանանց ծանրաբեռնվածության նվազեցում.** ապահովել կանանց հասանելիությունը ժամանակակից գյուղատնտեսական տեխնոլոգիաներին և իրականացնել դրանց կիրառման վերաբերյալ ուսուցում:
4. **Մասնագիտական աճի խթանում.** ներդնել մասնագիտական շարունակական կրթության և վերապատրաստման հասանելի ծրագրեր բոլոր մարզերում:
5. **Տղամարդկանց ներգրավվածության խթանում տնային և խնամքի աշխատանքներում.** իրականացնել իրազեկման և կրթական ծրագրեր՝ խթանելով տնային ու խնամքի աշխատանքներում համատեղ պատասխանատվությունը:

### *Խնդիր 3. Կրթության և աշխատաշուկայի անհամապատասխանություն և տնտեսական խոչընդոտներ*

**Խնդրի նկարագրություն.** Մարզերում մասնագիտությունների առաջարկն ու աշխատաշուկայի պահանջարկը հաճախ չեն համապատասխանում. կանայք հաճախ ընտրում կամ ստանում են կրթություն այն մասնագիտություններով, որոնք պահանջված չեն կամ այդքան պահանջարկ չունեն: Միևնույն ժամանակ տեղում աշխատատեղերի սղությունը և ցածր վարձատրությունը խոչընդոտում են կանանց լիարժեք ներգրավվածությանը և տնտեսական կայունությանը:

Խոցելի խմբերի կանայք հաճախ չունեն բավարար մասնագիտական պատրաստվածություն ու մրցունակություն և դժվարությամբ են ինտեգրվում աշխատաշուկայում:

Պետական ծրագրերը կարճաժամկետ են և կենտրոնացած ավանդական, ցածր եկամտաբեր մասնագիտությունների վրա: Կանայք կարիք ունեն շարունակական կրթության, պրակտիկայի, թվային հմտությունների և մասնագիտական ցանցերի՝ մրցունակ դառնալու համար:

### **Խնդիրների շրջանակ**

- Աշխատաշուկա մուտք գործող խոցելի խմբերի կանանց մասնագիտական պատրաստվածության ցածր մակարդակ.** խոցելի խմբերի կանանց զգալի մասը չունի շուկայի պահանջներին համապատասխան հմտություններ և մրցունակություն:
- ԼԳ-ից բռնի տեղահանված կանանց մասնագիտական վերապրոֆիլավորման խնդիրներ.** նույնիսկ կրթությամբ ու փորձով կանայք դժվարանում են գտնել աշխատանք Հայաստանում:
- Ընտանեկան բռնության ենթարկված կանանց տնտեսական և մասնագիտական հզորացման անհրաժեշտություն.** տնտեսական անկախության բացակայությունը մեծացնում է բռնարար հարաբերություններին վերադառնալու ռիսկը:
- Պետական ծրագրերի կարճաժամկետ և մասնակի բնույթ.** դրանք կարճաժամկետ են և կենտրոնացած ավանդական, ցածր եկամտաբեր մասնագիտությունների վրա:
- Շարունակական կրթության և պրակտիկայի հնարավորությունների բացակայություն.** կանայք չեն ապահովվում հետագա կրթությամբ, պրակտիկայով, ցանցերով և թվային հմտություններով:

6. **Մշտադիտարկման և գնահատման համակարգերի բացակայություն.** չկան կայուն և գործող մեխանիզմներ ծրագրերի արդյունավետությունը պարբերաբար գնահատելու և բարելավումներ կատարելու համար:

## **Լուծումների շրջանակ**

1. **Շուկայի պահանջներին համապատասխան մասնագիտական վերապատրաստման ծրագրեր.** կանանց՝ հատկապես խոցելի խմբերին, վերապատրաստել բարձր եկամտաբեր ոլորտներում (SS, թվային հմտություններ, հաշվապահություն և այլն)՝ երկարաժամկետ ծրագրերով:
2. **Շարունակական կրթություն և պրակտիկայի հնարավորությունների ստեղծում.** ծրագրերից հետո ապահովել ուսուցում, մենթորություն, պրակտիկա, ցանցեր և թվային հմտությունների զարգացում:
3. **Քուլինգ կամ անհատական մենթորության իրականացում «կինը կնոջ համար» սկզբունքով.** կազմակերպել անհատական աջակցություն՝ կարիերայի, կրթության և ինքնավստահության զարգացման համար:
4. **Կարճաժամկետ և ավանդական մասնագիտություններից ու հմտությունների ձեռքբերումից անցում նորարար և եկամտաբեր ոլորտներ՝ կանանց տնտեսական կայուն զարգացման և հզորացման համար.** վերանայել ծրագրերը՝ շեշտը դնելով շուկայում պահանջված և բարձր եկամուտ ապահովող մասնագիտությունների վրա:
5. **Ծրագրերի արդյունավետության շարունակական մշտադիտարկում և գնահատում.** ներդնել գնահատման արդյունավետ համակարգ՝ ծրագրերի արդյունավետությունն ու գենդերային ազդեցությունը չափելու և բարելավելու համար:
6. **Նպատակային ուսուցում և եռակողմ համագործակցություն.** պետությունը պետք է ապահովի ուսման վարձերի փոխհատուցում, պարտադիր պրակտիկա և բուհերի, քոլեջների ու գործատուների համագործակցություն:
7. **Վճարովի պրակտիկայի մոդել.** Վերագործարկել և ընդլայնել ՄՄԾ փորձը՝ ապահովելով 3–6 ամսվա վճարովի պրակտիկա և հետագա ինտեգրում աշխատաշուկայում:

#### *Խնդիր 4. Կարծրատիպեր և խորականություն մասնագիտության ընտրության համատեքստում*

**Խնդրի նկարագրություն.** Կանանց մասնագիտական ընտրությունը սահմանափակվում է գենդերային կարծրատիպերով, որոնք բարձր վարձատրվող և նորարարական ոլորտները ներկայացնում են որպես «տղամարդկանց» գրադմունք: Սա խոչընդոտում է կանանց մուտքը բնական գիտություններ, ՏՏ, ինժեներության, ճարտարագիտության, անվտանգության, արդարադատության և ուժային ոլորտներ և այլ ոչ ավանդական ոլորտներ, որտեղ նրանց ներկայությունը դեռ սահմանափակ է և պայմանավորված հիմնականում անհատական նախաձեռնություններով կամ դոնորային ծրագրերով:

Կրթական համակարգում կարծրատիպերը շարունակում են պահպանվել, ինչի հետևանքով կանայք հաճախ ընտրում են ավանդական մասնագիտություններ՝ մանկավարժություն, առողջապահություն, սոցիալական աշխատանք: Այս կանխակալ վերաբերմունքը ոչ միայն սահմանափակում է կանանց մասնագիտական ներուժի իրացումը, այլև խորացնում է գենդերային անհավասարությունը կրթության և աշխատաշուկայի ոլորտներում՝ ստեղծելով երկարաժամկետ սոցիալ-տնտեսական հետևանքներ:

#### **Խնդիրների շրջանակ**

1. **Գենդերային կարծրատիպերի ազդեցություն.** հասարակական սպասելիքներն ու կարծրատիպերը սահմանափակում են կանանց մասնագիտական ընտրությունը՝ որոշ ոլորտներ ներկայացնելով որպես «տղամարդկանց» գրադմունք:
2. **Ավանդական և «ընդունված» մասնագիտությունների գերադասում.** կանայք հիմնականում ընտրում են մանկավարժություն, առողջապահություն, սոցիալական աշխատանք ու արվեստներ՝ դուրս մնալով բարձր վարձատրվող ու նորարարական ոլորտներից:
3. **Խնդրի լուծմանը միտված հատվածային մոտեցում.** ՏՏ, ինժեներական և ուժային կառույցներում կանանց ներգրավվածությունը աճում է, բայց հիմնականում անհատական նախաձեռնությունների ու դոնորային ծրագրերի շնորհիվ, այլ ոչ համակարգային պետական քաղաքականությամբ:
4. **Գենդերազգայուն աշխատանքային միջավայրերի բացակայություն.** աշխատանքի վայրերում պակասում են ներառական ենթակառուցվածքներ, ճկունություն և մեխանիզմներ, ինչը սահմանափակում է կանանց առաջխաղացումը:
5. **Կրթական և խորհրդատվական համակարգերի ազդեցություն.** կրթական և կարիերայի խորհրդատվությունը հաճախ ամրապնդում է կարծրատիպերը՝

սահմանափակելով աղջիկների հետաքրքրությունը ոչ ավանդական ոլորտների նկատմամբ:

6. **Սոցիալական խոչընդոտները և կարծրատիպերը՝ որպես անինքնավստահության հիմք.** սոցիալական սպասելիքներն ու կարծրատիպերը նվազեցնում են կանանց ինքնավստահությունն ու մասնագիտական հեռանկարները:
7. **Տարածքային և համակարգային ծրագրերի պակաս.** համայնքներում և ազգային մակարդակում չկան բավարար ծրագրեր, որոնք կխրախուսեն գենդերային հավասար ընտրությունն ու բազմազան մասնագիտական հնարավորությունները:

### **Լուծումների շրջանակ**

1. **Մանկավարժների և կրթական անձնակազմի վերապատրաստում.** մանկապարտեզներից մինչև հանրակրթական դպրոցներ իրականացնել շարունակական վերապատրաստումներ՝ մանկավարժների և կրթական անձնակազմի վերաբերմունքի ու ակնկալիքների փոփոխման համար՝ ներառելով նաև ծնողական համայնքը:
2. **Հանրային արշավների իրականացում.** ներկայացնել կանանց հաջողված օրինակներ ավանդաբար «տղամարդկանց» ոլորտներում՝ ավանդական և սոցիալական մեղիայի, հրապարակային ու արվեստային միջոցառումների միջոցով:
3. **Համայնքային միջոցառումների կազմակերպում.** կազմակերպել տեղական հանդիպումներ ու արշավներ՝ կանանց ակտիվ ու դրական մասնագիտական դերային կերպարների ներկայացմամբ և մասնագետների մասնակցությամբ:
4. **Մասնագիտական կողմնորոշման խմբակների թեմատիկ ակտիվացում.** դպրոցներում իրականացնել խորհրդատվական ու մենթորական նախագծեր, սիմուլացիոն խաղեր և հանդիպումներ մասնագետների հետ՝ աղջիկների մոտիվացիան բարձրացնելու համար՝ մասնագիտական կողմնորոշման խմբակների գործունեության շրջանակում:
5. **Քաղաքական, պետական և համայնքային աջակցության համակարգային մոտեցում.** մշակել և իրականացնել կրթական, աշխատանքային ու խորհրդատվական քաղաքականություններ՝ գենդերային հավասարության և կանանց տնտեսական հզորացման համար:
6. **Մշտադիտարկման և գնահատման մեխանիզմների ներդրում.** ներդնել մեխանիզմներ՝ ծրագրերի արդյունավետությունն ու ազդեցությունը գնահատելու համար:

7. **Գենդերազգայուն կրթական միջավայրի ապահովում.** ստեղծել գենդերազգայուն, գենդեր-արձագանքող, ներառական ու հավասար կրթական պայմաններ՝ ենթակառուցվածքների, դասընթացների և ռեսուրսների հասանելիության միջոցով:

---

*Խնդիր 5. Արժանապատիվ աշխատանքի իրավական պաշտպանական մեխանիզմների թերություններ և իրազեկվածության բացեր*

**Խնդրի նկարագրություն.** չնայած օրենսդրական փոփոխություններին՝ աշխատավայրերում կանայք շարունակում են բախվել խտրականության, սեռական ոտնձգության, չգրանցված աշխատանքի և պայմանագրերի ձևականության: Մարզերում տարածված են երկար աշխատանքային ժամերը առանց հավելավճարի, սահմանափակ ընդմիջումները և սոցիալական ապահովագրության բացակայությունը:

Կանայք նույն աշխատանքի համար հաճախ ավելի քիչ են վարձատրվում, իսկ մարզերում աշխատավարձերը լրացուցիչ ցածր են: Այս պայմանները խորացնում են կանանց խոցելիությունն ու դարձնում արժանապատիվ աշխատանքի իրավունքը հոշակված, բայց ոչ լիարժեք երաշխավորված:

## **Խնդիրների շրջանակ**

1. **Աշխատավայրում սեռական ոտնձգություններ և ոչ պատշաճ վարքագիծ.** կանայք ենթարկվում են սեռական բնույթի տարատեսակ ոտնձգությունների, այդ թվում՝ շատ հաճախ կատակների, արտահայտությունների ու անեկդոտների մակարդակում, որոնք միջավայրում մնում են անարձագանք:
2. **Խտրականություն և արժանապատիվ աշխատանքի իրավունքների խախտումներ.** կանայք բախվում են աշխատանքային անհավասար վերաբերմունքի և արժանապատիվ աշխատանքի իրավունքի թերի իրացման:
3. **Օրենսդրական պահանջների չկատարում.** փոքր արտադրամասերում ու սպասարկման կետերում, որտեղ վերահսկողությունը քիչ է, կանայք չունեն լիարժեք ընդմիջում, աշխատում են հավելյալ ժամերով՝ առանց հավելավճարի:
4. **Չգրանցված աշխատանք և պայմանագրերի բացակայություն.** աշխատող կանանց զգալի մաս շարունակում է աշխատել առանց պայմանագրի՝ գրկվելով իրավական, սոցիալական և առողջապահական պաշտպանությունից:

5. **Պայմանագրերի ձևական բնույթ.** առկա պայմանագրերը հաճախ չեն արտացոլում իրական աշխատավարձը, ինչի հետևանքով կանայք կորցնում են սոցիալական երաշխիքներ և ունենում են ֆինանսական դժվարություններ:
6. **Իրազեկվածության պակաս կամ ցածր մակարդակ.** կանայք հաճախ տեղյակ չեն իրենց իրավունքներին և բողոքարկման ընթացակարգերին, ինչի հետևանքով խախտումները մնում են չբացահայտված:
7. **Անհավասար վարձատրություն և տարածքային խտրականություն.** կանայք մարզերում հաճախ ավելի ցածր աշխատավարձ են ստանում, քան տղամարդիկ նույն աշխատանքի դիմաց՝ ըստ մասնակիցների հայտնած տվյալների, իսկ մարզային վարձատրությունն էլ ընդհանուր առմամբ ցածր է՝ ի համեմատ մայրաքաղաքի, առաջացնելով կրկնակի խտրականություն:

### **Լուծումների շրջանակ**

1. **Աշխատավայրում սեռական ոտնձգությունների և խտրականության կանխարգելում.** ներդնել պարտադիր ներքին կանոնակարգեր և վարքականոններ բոլոր պետական և մասնավոր կազմակերպություններում՝ ապահովելով գրոյական հանդուրժողականության քաղաքականություն և արձագանքման արդյունավետ մեխանիզմներ:
2. **Աշխատաժամերի և ընդմիջումների իրավունքի վերահսկողություն.** ուժեղացնել վերահսկողությունը մարզերում գործող փոքր արտադրամասերում և սպասարկման ոլորտի կազմակերպություններում:
3. **Աշխատանքային պայմանագրերի պարտադիր կիրարկում.** ապահովել, որ բոլոր աշխատողները գրանցված լինեն և ստանան իրենց փաստացի աշխատավարձի ամբողջական արտացոլումը պայմանագրում:
4. **Աշխատանքային իրավունքների վերաբերյալ իրազեկման ծրագրեր.** իրականացնել թիրախային հանրային և մասնագիտական արշավներ կանանց համար՝ ընդգրկելով հատկապես խոցելի խմբերը և ՀՀ բոլոր մարզերը:
5. **Բողոքարկման և աջակցության մեխանիզմների զարգացում.** ստեղծել անկախ թե՛ գծեր և օնլայն հարթակներ՝ աշխատանքի իրավունքների խախտումների արագ արձագանքման նպատակով:
6. **Հավասար վարձատրության ապահովում և տարածքային խզվածքների կրճատում.** Ներդնել աշխատավարձի թափանցիկության մեխանիզմներ բոլոր կազմակերպություններում, ուժեղացնել ԱԱՏՄ վերահսկողությունը հավասար վարձատրության սկզբունքի նկատմամբ և խթանել պետական ու ՏԻՄ միջոցառումներ՝ բարձրացնելով մարզերում աշխատավարձերի մրցունակությունը և կանանց իրազեկվածությունը:

*Խնդիր 6. Կանանց ձեռնարկատիրության զարգացման խոչընդոտներն ու սահմանափակումները. հմտություններ, միջավայր, շուկա և քաղաքականություն*

**Խնդրի նկարագրություն.** կանանց ձեռնարկատիրությանը տրամադրվող աջակցությունը Հայաստանում անկայուն է և չի բավարարում իրական կարիքները: Անհրաժեշտ է ոչ միայն թվային ու ֆինանսական, այլև բիզնեսի, կառավարման, շուկայավարման և նորարարական հմտությունների զարգացում: ՏԻՄ-երը, ՀԿ-ներն ու միջազգային գործընկերները պետք է համատեղ ծրագրեր իրականացնեն, իսկ պետությունը՝ ապահովի քաղաքական ու ինստիտուցիոնալ աջակցություն՝ կանանց ձեռնարկատիրության կայունության և ՓՄՁ-ների մրցունակության համար:

**Խնդիրների շրջանակ**

1. **Կանանց ձեռնարկատիրական աջակցության համակարգային ծրագրերի պակաս.** առկա նախաձեռնությունները մեկանգամյա և դոնորային բնույթի են, չունեն կայունություն:
2. **Տեղական ինքնակառավարման մարմինների ցածր ներգրավվածություն.** համայնքներում կանանց ձեռնարկատիրական կարողությունների զարգացման համար ծրագրեր գրեթե չկան, կամ չեն ունենում բյուջետային և ինստիտուցիոնալ ապահովում:
3. **Պետական քաղաքականության և ռազմավարական մոտեցման բացեր.** ձեռնարկատիրության խթանումը կանանց համար հիմնականում իրականացվում է մեկանգամյա կամ հատվածային ծրագրերով՝ առանց միջգերատեսչական համակարգվածության:
4. **Սահմանափակ հմտությունների փաթեթ կանանց ձեռնարկատիրության համար.** շեշտը դրվում է թվային ու ֆինանսական գրագիտության վրա, բայց բացակայում են իրավական, կառավարման և փափուկ հմտությունները:
5. **Շուկայավարման և նորարարական գիտելիքների պակաս.** թերի են թվային մարքեթինգի, բրենդի ձևավորման, էլեկտրոնային առևտրի ու ռիսկերի կառավարման հմտությունները:
6. **Ֆինանսական ռեսուրսների և գրավի միջոցների անհասանելիություն.** կանայք հաճախ չունեն բանկային հաշիվ, գրավի միջոց կամ ժառանգական գույք, ինչի հետևանքով զրկվում են վարկային հասանելիությունից և տնտեսական ինքնուրույնությունից:

## Լուծումների շրջանակ

1. **Համակարգային և կայուն ծրագրերի ներդրում.** պետության կողմից ներդնել կանանց ձեռնարկատիրության խթանման երկարաժամկետ ազգային ծրագիր՝ միջազգային գործընկերների մասնակցությամբ: Մշակել հարկային արտոնություններ և խթաններ, խոցելի խմբերի համար՝ նպաստավոր պայմաններ ու հատուկ ծրագրեր:
2. **ՏԻՄ-երի ներգրավվածության ապահովում.** համայնքներում ներդնել բյուջետային ծրագրեր և համագործակցել ՀԿ-ների ու տեղական բիզնեսի հետ՝ կանանց ձեռնարկատիրական հմտությունները զարգացնելու համար:
3. **Կրթական և խորհրդատվական փաթեթների ընդլայնում, միջազգային փորձի ուսումնասիրություն և համատեքստայնացում.** թվային և ֆինանսական գրագիտությանը զուգահեռ ապահովել իրավական, կառավարման, հաղորդակցական ու բանակցային հմտությունների զարգացում: Կիրառել միջազգային փորձ, կազմակերպել վերապատրաստումներ և իրազեկման արշավներ՝ գենդերային զգայուն մոտեցումներով:
4. **Շուկայավարման և նորարարական հմտությունների զարգացում.** ներդնել ծրագրեր թվային մարքեթինգի, բրենդի կառավարման, էլեկտրոնային առևտրի և կայուն զարգացման գործիքների համար:
5. **Մենթորություն և ցանցեր.** ստեղծել կանանց ձեռնարկատիրական ցանցեր և մենթորական ծրագրեր՝ փորձի փոխանակման, գործընկերության և շուկայի ընդլայնման համար:
6. **Ֆինանսական ռեսուրսների և գրավի միջոցների հասանելիության խրախուսում և ապահովում.** զարգացնել վարկային և դրամաշնորհային մեխանիզմներ՝ ապահովելով հավասար պայմաններ նաև առանց գույքային գրավի կանանց համար: Իրազեկել կանանց ժառանգական և գույքային իրավունքների մասին:

---

*Խնդիր 7. Ենթակառուցվածքային և տարածքային անհավասարություններ կանանց տնտեսական ակտիվության համատեքստում*

**Խնդրի նկարագրություն.** Մարզերում կանանց տնտեսական ակտիվությունը սահմանափակվում է տրանսպորտի և ենթակառուցվածքների բացերով: Անբավարար և ոչ կանոնավոր երթուղիները, աշխատատեղերի սղությունն ու ցածր վարձատրությունը

ստիպում են կանանց հրաժարվել կայուն զբաղվածությունից կամ ծախսել եկամտի մեծ մասը տրանսպորտի վրա:

Տեղում բարձրագույն կրթության սահմանափակ հասանելիությունը (օր.՝ Վայոց Ձորում) էլ ավելի խոչընդոտում է երիտասարդ կանանց մասնագիտական աճը:

### **Խնդիրների շրջանակ**

1. **Տրանսպորտային հասանելիության սահմանափակումներ.** մարզերում հասարակական տրանսպորտը անբավարար է և ոչ կանոնավոր. վերջին երթուղայինները հաճախ չեն համընկնում կանանց աշխատանքային ժամերի հետ՝ ստիպելով նրանց աշխատած օրավճարի զգալի մասը ծախսել անհատական տաքսու վրա՝ տունդարձի համար:
2. **Աշխատատեղերի սղություն և ցածր վարձատրություն.** կանայք մարզերում սահմանափակ ընտրություն ունեն՝ աշխատել ցածր վարձատրությամբ համայնքում կամ հրաժարվել աշխատանքից:
3. **Բարձրագույն կրթության անհասանելիություն.** ներկայումս Վայոց Ձորում բացակայում են բարձրագույն ուսումնական հաստատությունները, ինչի հետևանքով կանայք զրկվում են տեղում բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունից: Երևան տեղափոխվելը շատերի համար ֆինանսապես կամ սոցիալապես անհնար է, ինչը սահմանափակում է մասնագիտական աճն ու տնտեսական հզորացումը:
4. **Համայնքային զբաղվածության կենտրոնների թիրախային և գենդերազգայուն աշխատանքի բաց.** ներկայումս համայնքներում գործող զբաղվածության կենտրոնները հիմնականում չեն գործում կանանց կարիքներին ուղղված թիրախային ձևաչափով. դրանք հիմնականում չեն ապահովում թիրախային հմտությունների զարգացման ծրագրեր, ինչպես նաև չեն ապահովում ժամանակավոր աջակցություն խնամքի պարտականությունների բեռի թեթևացում: Արդյունքում, հատկապես խնամքի պատասխանատվություն կատարող կանայք ունեն սահմանափակ հնարավորություն օգտվելու նման ծառայություններից և մուտք գործելու աշխատաշուկա:

### **Լուծումների շրջանակ**

1. **Տրանսպորտային ենթակառուցվածքների բարելավում և կանոնավորեցում.** Հարմարեցնել հասարակական տրանսպորտի գրաֆիկները աշխատողների կարիքներին, նոր երթուղիներ ներդնել և ապահովել մատչելի գներ:
2. **Տեղական աշխատատեղերի ստեղծում և վարձատրության մրցունակության բարձրացում.** ՏԻՄ-երի և պետական ծրագրերի միջոցով խթանել փոքր/միջին

բիզնեսները, վերագործարկել չօգտագործվող գործարաններ և տրամադրել տարածքներ կանանց ձեռնարկատիրության համար:

3. **Քարձրագույն կրթության հասանելիության ընդլայնում մարզերում.** Վայոց Ձորում և այլ մարզերում բացել կամ վերագործարկել բուհեր/մասնաճյուղեր, ապահովել հեռավար կրթության տեխնիկական և ֆինանսական աջակցություն:
4. **Գենդերազգային զբաղվածության կենտրոններ՝ հմտությունների զարգացում, ժամանակավոր խնամքի ծառայություններ և գործատուների հետ կապ.** կենտրոնների ծառայությունները հարմարեցնել կանանց կարիքներին՝ ներառելով հմտությունների զարգացում, ժամանակավոր խնամքի ծառայություններ և գործատուների հետ կապի ստեղծում:

---

#### *Խնդիր 8. Զգայուն և խոցելի խմբերի կանանց տնտեսական ներառման սահմանափակումներ*

**Խնդրի նկարագրություն.** Զգայուն և խոցելի խմբերի կանայք (էթնիկ փոքրամասնություններ, փախստականներ, ԼԳ-ից բռնի տեղահանվածներ, հաշմանդամություն ունեցողներ, ընտանեկան բռնության ենթարկվածներ, հղիներ և այլ) հաճախ դուրս են մնում տնտեսական ակտիվությունից: Նրանց խոչընդոտում են կրթության և վերապատրաստման սահմանափակ հասանելիությունը, աշխատաշուկայում խտրական վերաբերմունքը, աշխատատեղերի ոչ ճկուն պայմանները, սոցիալական ու ենթակառուցվածքային ծառայությունների բացակայությունը և միջավայրի ոչ ներառականությունը: Արդյունքում նրանք զրկվում են արժանապատիվ աշխատանքի և կայուն եկամտի հնարավորությունից՝ մնալով սոցիալական ու տնտեսական կախվածության մեջ

#### **Խնդիրների շրջանակ**

1. **Կրթության և վերապատրաստման սահմանափակ հասանելիություն.** խոցելի խմբերի կանայք հաճախ դուրս են մնում ծրագրերից ֆինանսական, լեզվական կամ ֆիզիկական և այլ խոչընդոտների պատճառով:
2. **Աշխատաշուկայում խտրականություն.** էթնիկ փոքրամասնություններին, հաշմանդամություն ունեցող կամ տեղահանված կանանց նկատմամբ առկա է բացասական վերաբերմունք, ինչը նվազեցնում է նրանց մրցունակությունը:
3. **Աշխատավայրի ոչ ճկուն պայմաններ.** հղի կանանց, հաշմանդամություն ունեցող կանանց և խնամող պարտականություններ ունեցող կանանց համար բացակայում

են ճկուն աշխատանքային ձևաչափերը (հեռահար աշխատանք, կիսաժամային զբաղվածություն, հարմարեցված գրաֆիկ):

4. **Սոցիալական ծառայությունների սահմանափակում.** խնամքի, տրանսպորտի և առողջապահական ծառայությունների բացակայությունը խոչընդոտում է հատկապես այս խմբերի կանանց տնտեսական ներգրավվածությանը:
5. **Ֆիզիկական միջավայրի ոչ ներառականություն.** հաշմանդամություն ունեցող կանայք չունեն լիարժեք մատչելիություն աշխատավայրերում, կրթական հաստատություններում և հանրային վայրերում:
6. **Տնտեսական կախվածության խորացում.** վերը նշված խոչընդոտների հետևանքով խոցելի խմբերի կանայք հաճախ մնում են կախված ընտանիքի անդամներից կամ պետական նպաստներից՝ զրկվելով տնտեսական ինքնավարության հեռանկարից:

### **Լուծումների շրջանակ**

1. **Կրթության և վերապատրաստման հասանելիության ապահովում.** ստեղծել թիրախային ծրագրեր՝ լեզվական, մասնագիտական և թվային հմտությունների զարգացման համար:
2. **Աշխատաշուկայում խտրականության նվազեցում.** գործատուների համար ներդնել հակախտրական քաղաքականություններ և խթանիչ ծրագրեր՝ իրագրելով թիրախային լսարանին:
3. **Ճկուն աշխատանքային պայմանների ներդրում.** օրենսդրական և գործնական մեխանիզմներով խրախուսել հեռահար և հարմարեցված աշխատանքային մոդելներ հղի կանանց, հաշմանդամություն ունեցող կանանց և խնամքի աշխատանք կատարող կանանց համար:
4. **Սոցիալական ծառայությունների ընդլայնում.** մարզերում զարգացնել խնամքի, առողջապահական և տրանսպորտային մատչելի ծառայություններ:
5. **Ֆիզիկական միջավայրի ներառականության ապահովում.** հարմարեցնել ենթակառուցվածքները՝ ապահովելով ֆիզիկական հաշմանդամություն ունեցող կանանց համար հասանելիությունը կրթության, աշխատանքի և հանրային վայրերում:
6. **Տնտեսական անկախության խթանում.** զարգացնել ֆինանսական գրագիտության, վարկային հասանելիության և ձեռնարկատիրական ծրագրեր՝ ուղղված խոցելի խմբերի կանանց տնտեսական ինքնավարության ապահովմանը և հզորացմանը:

## ԱՄՓՈՓԻՉ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԵՐ

### Դիտարկումներ`

1. **Համակարգային մոտեցման պակաս.** Ներկայիս քաղաքականությունները և ծրագրերը հաճախ հատվածային ու կարճաժամկետ են՝ առանց երկարաժամկետ և կայուն արդյունքների ապահովման:
2. **Ռազմավարական հաղորդակցման բաց.** ծրագրերը չեն համակարգվում միմյանց հետ, այս դեպքում ռեսուրսները կարող են օգտագործվել ոչ օպտիմալ: Անհրաժեշտ է զարգացնել ռազմավարական հաղորդակցություն բոլոր պատասխանատու և շահակից կողմերի միջև:
3. **Մշտադիտարկման և գնահատման թերություններ.** գործող ծրագրերի մեծ մասը չի ենթարկվում շարունակական գնահատման, ինչի հետևանքով դժվարանում է արդյունավետության չափումն ու բարելավումը:
4. **Գենդերային վերլուծության բացակայություն.** քաղաքականությունների և նախաձեռնությունների զգալի մասը չի անցնում գենդերային վերլուծություն, ինչի հետևանքով կանանց կարիքները և խոչընդոտները ամբողջությամբ չեն արտացոլվում:
5. **Երկարաժամկետ միջոցառումների պակաս.** քաղաքական նախաձեռնությունները հիմնականում կենտրոնացած են կարճաժամկետ լուծումների վրա՝ առանց կանանց տնտեսական ակտիվության կայուն շարունակականության ապահովման:
6. **ՏԻՄ-երի սահմանափակ դերակատարություն.** կանայք թերի են ներկայացված ՏԻՄ հանձնաժողովներում, կարիքների գնահատումներ քիչ են իրականացվում, իսկ գենդերազգայուն/ գենդեր-արձագանքող բյուջետավորում ու համաֆինանսավորման մեխանիզմներ գրեթե չկան:
7. **Փորձի փոխանակման պակաս.** ՏԻՄ-երը գործում են մեկուսացված՝ չունենալով բավարար հարթակներ միջնարգային և միջազգային հաջողված փորձի փոխանակման ու տարածման համար:

### Առաջարկություններ`

1. **Գենդերային մեյնսթրիմինգ.** բոլոր քաղաքականություններն ու ծրագրերը պետք է հիմնված լինեն գենդերային վերլուծության և գենդերային ազդեցության գնահատման վրա՝ ներառյալ բյուջետավորումը:

2. **Ռազմավարական հաղորդակցություն.** ծրագրերը պետք է իրականացվեն փոխկապակցված և համակարգված՝ ապահովելով տեղեկատվության փոխանակում, համագործակցություն և ռեսուրսների օպտիմալ օգտագործում:
3. **Մշտադիտարկում և գնահատում.** անհրաժեշտ է ներդնել միասնական և չափելի մեխանիզմներ՝ գենդերազգայուն ցուցանիշներով, որոնք կապահովեն թափանցիկություն, հաշվետվողականություն և ծրագրերի շարունակական բարելավում:
4. **Երկարաժամկետ միջոցառումներ.** պետք է մշակել կայուն և կենսունակ նախաձեռնություններ՝ կանանց տնտեսական ակտիվության շարունակականության և մասնագիտական կայուն զարգացման համար:
5. **ՏԻՄ-երի կարողությունների զարգացում.** ՏԻՄ-երում ապահովել կանանց համաչափ ներգրավվածություն, պարբերաբար իրականացնել կարիքների գնահատում կանանց մասնակցությամբ, ներդնել գենդերազգայուն բյուջետավորում և համաֆինանսավորման ծրագրեր, կազմակերպել վերապատրաստումներ:
6. **Փորձի փոխանակում և ցանցային համագործակցություն.** կազմակերպել մարզային և միջազգային ճանաչողական այցեր, ստեղծել ազգային ցանց ՏԻՄ-երի համար, ներգրավել ԲՀԿ-ներ և միջազգային գործընկերներ՝ լավագույն փորձերի տարածման և տեղայնացման նպատակով:

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կանանց տնտեսական հզորացումը համարվում է գլոբալ զարգացման առաջնահերթություններից մեկը: Գենդերային ուսումնասիրությունները, ինչպես նաև մարդաբանական, տնտեսագիտական և սոցիոլոգիական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այն հասարակությունները, որտեղ կանայք ունեն հավասար մասնակցություն աշխատաշուկայում և հնարավորություն են ստանում զարգացնելու իրենց մասնագիտական և ձեռնարկատիրական ներուժը, հասնում են ավելի կայուն և ներառական զարգացման:

Այս համատեքստում *Հայաստանի Հանրապետությունում կանանց տնտեսական հզորացման հարցը ոչ միայն կանանց իրավունքների, պաշտպանության, հավասարության և առհասարակ մարդու իրավունքների հարթության խնդիր է, այլև ազգային և պետական զարգացման օրակարգի առանցքային բաղադրիչ:*

Հայաստանը վերջին տասնամյակներում բազմիցս բախվել է տնտեսական ու հումանիտար ճգնաժամերի, պատերազմական և հետպատերազմական իրավիճակների, ինչպես նաև միգրացիոն մեծ հոսքերի և կանգնած է եղել լուրջ սոցիալ-տնտեսական մարտահրավերների առաջ: Այս մարտահրավերներին արդյունավետորեն դիմակայելու համար անհրաժեշտ է օգտագործել բոլոր և բոլորի առկա ներուժները՝ բացահայտված և դեռևս չբացահայտված: Սակայն կանանց ներուժի մի զգալի մասը այդպես էլ մնում է չիրացված՝ պայմանավորված մի շարք համակարգային և հասարակական խոչընդոտներով:

Կանանց տնտեսական հզորացումը պետք է դրվի ոչ միայն սոցիալական և գենդերային հավասարության քաղաքականությունների, այլև տնտեսական և զարգացման ազգային ռազմավարությունների առանցքում՝ որպես գենդերային մեյնսթրիմինգի անհրաժեշտ բաղադրիչ:

Այս քաղաքականության հետազոտության զեկույցը *նպատակ ունի ներկայացնելու կանանց տնտեսական հզորացման ներկա վիճակի վերլուծությունը՝ հիմնված համատեքստային ուսումնասիրության վրա* (մանրամասն տե՛ս ստորև), *բացահայտել հիմնական խոչընդոտներն ու մարտահրավերները, ինչպես նաև առաջարկել քաղաքականության իրագործելի տարբերակներ և կոնկրետ առաջարկություններ՝ ուղղված Հայաստանի Հանրապետությունում կանանց տնտեսական հզորացմանը:* Սա պետք է դիտարկել ռազմավարական փորձ՝ խթանելու կանանց տնտեսական ներառական մասնակցությունը՝ անհատական մակարդակում ներուժի բացահայտման և իրացման համար, ինչպես նաև նպաստելու երկրի և հասարակության համապարփակ ու կայուն զարգացմանը:

## **ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿ**

Սույն **քաղաքականության հետազոտությունը** մշակվել է՝ հիմնվելով ՀՀ *հինգ թիրախային մարզերում՝ Սյունիք, Վայոց Ձոր, Ծիրակ, Լոռի և Տավուշ*, տեղի ունեցած 10 աշխատանքային հանդիպումների վրա, որոնցից հինգն իրականացվել է փորձագիտական և ակադեմիական համայնքների, վարկային ու բանկային կազմակերպությունների, բիզնես սեկտորի, ՔՀԿ-ների, մարզպետարանների և համայնքապետարանների ներկայացուցիչների հետ ֆոկլուս խմբային քննարկումների ձևաչափով, իսկ մյուս հինգը՝ համայնքային հանդիպումների ձևաչափով, որը ներառել է համայնքի կանանց և բնակիչների հետ հանդիպում-քննարկումներ, որոնց շրջանակում մասնակիցները ներկայացրել են իրենց փորձառությունները և տեսլականները՝ իրենց իսկ կողմից բարձրաձայնված խնդիրների վերաբերյալ, ինչպես նաև ուրվագծել են լուծումների հնարավոր շրջանակը: Ընդհանուր՝ շուրջ 190 մասնակից:

Հայաստանի համար կանանց տնտեսական հզորացումն ունի առանձնահատուկ ռազմավարական նշանակություն: Մեր երկրի բնակչության ավելի քան կեսը կանայք են, և նրանց լիարժեք ներգրավվածությունը տնտեսական կյանքի բոլոր ոլորտներում կարող է ստեղծել որակական փոփոխություններ՝ սկսած համայնքային կայունությունից մինչև ազգային տնտեսության մրցունակություն: Վիճակագրական տվյալները, սակայն, վկայում են, որ կանայք շարունակում են բախվել անհավասարության մի շարք դրսևորումների՝ աշխատաշուկայում ցածր ներկայացվածությունից և եկամուտների անհավասարությունից մինչև ֆինանսական ռեսուրսների սահմանափակ հասանելիություն և ոչ համաչափ բաշխված աշխատանք-կյանք-ընտանիք ծանրաբեռնվածություն և անհավասարակշռություն:

Այս **քաղաքականության փաստաթուղթը նպատակ ունի համակողմանի վերլուծել կանանց տնտեսական հզորացման առկա խոչընդոտները, գնահատել քաղաքական այլընտրանքները և առաջարկել իրագործելի լուծումներ:** Փաստաթղթի տրամաբանական շղթան կառուցված է այնպես, որ ցույց տա՝ ինչու է խնդիրը հրատապ հիմա, ինչպես է այն ազդում շահառուների և հասարակության վրա, և ինչպիսի համակարգային փոփոխություններ են անհրաժեշտ՝ երկարաժամկետ ազդեցություն ապահովելու համար:

Այս գործընթացում առաջնահերթ է ոչ միայն քաղաքականության ձևակերպումը, այլև դրա իրագործելիությունը: Առաջարկվող միջոցառումները միտված են ստեղծել հավասար հնարավորությունների միջավայր, որտեղ կանայք կարող են իրացնել իրենց ներուժը, դառնալ տնտեսական աճի շարժիչ ուժեր, իսկ պետությունն ու հասարակությունը՝ շահել նրանց լիարժեք ներուժից:

**ԿԱՆԱՆՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՉՈՐԱՑՄԱՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ՀԻՄՔԵՐ**

*Գործնականից անցում քաղաքականությունների.* վերջին տարիներին Հայաստանում ձեռնարկվել են մի շարք նախաձեռնություններ կանանց տնտեսական հզորացման ուղղությամբ: Սույն ծրագիրն այդ կարևոր նախաձեռնություններից մեկն է, որն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում ՀՀ հետևյալ մարզերին՝ *Սյունիք, Վայոց Ձոր, Տավուշ, Լոռի և Շիրակ*: Այստեղ իրականացվել են ֆոկլուս խմբային քննարկումներ և համայնքային հանդիպում-աշխատարաններ՝ բացահայտելու կանանց տնտեսական ակտիվության հիմնական խոչընդոտներն ու հնարավորությունները:

Այս գործընթացները հնարավորություն են տվել ոչ միայն հավաքելու համայնքներից ձայներ, կարծիքներ ու առաջարկություններ, այլև դրանք համադրել ազգային գենդերային ռազմավարության և միջազգային առաջնահերթությունների հետ՝ ձևավորելով համապարփակ և իրատեսական լուծումներ տնտեսական զարգացման համատեքստում:

*Տեղայնացման կարևորությունը.* կանանց տնտեսական հզորացման քաղաքականությունների արդյունավետության համար վճռորոշ է դրանց տեղայնացումն ու համատեքստայնացումը: Այս մոտեցումը ոչ միայն բարձրացնում է առաջարկությունների իրագործելիությունը, այլև ապահովում է շահառուների և համայնքների իրական ներգրավվածությունը՝ դարձնելով քաղաքականությունն ավելի ներառական և կենսունակ: Հատուկ ուշադրություն ենք դարձրել մարզային առանձնահատկություններին. որոշ մարզերում դրանք ակնհայտ են եղել, իսկ այլ դեպքերում դիտարկվել են որպես համանման խնդիրներ, որոնք օրինաչափորեն կրկնվում են բոլոր մարզերում՝ փաստելով վերջիններիս համակարգային բնույթը:

*Գործընկերային ջանքեր, միջազգային փորձ ու համադրություն.* կանանց տնտեսական հզորացման հարցը չի սահմանափակվում միայն Հայաստանի ներքին օրակարգով. այն նաև միջազգային համագործակցության կարևոր ուղղություն է: ԵՄ-ի և այլ գործընկերների ներգրավմամբ իրականացվող ծրագրերը հնարավորություն են տալիս համադրել հայկական իրականությունը եվրոպական փորձի հետ՝ ձևավորելով քաղաքական առաջարկություններ, որոնք միաժամանակ տեղայնացված են և համահունչ միջազգային ռազմավարական առաջնահերթություններին: Սա ապահովում է կապը թե՛ ազգային, թե՛ տարածաշրջանային, և թե՛ գլոբալ զարգացումների հետ: Այս համատեքստում կարևոր է նաև ՎԻՆՆԵԹ Գորիսի և նրա ռազմավարական գործընկեր ՎԻՆՆԵԹ Շվեդիայի փորձի համադրման շարունակականությունը՝ այն դիտարկելով որպես կայուն զարգացման ամուր հիմք ու գրավական:

## ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

*Մեթոդաբանական դիտարկումներ.* Ծրագրի իրականացման մեթոդաբանությունը կառուցված է հստակ փուլային տրամաբանության վրա՝ ապահովելով թե՛ ռազմավարական պլանավորում, թե՛ դաշտային ներգրավվածություն և թե՛ քաղաքական առաջարկությունների ձևավորում:

### 1. Պլանավորում և նախապատրաստական աշխատանքներ

- Նախագծի մեկնարկին կազմակերպվել են համատեղ պլանավորման հանդիպումներ «ՎԻՆՆԵԹ Գորիս» զարգացման հիմնադրամի, «ՎԻՆՆԵԹ Շվեդիա» ՀԿ-ի և ՕքսեՋեն հիմնադրամի թիմերի հետ՝ նպատակ ունենալով հստակեցնել առաջնահերթությունները, սահմանել մեթոդաբանական մոտեցումները և ողջ գործընթացի շրջանակը:
- Կատարվել է իրավիճակի ուսումնասիրություն՝ առկա/երկրորդային տվյալների նախնական ուսումնասիրություն՝ աշխատաշուկայի կարիքների և կանանց տնտեսական հզորացման բացերի վերաբերյալ: Այս նախնական վերլուծությունը ծառայել է որպես հիմք՝ մշակելու քննարկումների հարցաշարի ուղղվածությունը և հետագա քաղաքական փաստաթղթի կառուցվածքը:

### 2. Մարզային քննարկումներ և մասնակցային մեթոդներ

- Ծրագիրը ներառել է ՀՀ հինգ մարզում (*Սյունիք, Վայոց Ձոր, Շիրակ, Լոռի, Տավուշ*) անցկացվող այցեր և մասնակցային ձևաչափի հանդիպումներ, քննարկումներ և աշխատարաններ:
- Մասնակցությունը կազմակերպվել է լայն շրջանակի շահառուների ներգրավմամբ՝ կանայք, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, կրթական հաստատություններ, տեղական բիզնեսներ, բիզնես խորհրդատուներ, մարզպետարաններ և ՏԻՄ ներկայացուցիչներ (տե՛ս Հավելված 1):
- Դաշտային տվյալները հավաքվել են քննարկումների և փորձի փոխանակման, ինչպես նաև դիտակետերի և տեսլականների ներկայացման միջոցով, որոնք ներառել են ֆոկլուս խմբային և համայնքային հանդիպումների ձևաչափի քննարկումներ: Սա հնարավորություն է տվել առաջարկությունները ձևավորել իրական համայնքային խնդիրների և կարիքների հիման վրա:

**Քննարկումների նպատակն** է եղել նպաստել կանանց տնտեսական հզորացման օրակարգի ձևավորմանը՝ հիմնվելով մարզերում առկա իրողությունների և համայնքային փորձի վրա:

Դրանք միտված են եղել.

- *բացահայտելու կանանց տնտեսական հզորացման հիմնական խոչընդոտներն ու հնարավորությունները՝ հաշվի առնելով յուրաքանչյուր մարզի տեղական առանձնահատկությունները,*
- *քննարկելու քաղաքականության բարելավման և զարգացման հնարավոր ուղղությունները,*
- *հավաքելու առաջարկություններ, որոնք կներառվեն սույն հետազոտության զեկույցի, ինչպես նաև «Կանանց տնտեսական հզորացման օրակարգի քաղաքականության համառոտագրի» մեջ և կներկայացվեն թե՛ մարզային, թե՛ ազգային կառույցներին,*
- *խթանելու համագործակցության նոր հնարավորություններ պետական և ոչ պետական կառույցների, շահակիցների, շահառուների, ինչպես նաև մասնավոր սեկտորի և փորձագիտական համայնքի միջև:*

**3. Տվյալների վերլուծություն, հետազոտական զեկույցի և քաղաքականության համառոտագրի մշակում**

- Հավաքագրված դաշտային տվյալները վերլուծվել են՝ առանձնացնելով հիմնական մարտահրավերները և հնարավոր լուծումները:
- Վերլուծության հիման վրա մշակվել է կանանց տնտեսական հզորացման վերաբերյալ քաղաքականության հետազոտական զեկույց և համառոտագիր:

Այս մոտեցումը ապահովել է գործընթացի ամբողջականությունը՝ սկսած նախնական տվյալների ուսումնասիրությունից մինչև քաղաքական փաստաթղթի մշակման ավարտը և դրա ներկայացումը ազգային մակարդակում:

Սույն ուսումնասիրությունը հիմնված է որակական տվյալների հավաքագրման և վերլուծության վրա: Այն իրականացվել է Հայաստանի հինգ թիրախային մարզերում՝ շուրջ 190 մասնակիցների ներգրավմամբ: Տվյալները հավաքագրվել են համայնքային հանդիպումների և ֆոկլուս խմբային քննարկումների միջոցով՝ ապահովելով բազմակողմանի դիտարկումներ և կարծիքներ:

Սույն փաստաթղթի հիմնական առաջարկությունները կներկայացվեն «*Կանանց խորհրդարան*» ազգային միջոցառմանը, որը կձառայի որպես հարթակ մարզային աշխատարանների արդյունքները ներկայացնելու և քաղաքական առաջարկությունները քննարկելու համար՝ որոշում կայացնողների և շահակից խմբերի մասնակցությամբ:

*Հարցաշարի մշակման և կիրառման մեթոդաբանական հիմքեր.* հարցաշարի կառուցվածքն ու կիրառման մոտեցումները մշակվել են այնպես, որ ապահովեն համակարգված և ներառական տվյալների հավաքագրում: Այն կառուցված է փուլային տրամաբանությամբ. սկզբում ներկայացվում է ընդհանուր համատեքստը, ապա բացահայտվում են խոչընդոտներն ու հնարավորությունները, քննարկվում են լուծումների ուղիները և ՏԻՄ-երի դերը, իսկ ավարտին վերլուծվում են տեղային առանձնահատկությունները: Այս

կառուցվածքը հնարավորություն է տվել ոչ միայն նպատակային հավաքագրել տեղեկատվությունը, այլև ստեղծել հստակ հիմք դրանց հետագա վերլուծության համար:

Մեթոդաբանական մոտեցման կարևոր տարրերից է եղել նաև զգայույ և խոցելի խմբերի առանձնացված դիտարկումը: Հարցաշարի հատուկ հարցերը միտված էին բացահայտելու նրանց կարիքները, ինչը հնարավորություն է տվել մշակել ավելի ներառական և հավասարության վրա հիմնված քաղաքական առաջարկություններ:

Հարցաշարի միջոցով հատուկ ուշադրություն է դարձվել ՏԻՄ-երի դերին. ներառված հարցերը ուղղակիորեն կապել են համայնքային մակարդակի քաղաքականությունն ու կանանց տնտեսական հզորացման օրակարգը: Սա հնարավորություն է տվել, որ քննարկումները լինեն ոչ միայն տեսական, այլև գործնական՝ առնչվելով տեղական ինքնակառավարման մարմինների իրական գործունեությանը

Մարզերին վերաբերող հարցերը հավելյալ արժեք են ստեղծել ուսումնասիրության և առաջարկությունների համար՝ հնարավորություն տալով որոշ դեպքերում բացահայտել ծրագրի թիրախային մարզերի առանձնահատկությունները:

Հարցաշարի եզրափակիչ բաց հարցը հնարավորություն է տալիս մասնակիցներին բարձրաձայնել այն խնդիրները կամ դիտարկումները, որոնք չեն ներառվել նախապես ձևավորված կառուցվածքում:

**Այսպիսով, հարցաշարի մեթոդաբանական մոտեցումը միաժամանակ ապահովել է կառուցվածքային հստակություն, թեմատիկ ամբողջականություն և ներառականություն՝ այն դարձնելով արդյունավետ գործիք կանանց տնտեսական հզորացման խնդիրների ուսումնասիրության և քաղաքական առաջարկությունների մշակման համար:**

Հարցաշարի ամբողջական տարբերակին ծանոթանալու համար տե՛ս Հավելված 2-ը (ա, բ):

Քննարկումներից առաջ մշակվել է *մեթոդաբանական ուղեցույց*, որն ապահովել է գործընթացի կազմակերպվածությունն ու կառուցվածքային մոտեցումը: Ուղեցույցում հստակ սահմանվել են քննարկումների նպատակները, մասնակիցների կազմը և բազմապրոֆիլ ներգրավվածությունը, ժամանակային բաշխվածքը և աշխատանքային փուլերը: Այն նախատեսել է խմբային աշխատանքի մեխանիզմներ՝ ներառյալ խոչընդոտների ու հնարավորությունների վերլուծությունը, տեղային առանձնահատկությունների բացահայտումը, ՏԻՄ-երի դերի գնահատումը և քաղաքական առաջարկությունների ձևավորումը: Այս մոտեցումը ոչ միայն նպաստել է տվյալների համակարգված հավաքագրմանը, այլև ապահովել է տարբեր շահառուների ակտիվ ներգրավվածությունը, ինչը բարձրացրել է արդյունքների և առաջարկությունների ամբողջականությունը (տե՛ս Հավելված 3):

Ֆոկուս խմբային քննարկումների նախապատրաստական փուլում մշակվել է տեղեկատվական և տեղեկացված համաձայնության թերթիկ՝ հիմնված էթիկական

չափանիշների վրա: Մասնակիցներին նախապես ներկայացվել է ամբողջական տեղեկատվություն քննարկումների նպատակների, ձևաչափի, տվյալների օգտագործման և գաղտնիության ապահովման մասին: Նրանց մասնակցությունը հաստատվել է միայն ծանոթանալուց և ստորագրությամբ համաձայնություն տալուց հետո: Այս մոտեցումը ապահովել է կամավոր մասնակցություն, պաշտպանել է մասնակիցների իրավունքներն ու գաղտնիությունը, ինչպես նաև բարձրացրել հավաքագրված տվյալների վստահելիությունն ու մեթոդաբանական արժանահավատությունը (տե՛ս Հավելված 4):

Փոկուս խմբային քննարկումների արդյունավետ կազմակերպման համար մշակվել է մեթոդաբանական ուղեցույց (տե՛ս Հավելված 5): Այն հստակ սահմանել է քննարկումների կառուցվածքը, ժամանակային բաշխվածքը, մասնակիցների ընտրության և խմբերի ձևավորման սկզբունքները: Ուղեցույցը ծառայել է որպես գործնական և մեթոդաբանական հիմք՝ ապահովելով գործընթացի համահունչ իրականացումն ու արդյունքների համադրելիությունը:

*Հետազոտության սահմանափակումներ.* չնայած իրականացված ուսումնասիրության համապարփակ ծավալին և կիրառված բազմակողմանի մեթոդաբանական մոտեցումներին, որոշ սահմանափակումներ առկա էին: Դրանցից հիմնականն էր վիճակագրական տվյալների սահմանափակ հասանելիությունը կամ բացակայությունը, որը որոշ դեպքերում բարդացնում էր համեմատական վերլուծությունը: Հատկապես զգալի էր թեմատիկ և ոլորտային մեկնարկային տվյալների բացակայությունը, որոնք կարևոր էին ինչպես հետազոտության ամբողջականության ապահովման, այնպես էլ ինդիկատորների ձևավորման համար: Այս բացը լրացնելու նպատակով կիրառվել է այլընտրանքային մոտեցում. առաջարկվող գործողությունների համար մշակվել են ինդիկատորներ, որոնք ձևավորվել են ոլորտային մեկնարկային բազային պահանջների հիման վրա և համադրվել տեղական ու միջազգային քաղաքականությունների համատեքստում: Դրանք կարող են հետագա ուսումնասիրություններում որոշ չափով փոխարինել և ստանձնել մեկնարկային տվյալների գործառույթ:

Այնուամենայնիվ, էական ռիսկեր, որոնք կարող էին վտանգել հետազոտության ամբողջականությունը կամ արդյունքների վավերականությունը, չեն գրանցվել: Վերոնշյալ սահմանափակումները չեն խոչընդոտել ուսումնասիրության հիմնական նպատակների իրականացմանը:

## ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՇՐՋԱՆԱԿ – ՀԱՅԱՍՏԱՆ

Վերջին տարիներին Հայաստանը որոշակի առաջընթաց է գրանցել գենդերային հավասարության ոլորտում, հատկապես՝ աշխատաշուկայում կանանց ներգրավվածության մասով: Այսպես, եթե 2021 թվականին Հայաստանը *Գենդերային անհավասարության գործադ ինդեքսում*<sup>1</sup> (անգլ.՝ *WEF Global Gender Gap Index*) զբաղեցնում էր 114-րդ տեղը, ապա 2023 թվականին արդեն բարձրացել էր մինչև 61-րդ տեղը<sup>2</sup>, զգալի առաջընթաց գրանցելով հատկապես տնտեսական մասնակցության ենթահինդեքսում (52-րդ տեղ<sup>3</sup>):

Այս ամենին զուգահեռ, այնուամենայնիվ, շարունակում են առկա մնալ խորքային և համակարգային խնդիրներ, այդ թվում՝ *կանանց աշխատաշուկայի մասնակցության խնդիր*. Կանայք ամենաակտիվ տարիքում (25–34 տ.) ավելի հաճախ դուրս են մնում աշխատանքային շուկայից՝ հիմնականում տնային խնամք իրականացնելու պատճառով: 2022 թվականին այդ տարիքային խմբում աշխատաշուկայից դուրս գտնվողների 80-82%-ը կանայք են եղել: Սա հանգեցնում է նրան, որ կանայք ավելի քիչ մասնագիտական փորձ և հմտություններ են ձեռք բերում, կամ ունեցած հմտություններն ակտիվորեն և լիարժեք չկիրառելու դեպքում աստիճանաբար կորցնում, իսկ գործատուները չեն ցանկանում աշխատանքի ընդունել 40 տարեկանից բարձր տարիքի կանանց<sup>4</sup>:

Մյուս խնդիրը կրթության, գիտելիքի և հմտությունների խնդիրն է. երիտասարդ կանանց 38%-ը (15–29 տարիքային խումբ) ո՛չ սովորում են, ո՛չ աշխատում: Կանայք հիմնականում կենտրոնացած են հանրային ոլորտներում՝ կրթություն, առողջապահություն, սոցիալական ծառայություններ, որոնք ավելի ցածր եկամտաբեր ոլորտներ են, մինչդեռ մասնավոր և եկամտաբեր ոլորտներում նրանց ներգրավվածությունը շարունակում է սահմանափակ մնալ<sup>5</sup>:

Հաջորդ խնդիրը, *գենդերային վարձատրության տարբերությունն է* (նաև՝ բաց, խզվածք, ճեղքվածք, անջրպետ) շարունակում է բարձր մնալ. Հայաստանում տարիներ շարունակ վարձատրության սեռային խզվածքը շարունակում է 35%-ից բարձր լինել: Այս խզվածքը 2018 թվականից ի վեր աստիճանաբար խորացել է<sup>6</sup>:

<sup>1</sup> *Global Gender Gap Report* (2021). Հասանելի՝ [https://www3.weforum.org/docs/WEF\\_GGGR\\_2021.pdf](https://www3.weforum.org/docs/WEF_GGGR_2021.pdf) /14.09.2025/

<sup>2</sup> *Global Gender Gap Report* (2023). Հասանելի՝ [https://www3.weforum.org/docs/WEF\\_GGGR\\_2023.pdf](https://www3.weforum.org/docs/WEF_GGGR_2023.pdf) /14.09.2025/

<sup>3</sup> Ըստ 2024 թ-ի տվյալների ՀՀ 64-րդ տեղն է գրավում՝ ցուցանիշով 0.72, *Global Gender Gap Report* (2024).

Հասանելի՝ [https://www3.weforum.org/docs/WEF\\_GGGR\\_2024.pdf](https://www3.weforum.org/docs/WEF_GGGR_2024.pdf) /14.09.2025/,

2025թ-ին՝ զբաղեցնում է 59-րդ տեղը, *Global Gender Gap Report* (2025). Հասանելի՝

[https://reports.weforum.org/docs/WEF\\_GGGR\\_2025.pdf](https://reports.weforum.org/docs/WEF_GGGR_2025.pdf) /15.09.2025/

<sup>4</sup> ՀՀ *Գենդերային քաղաքականության իրականացման ռազմավարությունը*՝ 2025-2028 թթ.: Հասանելի՝ <https://www.e-gov.am/u/files/file/decrees/kar/GVDE-DCF5-5E9E-F31C/482.1.pdf> /20.09.2025/: ԱՐՄՍՍՍ 2020, 2022, 2023 թ.: ՀՀ «Զբաղվածության 2025-2031 ռազմավարական ծրագրի»:

<sup>5</sup> Տե՛ս նախորդ հղումը:

<sup>6</sup> Տե՛ս նախորդ հղումը:

Կանանց և տղամարդկանց զբաղվածության մակարդակներում կա շարունակական տարբերություն՝ տարբեր տարիներ կտրվածքով: 2022թ. 15-74 տարեկան կանանց զբաղվածության մակարդակը եղել է 41%, մինչդեռ տղամարդկանցը՝ 62%: հատկապես 25-34 տարեկան կանայք խիստ խոցելի են՝ ընտանեկան պարտականությունների ծանրաբեռնվածության պատճառով: Այս տարիքային խմբում խզվածքը կազմում է 41%: Այս տվյալները ևս վկայում են, որ տնտեսական հզորացման մոտեցումը պետք է ներառի ոչ միայն ձեռնարկատիրության խթանում, այլև զբաղվածության ոլորտում թիրախային միջոցառումներ՝ աշխատանք-կյանք-ընտանիք հավասարակշռություն ապահովելու համար<sup>7</sup>:

Խնդիրների շարքում առանձնահատուկ պետք է նշել *գործարարության և ղեկավար պաշտոններ զբաղեցնելու (իսկ ավելի ճիշտ՝ չզբաղեցնելու) խնդիրը*: գործատուների և ինքնազբաղվածների մեծամասնությունը տղամարդիկ են (64%), մինչդեռ առանց վարձատրության աշխատողների մեջ կանայք կրկնակի անգամ գերազանցում են տղամարդկանց (67%): Այն ներառում է նաև գյուղատնտեսական ոլորտում գործունեությունը, որտեղ կանայք ավելի հաճախ ներգրավված են ավանդական, ցածր արտադրողական գյուղատնտեսական գործունեության մեջ<sup>8</sup>:

Կանանց բիզնեսները հիմնականում փոքր են և ֆինանսական ռեսուրսների սահմանափակ հասանելիության պատճառով ավելի խոցելի և ոչ կայուն հիմքերով զարգացող կամ դժվարությամբ զարգացող:

Կանանց և աղջիկների զգայուն և խոցելի խմբերը՝ ներառյալ հաշմանդամություն ունեցողները, փախստական կանայք և աղջիկները, տեղահանված կանայք և աղջիկները, եզրիական համայնքի երիտասարդ կանայք և աղջիկները, շարունակում են ունենալ սահմանափակ հասանելիություն կրթության, աշխատանքի և առողջապահական ծառայությունների: Այս ամենն ուղղակիորեն և անուղղակիորեն ազդում է կանանց տնտեսական հզորացման վրա:

Այսպիսով, թեև կարող ենք փաստել, որ վերջին տարիներին Հայաստանի դիրքերը միջազգային ինդեքսներում նկատելիորեն բարելավվել են, կանանց տնտեսական հզորացման և գենդերային հավասարության ոլորտում շարունակում են առկա լինել խորքային և համակարգային խնդիրներ ու մարտահրավերներ:

ՀՀ համար ռազմավարական նշանակության ունեն *ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով կոմիտեի (Կոմիտե)* կողմից ՀՀ-ին տրված դիտարկումներն ու հանձնարարականները՝ ներառյալ տնտեսական հարցերի և խնդիրներ վերաբերյալ: Այսպես, 2022 թվականին Կոմիտեն Հայաստանի յոթերորդ պարբերական գեկույցի վերաբերյալ իր եզրափակիչ դիտարկումներում նշել է, որ Հայաստանի

<sup>7</sup> *Գենդերային քաղաքականության իրականացման ռազմավարությունը» 2025-2028 թթ.:*

<sup>8</sup> *Հայաստանի գյուղատնտեսության արդիականացում և առևտրայնացում. ոլորտի բարելավոյությունների և ներդրումների գերակայությունների սինթեզման գեկույց (2017):* Հասանելի՝

<https://documents1.worldbank.org/curated/en/619011497437361947/pdf/106933-ARMENIAN-PUBLIC-Synthesis-Final-%20Arm-June4-EDIT-M-final-06-12-17.pdf> /10.09.2025/

տնտեսության մեջ շարունակում են առկա մնալ գենդերային անհավասարություններ, որոնք սահմանափակում են կանանց տնտեսական հզորացումը և սոցիալական լիարժեք ներառումը<sup>9</sup>:

Կոմիտեն նաև հատուկ ընդգծել է գյուղաբնակ կանանց խոցելիությունը՝ նշելով, որ գյուղական կանանց 82%-ը ներգրավված է չվարձատրվող կամ ոչ ֆորմալ աշխատանքում, կանանց կողմից ղեկավարվող գյուղական տնտեսությունների մեկ շնչին բաժին ընկնող եկամուտը գրեթե կրկնակի ցածր է տղամարդկանց կողմից ղեկավարվող տնտեսությունների համեմատ գյուղատնտեսության և գյուղական զարգացման քաղաքականությունները հիմնականում գենդերային չեզոք են և չեն արտացոլում կանանց կարիքներն ու փորձառությունները:

*Հայաստան-Եվրոպական Միություն համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրն* (ՀԸԳՀ) ամրապնդում է Հայաստանի պարտավորությունը զարգացնել գործող, շուկայական ակտիվ տնտեսություն՝ լավարկելով և աստիճանաբար մոտարկելով տնտեսական և ֆինանսական քաղաքականությունները ԵՄ չափանիշներին: Պայմանագիրը, ի թիվս այլ կարևոր ուղղությունների, նախատեսում է մակրոտնտեսական կայունության ապահովում, պետական ֆինանսների արդյունավետ կառավարում, միջազգային չափանիշներին համարժեք վիճակագրական համակարգի զարգացում՝ տնտեսական որոշումների կայացման համար անհրաժեշտ տվյալների ապահովմամբ/:

ՀԸԳՀ-ն նաև ընդգծում է ՓՄՁ-ների և ձեռնարկատիրության զարգացման կարևորությունը՝ շեշտադրելով կանանց և երիտասարդների ներառումը<sup>10</sup>: Այն քաջալերում է և նախատեսում է ռազմավարությունների մշակում ու կիրառում՝ հիմնված “Small Business Act for Europe”-ի սկզբունքների վրա, ֆինանսական միջոցների և նորարարության խթանում և հասանելիություն, կանոնակարգային դաշտի պարզեցում և բարելավում, բիզնես միջավայրի բարելավում և ներդրումային հնարավորությունների ընդլայնում: Այս ամենը կարևոր հիմք է Հայաստանում կանանց ձեռնարկատիրության ամրապնդման համար, քանի որ ֆինանսական ռեսուրսների հասանելիությունը և կանոնակարգային պարզեցումները նվազեցնում են կանանց բիզնեսի խոչընդոտները կամ առնվազն խրախուսում են կանանց մուտքը<sup>11</sup>:

ՀԸԳՀ-ի 15-րդ գլուխը (“*Employment, Social Policy and Equal Opportunities*”) առանձնահատուկ կարևորություն է տալիս գենդերային հավասարությանը, մասնավորապես՝ անդրադառնալով զբաղվածության քաղաքականությանը ներառականությանը, ոչ ֆորմալ զբաղվածության կրճատմանն ու սոցիալական պաշտպանվածության բարձրացմանը, խոցելի խմբերի ինտեգրմանը՝ ներառյալ կանանց, հաշմանդամություն ունեցող անձանց և ազգային փոքրամասնություններին, կանանց և

<sup>9</sup> Կանանց նկատմամբ խորականության վերացման հարցերով կոմիտե Հայաստանի յոթերորդ պարբերական գեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ (2022). CEDAW/C/ARM/CO/7

<sup>10</sup> Հայաստան-Եվրոպական Միություն համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրն (2017). Հասանելի՝ [https://www.mfa.am/filemanager/eu/CEPA\\_ARM\\_1.pdf](https://www.mfa.am/filemanager/eu/CEPA_ARM_1.pdf) /01.09.2025/

<sup>11</sup> Տե՛ս նախորդ հոդումը:

տղամարդկանց հավասար հնարավորությունների ապահովմանն ու խտրականության վերացմանն աշխատաշուկայում:

Վերոնշյալ դիտարկումներն ու դրույթները պարտավորեցնում են Հայաստանին վարել համապարփակ քաղաքականություն, որն ուղղված կլինի գենդերային հավասարությանը աշխատաշուկայում և սոցիալական ներառմանը:

Պայմանագիրը նաև շեշտում է քաղաքացիական հասարակության և գործընկերների ներգրավվածությունը քաղաքականությունների մշակման և իրականացման մեջ: Սա հնարավորություն է ստեղծում կանանց հարցերով և շահապաշտպանությամբ զբաղվող ՀԿ-ներին և նախաձեռնություններին ակտիվորեն ներգրավել պետական քաղաքականության մշակման և մշտադիտարկման գործընթացներում: Այսպիսով, ՀԸԳՀ-ն ոչ միայն արտաքին գործընկերության գործիք է, այլև ներքին բարեփոխումների շրջանակ, որի դրույթների իրագործումը կարող է էականորեն նպաստել կանանց տնտեսական հզորացմանը Հայաստանում:

2025 թվականին ՀՀ կառավարությունը հաստատել է ՀՀ «Գենդերային քաղաքականության իրականացման ռազմավարությունը» 2025-2028 թթ.-ի համար<sup>12</sup>: Ռազմավարության գերակայություններից մեկը՝ Գերակայություն 2-ը (*Սոցիալ-տնտեսական բնագավառում՝ աշխատաշուկայում, տնտեսության տարբեր ճյուղերում, աշխատանքային գործունեության մեջ գենդերազգայուն մոտեցումների խրախուսում, աշխատուժի գենդերային խզվածքի նվազում և աշխատանքային իրավունքների պաշտպանության մեխանիզմների բարելավում*), ուղղակիորեն վերաբերում է տնտեսական և սոցիալական ոլորտին: Այն, մասնավորապես, անդրադառնում է աշխատաշուկայում գենդերազգայուն մոտեցումների խրախուսման, աշխատուժի սեռային խզվածքի նվազեցման և կանանց սոցիալ-տնտեսական ակտիվության և կայունության բարձրացման խնդիրներին և հարցերին՝ սահմանելով թիրախային և համալիր միջոցառումների ծրագիր:

ՄԱԿ Կանանց հարցերով ՀՀ գրասենյակի կողմից իրականացված գնահատումը ևս ցույց է տալիս, որ նախորդ տարիներին, մասնավորապես՝ Գենդերային ռազմավարության իրականացման 2019-2023 թթ.-ի շրջափուլում, որոշակի հաջողություններ անժխտելիորեն գրանցվել են, սակայն մնացել են համակարգային բացեր: Այսպես, կանանց ձեռնարկատիրությունը զարգացել է, սակայն շարունակում է մնալ հիմնականում ցածր եկամտաբեր ոլորտներում, սոցիալական պաշտպանության համակարգը բավարար չափով չի անդրադառնում աղքատության ֆեմինիզացիայի խնդրին, բյուջետավորման և ծախսերի հաշվարկման բաղադրիչները թերի են եղել, ինչի հետևանքով տնտեսական հզորացման ծրագրերի իրականացման արդյունավետությունը սահմանափակ կամ հատվածային բնույթ է կրում<sup>13</sup>:

<sup>12</sup> ՀՀ Գենդերային քաղաքականության իրականացման ռազմավարությունը» 2025-2028 թթ.: Հասանելի՝ [https://www.e-gov.am/u\\_files/file/decrees/kar/GVDE-DCF5-5E9E-F31C/482.1.pdf](https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/GVDE-DCF5-5E9E-F31C/482.1.pdf) /14.09.2025/

<sup>13</sup> Տե՛ս նախորդ հղումը:

ՀՀ «Զբաղվածության 2025-2031 ռազմավարական ծրագրի» (Ծրագիր) մեջ ներկայացված է հետևյալ պատկերը. 2022թ. ՀՀ զբաղվածների կազմում 46,2% է, իսկ աշխատանքային ռեսուրսների կազմում՝ 54.6%, սակայն զբաղվածության մակարդակը կանանց մոտ 38.4% է, մինչդեռ տղամարդկանց մոտ՝ 53.8%: Կանանց ներգրավվածության ամենացածր ցուցանիշները դիտվում են 30-39 տարեկան կանանց մոտ, որոնք հիմնականում դուրս են մնում աշխատաշուկայից ընտանեկան պարտականությունների պատճառով:

Տնային տնտեսությամբ զբաղվողների 99.2%-ը կանայք են, որոնցից մեկ երրորդը 26-35 տարեկան է: Սա վկայում է չվնարվող խնամքի աշխատանքի բեռի անհամաչափությունը:

Չսովորող, չաշխատող 169.5 հզ. երիտասարդներից 59.9 հզ-ը (35.3%) գործազուրկ է, իսկ 109.6 հզ-ը (64.7%) աշխատուժից դուրս: Կանանց 58.0%-ը, իսկ տղամարդկանց 31.3%-ը 25-29 տարեկան աշխատանքային ռեսուրսների թվում չի աշխատել և չի սովորել՝ 2020 թվականի դրությամբ<sup>14</sup>: Ավելին, 25-29 տարեկան բարձրագույն կրթություն ունեցող աշխատանքային ռեսուրսների թվում չէր աշխատում և չէր սովորում կանանց 44.1%-ը, իսկ տղամարդկանց՝ 22.5%-ը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գործնականում բոլոր տարիքային խմբերում երիտասարդ կանանց չսովորելու, չաշխատելու հավանականությունն ավելի բարձր է, իսկ սեռային տարբերությունը տարիքին գուզընթաց ընդլայնվում է:

Ինչ վերաբերում է գործազրկությունը, ապա պետք է նկատել, որ ընդհանուր գործազրկությունը 2020-2022թթ. նվազել է, սակայն կանանց շրջանում այն նվազել է ավելի դանդաղ տեմպերով, քան տղամարդկանց մոտ<sup>15</sup>: Մինչդեռ գործազուրկների 36%-ը բարձրագույն կրթություն ունեցող կանայք են<sup>16</sup>, ինչը վկայում է կրթության և աշխատաշուկայի միջև անհամապատասխանության մասին: Հարկ է նաև նշել, որ գործազրկության մակարդակը երկրի միջինից (18.1%) բարձր է եղել տարիքային բաշխմամբ՝ մինչև 35 տարեկան անձանց շրջանում, իսկ տարածքային բաշխմամբ՝ Երևանում և հետևյալ չորս մարզում՝ Տավուշ, Լոռի, Կոտայք և Վայոց ձոր<sup>17</sup>: Այդ թվում՝ երկարատև գործազրկության մակարդակը (ԵԳՄ) հատկապես բարձր է կանանց շրջանում՝ կազմելով իզական սեռի գործազուրկ բնակչության 53.7%-ը, մինչդեռ տղամարդկանց դեպքում ԵԳՄ-ն կազմել է 46.7%<sup>18</sup>:

ՀՀ «Զբաղվածության 2025-2031 ռազմավարական ծրագրի»-ն ռազմավարության շրջանակում առանձնացնում է նաև թիրախային խմբեր, որոնց զբաղվածության խնդիրները առավել սուր է գնահատվում: Այդ խմբերի մեջ են մարզերում ապրող բնակչությունը, չսովորող, չաշխատող երիտասարդները, 30-39 տարեկան կանայք,

<sup>14</sup> ԱՐՄՍՏԱՏ 2020 թ.: ՀՀ «Զբաղվածության 2025-2031 ռազմավարական ծրագրի»:

<sup>15</sup> ՀՀ «Զբաղվածության 2025-2031 ռազմավարական ծրագրի»:

<sup>16</sup> 2020 թվականին գործազուրկների շուրջ 28%-ն ունեցել է բարձրագույն կրթություն (կանանց՝ 36%-ը, տղամարդկանց՝ 23%-ը). ԱՐՄՍՏԱՏ 2022 թ.:

<sup>17</sup> ԱՐՄՍՏԱՏ 2022 թ.:

<sup>18</sup> ԱՐՄՍՏԱՏ 2023 թ.:

նպաստառու ընտանիքների աշխատունակ շահառուները: Թեև Ծրագիրը վերոնշյալ մյուս երեք խմբերի մեջ չի առանձնացնում կանանց, այնուամենայնիվ, կանայք անժխտելիորեն շարունակում են՝ որպես առանձին խումբ ավելի խոցելի կարգավիճակում գտնվել այդ թիրախային խմբերի ներսում ևս:

Ծրագրի ռազմավարական նպատակ 3-ն ամբողջությամբ ամրագրում է կանանց ներուժի զարգացմանն ու իրացման միտված ուղղություններ: Այսպես, նախատեսվում է, որ 2031 թվականին զբաղված կանանց մասնաբաժինը << կին 15-74 տարեկան աշխատանքային ռեսուրսների նկատմամբ կհասնի 50.9%-ի (2022 թվականի 41.5%-ի փոխարեն), միջին տարիքի կանանց համար իրականացվելու են թիրախային ձեռնարկատիրական և զբաղվածության ծրագրեր՝ նրանց ներուժի ամբողջական իրացման նպատակով, ապահովվելու է կին ձեռներեցների համար բիզնեսի զարգացման (ինկուբացիոն, սքեյլերացիոն) ծրագրերի և ֆինանսավորմանն ու այլ անհրաժեշտ ռեսուրսների հասանելիության ընդլայնում, ներդրվել ու են սուբսիդավորվող աշխատանքին նպաստող մեխանիզմներ միջին տարիքի (30-40) կանանց համար (աշխատավարձի մասնակի փոխհատուցում և/կամ եկամտահարկի վերադարձ), ինչպես նաև ապահովվելու է աշխատող կանանց ոչ ֆորմալ մասնագիտական կրթությունն ստանալու խրախուսում:

Այսպիսով, Ծրագիրը սահմանում և ամփոփում է հետևյալ պատկերը. <<-ում կանայք շարունակում են մնալ թերզբաղված՝ հատկապես 30-39 տարեկան տարիքային խմբում, չվճարվող խնամքի աշխատանքի բեռը խոչընդոտում է կանանց ներգրավվածությանը, նույնիսկ բարձրագույն կրթությունն ունեցող կանայք հաճախ դուրս են մնում աշխատաշուկայից:

Այսպիսով, Հայաստանում կանանց տնտեսական հզորացումն ընկալվում է որպես պետական գերակայություն՝ որպես համակարգային ուղղություն, որն ամրագրված է << միջազգային պարտավորություններով (ՄԱԿ կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով կոմիտե, Պեկինի հռչակագիր, ԿՉՆ-եր), ինչպես նաև տեղական քաղաքականություններում և փաստաթղթերում: Մինևնույն ժամանակ, ակնհայտ է, որ առկա է զգալի ճեղքվածք նորմատիվ հանձնառությունների և փաստացի իրավիճակի միջև: Վիճակագրությունը ևս փաստում է սեռային լուրջ խզվածքների մասին՝ աշխատավարձերի անհավասարություն, կանանց զբաղվածության ցածր մակարդակ և աշխատանք-կյանք-ընտանիք անհավասարակշռություն: Չնայած վերջին տարիների ջանքերին և որոշակի արդյունքներին, խնդիրները հաղթահարելու համար, այդ թվում՝ լայնամասշտաբ, կայուն և թիրախային արդյունքներ գրանցելու համար, անհրաժեշտ է կանանց տնտեսական հզորացմանը միտված համապարփակ, բազմաշերտ, համակարգային և ռազմավարական մոտեցումների և պրակտիկաների ընդունումն ու կիրառում, խնդիրների պարբերական քարտեզագրում՝ հաշվի առնելով համայնքի և շահառուների ձայները, ինչպես նաև մշտադիտարկմանն ու գնահատմանն ուղղությամբ արդյունքահեն աշխատանքներ:

**ԿԱՆԱՆՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՉՈՐԱՑՄԱՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐ**

Կանանց տնտեսական հզորացումը ինչպես ողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում կայուն և ներառական տնտեսական զարգացման կարևոր նախապայման է՝ ի շահ անհատի, համայնքի, հասարակության և պետության: Այն ենթադրում է *կանանց համար իրական հնարավորությունների ստեղծում՝ լիարժեք ներգրավվելու վճարովի աշխատանքի, ձեռնարկատիրության, կրթության, ֆինանսական ռեսուրսների և որոշում կայացնող գործընթացների մեջ՝ անկախ բնակության վայրից, սոցիալական կարգավիճակից կամ ընտանեկան դրությունից:*

Արժանապատիվ, կայուն և պաշտպանված աշխատանքը ոչ միայն նպաստում է կանանց անձնական և ընտանիքի բարեկեցությանը, այլև վերածում է նրանց համայնքային զարգացման կարևոր շարժիչ ուժի:

Զնայած վերջին տարիներին արձանագրված դրական զարգացումներին, Հայաստանում շարունակում են առկա լինել համակարգային բացեր, որոնք խոչընդոտում են կանանց տնտեսական լիարժեք մասնակցությանը և ներգրավվածությանը: Այս համատեքստում առաջնահերթ է ոչ միայն ազգային և պետական քաղաքականությունների ու միջազգային պարտավորությունների իրականացումը, այլև կանանց իրական ձայների պարբերական լսումն ու ներառումը: Անհրաժեշտ է հավաքագրել նրանց խնդիրները, պահանջները և ակնկալիքները՝ հիմնված անձնական փորձի, փորձառության և տեսականների վրա: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել նաև կանանց տարբեր խմբերին՝ երիտասարդներին, հաշմանդամություն ունեցողներին, ընտանեկան բռնության ենթարկվածներին, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին, գյուղաբնակներին, տեղահանվածներին, փախստականներին կամ փախստականի նման կարգավիճակ ունեցողներին, ինչպես նաև մյուս խոցելի և զգայուն խմբերին:

Այս մոտեցման վրա հիմնված՝ «ՎԻՆՆԵԹ Գորիս» զարգացման հիմնադրամը՝ ՕքսեՉեն հիմնադրամի և «ՎԻՆՆԵԹ Շվեդիայի» և այլ գործընկերներ հետ համատեղ<sup>19</sup> իրականացնում են «**ՀԱՎԱՍՏԱՐ - ԵՄ-ն հանուն կանանց իրավագործան Հայաստանում**» ծրագիրը, որի շրջանակներում իրականացվում է սույն ուսումնասիրությունը:

---

<sup>19</sup> «ՀԱՎԱՍՏԱՐ - ԵՄ-ն հանուն կանանց իրավագործան Հայաստանում» ծրագիրն իրականացվում է ԵՄ ֆինանսական օժանդակությամբ: Իրականացնող գործընկերներն են ՕքսեՉեն հիմնադրամը, «Եվրոպական գործընկերություն հանուն ժողովրդավարության» ՀԿ-ն, «Նիդերլանդների հեղափոխական կոմիտե» ՀԿ-ն, «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ն, «ՎԻՆՆԵԹ Գորիս» զարգացման հիմնադրամը՝ «Վիննեթ Շվեդիա» ՀԿ-ի հետ համագործակցությամբ: Ծրագիրը նպատակ ունի խթանել կանանց տնտեսական հզորացմանը և նպաստել իրավունքների ընդլայնմանը Հայաստանում:

Սույն քաղաքականության հետազոտությունը հիմնված է մարզերում անցկացված հինգ ֆոկլուս խմբային քննարկումների, հինգ համայնքային հանդիպումների և մեկ փորձագիտական խորքային հարցազրույցի վրա: Դրանց ընթացքում վերհանվել են կանանց տնտեսական ակտիվության հիմնական խոչընդոտները և ուրվագծվել են հնարավոր լուծումների ուղիներ:

Մարզային քննարկումները կազմակերպվել են երկու հիմնական ուղղությամբ՝

1. *Կանանց տնտեսական հզորացման հիմնական ուղղությունները*
2. *Կանանց տնտեսական հզորացման հիմնարար սկզբունքները*

*Հիմնական ուղղությունների շրջանակում հիմնականում առանձնացվել են հետևյալ առանցքային ուղղությունները.*

- *արժանապատիվ և վճարովի աշխատանքի հասանելիության ապահովում արդար վարձատրությամբ ու սոցիալական երաշխիքներով,*
- *կանանց ձեռնարկատիրության խթանում՝ ֆինանսական ռեսուրսների, հմտությունների և ցանցերի միջոցով,*
- *ֆինանսական և թվային գրագիտության բարձրացում,*
- *աշխատանքի և խնամքի համադրելիության ապահովում՝ խնամքի ծառայությունների ընդլայնմամբ,*
- *ոչ ավանդական և բարձր վարձատրվող ոլորտներում կանանց ներգրավման խթանում,*
- *խոցելի խմբերի կանանց նպաստակային ընդգրկում:*

*Հիմնարար սկզբունքները, որոնք պետք է ընկած լինեն կանանց տնտեսական հզորացման քաղաքականությունների հիմքում, ներառում են՝*

- *հավասար հնարավորությունների և հավասար վարձատրության ապահովում,*
- *ներառականության սկզբունքի պահպանում՝ առանց խտրականության,*
- *ինստիտուցիոնալ և համայնքահեն աջակցություն,*
- *կանանց մասնակցության ապահովում քաղաքականությունների մշակման և իրականացման գործընթացում,*
- *տվյալների վրա հիմնված քաղաքականություն՝ գենդերային տարանջատմամբ վիճակագրության և հետազոտությունների միջոցով,*
- *աշխատանքային իրավունքների պաշտպանություն, հատկապես ոչ ֆորմալ և տնային պայմաններում աշխատող կանանց համար:*

Առանձնակի կարևորվել է *ՏԻՄ-երի դերը՝* որպես համայնքային կառույցներ, որոնք ամենամոտն են բնակիչների իրական կարիքներին: ՏԻՄ-երը կարող են և պետք է խաղան առանցքային դեր կանանց տնտեսական ներառման խթանման գործում՝ նպաստելով տեղական զբաղվածության քաղաքականությունների մշակմանը, վերապատրաստման և ձեռնարկատիրական ծրագրերի իրագործմանը, գործատուների և ԶՀԿ-ների հետ

համագործակցությանը, համայնքային ռեսուրսների նպատակային կիրառմանը և խնամքի ծառայությունների համայնքային ցանցի զարգացմանը:

Այս հիմնական ուղղություններն ու սկզբունքների քննարկումները հիմք են հանդիսացել բովանդակային քննարկումների և խնդիրների վերհանման համար:

Այս դիտարկումները փաստում են, որ կանանց տնտեսական հզորացումը պետք է դիտարկվի որպես համապարփակ և բազմաշերտ գործընթաց, որը պահանջում է պետական, տեղական, մասնավոր և միջազգային կառույցների համակարգված ու երկարաժամկետ ջանքեր: Միայն այս կերպ հնարավոր կլինի լիարժեքորեն իրականացնել կանանց տնտեսական ներուժը և ապահովել դրանից բխող համայնքային ու ազգային զարգացումը:

Ուսումնասիրությունն իրականացվել է և սույն զեկույցը մշակել է գենդերային և կանանց հարցերով ուսումնասիրությունների մասնագետ, գենդերային քաղաքականությունների մշակման փորձագետ *Անի Կոչոյանը*: Չեկույցի խմբագրերն են *Զրիստինե Մխիթարյանը (ՕքսեՉեն հիմնադրամ)* և *Աննա Ալեքսանյանը («ՎԻՆՆԵԹ Գորիս» զարգացման հիմնադրամ)*:

Ստորև ներկայացված բաժնում ամփոփված են առանձին խնդիրները՝ իրենց համակազմով և դրանց հնարավոր լուծումները: Ներկայացված արդյունքները համահունչ են Հայաստանի կողմից ստանձնած տեղական և միջազգային պարտավորություններին ու ռազմավարական առաջնահերթություններին և բխում են անհատի, հասարակության և պետության լավագույն շահերից: Վերհանված խնդիրները ներառում են ինչպես կանանց տնտեսական հզորացմանը ուղղակիորեն խոչընդոտող գործոններ, այնպես էլ անուղղակի, բայց բովանդակային առումով դրա հետ սերտորեն կապված հարցեր:

**ԽՆԳԻՐՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ  
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՓԱԹԵԹ**

**Խնդիր 1. Կարծրատիպերի սահմանափակող ազդեցությունը կանանց տնտեսական ակտիվության վրա**

**Խնդրի նկարագրություն.** ընտանեկան և համայնքային միջավայրում առկա կարծրատիպերը շարունակում են լուրջ խոչընդոտ հանդիսանալ կանանց տնտեսական ակտիվության և հզորացման հարցում: Այսպես են կարծում թիրախային մարզերում ֆոկլուս խմբային քննարկումների մասնակցած գրեթե բոլոր մասնակիցները: Որոշ ընտանիքներում պահպանվում է «իմ կինը չպիտի աշխատի» մոտեցումը՝ ըստ մասնակիցների, որն արդեն իսկ սահմանափակում է կանանց աշխատաշուկայում ներգրավվածությունը: Միևնույն ժամանակ համայնքներում տարածված են պատկերացումներ, որ կնոջ համար անվտանգ կամ ընդունելի չէ մեկ այլ բնակավայր տեղափոխվել աշխատանքի կամ կրթություն ստանալու նպատակով: Այս կարծրատիպերը ոչ միայն կրճատում են կանանց կրթական և մասնագիտական հնարավորությունները, այլև խորացնում են նրանց տնտեսական կախվածությունը ընտանիքի մյուս անդամներից: Արդյունքում, կարծրատիպերը խոչընդոտում են կանանց տնտեսական ներուժի լիարժեք իրացմանը, սահմանափակում նրանց մասնագիտական ընտրության ազատությունը և նվազեցնում մասնակցությունը երկրի տնտեսական զարգացման գործընթացներին:

Մասնակիցների դիտարկմամբ, որոշ մարզերում, մասնավորապես՝ Ծիրակում, պահպանողական մշակութային միջավայրը և ընտանիքի դերի շուրջ ձևավորված կարծրատիպերը առավել ընդգծված են: Այս հանգամանքը կանանց և աղջիկների վրա թողնում է անմիջական և ավելի խորը ազդեցություն՝ սահմանափակելով նրանց ընտրության հնարավորությունները և տնտեսական ակտիվությունը:

---

**Խնդիրների շրջանակ**

- 1. Կարծրատիպեր ընտանիքում.** որոշ ընտանիքներում պահպանվում է մոտեցումը, որ «կինը չպետք է աշխատի», ինչի հետևանքով կանայք զրկվում են զբաղվածության և ֆինանսական անկախության հնարավորությունից:
- 2. Կրթության հասանելիության խոչընդոտում.** աղջիկների բարձրագույն կրթությունը ոչ միշտ է խրախուսվում, իսկ որոշ դեպքերում նույնիսկ կարող է արգելվել՝ դիտարկվելով որպես «ոչ պետքական» ներդրում՝ ըստ մասնակիցների:

3. **Անվտանգության վերաբերյալ կանխակալ պատկերացումներ.** տարածված է այն կարծիքը, որ կանանց համար անվտանգ չէ մեկ այլ համայնք կամ քաղաք գնալը և աշխատելը, ինչը սահմանափակում է նրանց շարժունությունը և մասնագիտական հեռանկարները:
4. **Համայնքային ճնշումներ և սոցիալական վերահսկողություն.** կանայք և աղջիկները հաճախ բախվում են համայնքի քննադատությանը կամ վախենում են «հասարակական կարծիքից», եթե ընտրում են ոչ ավանդական մասնագիտություն կամ աշխատանք համայնքից դուրս:
5. **Տնտեսական կախվածության խորացում.** կարծրատիպերը սահմանափակում են կանանց մասնակցությունը վճարովի աշխատանքում, ինչի հետևանքով նրանք շարունակում են մնալ կախված ամուսնուց/գուզրնկերոջից կամ ընտանիքի մյուս անդամներից:

## Լուծման հնարավոր ուղիներ

1. **Կարծրատիպերի հաղթահարում և ներգրավվածության խթանում.** իրականացնել իրազեկմանն ուղղված նախաձեռնություններ և կրթական ծրագրեր, որոնք միտված կլինեն վնասակար կարծրատիպերի հաղթահարմանը:
  - *Հնարավոր ռեսուրսներ.* պետական բյուջե, համայնքային բյուջե, միջազգային դոնորների աջակցություն, ԶՀԿ-ների ծրագրեր, մեդիա համագործակցություն
  - *Պատասխանատու կողմեր և գործընկերներ.* ԱՍՀՆ, ԿԳՄՄՆ, ՏԻՄ-եր<sup>20</sup>, ԶՀԿ-ներ, միջազգային կառույցներ<sup>21</sup>
  - *Հնարավոր ժամկետներ.* 2025-2028 թթ.
  - *Ինդիկատորներ.*  $\geq 30\%$  դրական փոփոխություն վերաբերմունքի հարցումների արդյունքում՝ մարզային կտրվածքով

<sup>20</sup> ՏԻՄ-երը կարող են և պետք է դառնան կանանց ձեռնարկատիրության խթանման գործընթացի կարևոր դերակատարներ, քանի որ օրենքով նաև նրանց վերապահված համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման պատասխանատվությունը: Համայնքային բյուջեների և զարգացման ծրագրերի շրջանակում ՏԻՄ-երը լիազորված են ոչ միայն աջակցելու ձեռնարկատիրական նախաձեռնություններին ենթակառուցվածքների, տարածքների կամ կազմակերպչական միջոցներով, այլ նաև բյուջետային հատկացումների և համաֆինանսավորման միջոցով՝ համագործակցելով տեղական ՀԿ-ների, հիմնադրամների ու միջազգային գործընկերների հետ: Նման ներգրավվածությունը թույլ կտա ապահովել կանանց ձեռնարկատիրության կայուն և համակարգային զարգացում համայնքային մակարդակում՝ լրացնելով պետական և մասնավոր հատվածների ջանքերը:

<sup>21</sup> Այն բոլոր տեղերում, որտեղ որպես պատասխանատու կողմ նշված են ԶՀԿ-ներ, մեդիա և/կամ միջազգային կառույցները, այլ կերպ ասած՝ ոչ պետական կառույցները, դրանք բոլոր երկկողմանի համաձայնությամբ պետք է ներկայացված լինեն: Այս բաժնում դրանք ներկայացված են որպես գործընկերներ:

2. **Կանանց և աղջիկների կրթության խրախուսում և աջակցության ծրագրեր.** ներդնել կրթաթոշակներ, մենթորական ծրագրեր և խրախուսական հատուկ մեխանիզմներ՝ բարձրագույն կրթություն ստացող աղջիկների համար՝ հատկապես մարզերում:

- *Հնարավոր ռեսուրսներ.* պետական կրթական ծրագրեր, համայնքային բյուջե, տեղական և միջազգային կրթաթոշակային հիմնադրամներ
- *Պատասխանատու կողմեր և գործընկերներ.* ԿԳՄՄՆ, բուհեր, ՏԻՄ-եր, միջազգային կրթական կազմակերպություններ, ԲՀԿ, մեդիա
- *Հնարավոր ժամկետներ.* 2025-2030 թթ.
- *Ինդիկատորներ.*  $\geq 30\%$  ան մարզերում աղջիկների բարձրագույն կրթության ընդգրկվածության համատեքստում

---

3. **Անվտանգության ապահովում, ընկալումների փոփոխություն և շարժունության խթանում.** իրականացնել իրազեկման արշավներ և համայնքային ծրագրեր՝ ներկայացնելու կանանց անվտանգ տեղաշարժի և աշխատանքի հնարավորությունները, ինչպես նաև պետական-հասարակական հովանավորությամբ ապահով տրանսպորտային մեխանիզմների զարգացում և ապահովում:

- *Հնարավոր ռեսուրսներ.* պետական բյուջե, ՏԻՄ-երի ներդրումներ, միջազգային գործընկերների աջակցություն, մեդիա համագործակցություն
- *Պատասխանատու կողմեր և գործընկերներ.* ՏԿԵՆ, ՏԻՄ-եր, ԲՀԿ-ներ, մեդիա
- *Հնարավոր ժամկետներ.* 2025-2030 թթ.
- *Ինդիկատորներ.* նոր նախաձեռնությունների թիվ՝ կանանց անվտանգ տրանսպորտային ծառայությունների հասանելիության համար

---

## **Խնդիր 2. Գենդերային խզվածքը տնային չվճարվող աշխատանքում և կանանց տնտեսական հզորացման հարցերը**

**Խնդրի նկարագրություն.** մասնակիցները նշում են, որ հատկապես մարզերում կանայք և տղամարդիկ հստակորեն տարբեր կերպ են ներգրավված խնամքի և տնային տնտեսության մեջ: Հիմնականում կանայք են, որ ծանրաբեռնված են տնային և ընտանիքի խնամքի պարտականություններով, այլ կերպ ասած՝ չվճարովի աշխատանք են իրականացնում,

նույնիսկ այն դեպքերում, երբ նաև գուգահեռ ֆորմալ աշխատում են՝ վճարովի աշխատանք են կատարում:

Համայնքային հանդիպումների մասնակիցներից շատերն ընդգծեցին, որ հատկապես բարդ է աշխատող կանանց դեպքում, որոնք միևնույնն է, չեն ազատվում «տնային պարտականություններից» և հաճախ դառնում են «երկակի բեռի» կրողներ՝ օրվա վերջ իրենց հիմնական աշխատանքից հետո շարունակելով հոգալ ընտանիքի անդամների մասին ու կազմակերպել տան բոլոր ուղղակի կամ անուղղակի գործերը: Եթե տնամերձ մշակելի տարածք կա կամ դաշտային աշխատանք, կանայք նաև այդտեղ են որպես աշխատուժ ներգրավվում՝ այս ամենին գուգահեռ: Այս «երկակի բեռը», իսկ երբեմն էլ՝ «բազմակի բեռը» հանգեցնում է քրոնիկ հոգնածության, չկա աշխատանք-կյանք բալանսավորում, այս ամենը բացասաբար է ազդում մասնագիտական աճի հնարավորությունների վրա:

Տնային և գյուղատնտեսական աշխատանքի անհամաչափ բաշխումը կնոջ մասնագիտական ներուժի և տնտեսական ինքնավարության վրա բացասաբար է անդրադառնում, ինչը խոչընդոտում է նրա հզորացման և սոցիալական կայունության ձեռքբերմանը:

Այդ պատճառով կարևոր է *կրճատել զենդեքային խզվածքը տնային և տնտեսության տարբեր ոլորտներում*՝ խրախուսելով նաև տղամարդկանց ակտիվ ներգրավվածությունը տնային, գյուղատնտեսական և այլ ոչ ֆորմալ, չվճարվող աշխատանքի մեջ:

Հավելյալ անհրաժեշտ է, որպեսզի կանայք կարողանան հավասարակշռված զարգացնել իրենց մասնագիտական և անձնական կյանքը՝ նվազեցնելով հոգեբանական և ֆիզիկական ծանրաբեռնվածությունը, բարձրացնելով եկամուտները և ապահովելով տնտեսական անկախություն:

Նախադպրոցական կենտրոնները/ մանկապարտեզները և խնամքի ցերեկային կենտրոնները, այդ թվում՝ տարեցների համար, կարող էին այլընտրանքային լուծումների մեջ լինել՝ հնարավորություն տալով վերջիններիս աշխատել, սակայն, հատկապես մարզերում այդ կենտրոնները կամ բացակայում են կամ մատչելի և հասանելի չեն: Իսկ այն վայրերում, որտեղ դրանք գործում են, մանկապարտեզների աշխատանքային ժամերը սովորաբար չեն համընկնում ծնողների աշխատանքային գրաֆիկի հետ. մանկապարտեզները ավելի վաղ են փակվում:

Մասնակիցները հիշատակել են նաև պետության կողմից նախկինում կիրառված դայակի ինստիտուտը, որը, նրանց դիտարկմամբ, արդյունավետ էր հատկապես փոքր երեխաներ ունեցող աշխատող կանանց համար: Այս ինստիտուտը հնարավորություն էր տալիս ծնողներին համատեղել աշխատանքը և երեխայի խնամքը՝ նվազեցնելով կանանց «երկակի բեռը»: Ներկայումս այն այլևս չի գործում, սակայն մասնակիցները կարևորում են դրա վերագործարկման և արդիականացված ձևաչափով ներդրման անհրաժեշտությունը՝ հատկապես մարզերում, որտեղ խնամքի ծառայությունների մատչելիությունն ու հասանելիությունը սահմանափակ է: Միևնույն ժամանակ ընդգծվել է, որ ծրագրի արդյունավետությունը և հնարավոր բացերը նախ պետք է գնահատվեն՝ հետագա

վերագործարկման նպատակահարմարությունն ու ձևաչափը հստակեցնելու համար: Այս պատճառով դայակի ինստիտուտը չի դիտարկվում որպես անմիջական և առաջնահերթ առաջարկություն, այլ որպես փորձի վերլուծության կարիք ունեցող ուղղություն, որի հիման վրա հնարավոր կլինի մշակել նոր ու կայուն լուծումներ:

---

## Խնդիրների շրջանակ

1. **Չվճարվող աշխատանքի անհամաչափ բաշխում.** տնային տնտեսության և ընտանիքի խնամքի հիմնական բեռը ընկած է կանանց վրա, որոնք նրանք կատարում են իրբև «բնական պարտականություն»՝ նույնիսկ այն դեպքում, երբ նրանք նաև ներգրավված են ֆորմալ, վճարովի աշխատանքի մեջ:
  2. **Խնամքի ծառայությունների սահմանափակ հասանելիություն.** մարզերում հասանելի չեն նաև խնամքի ծառայությունները, օրինակ՝ մանկապարտեզները, երեխաների զարգացման կենտրոնները, ցերեկային կենտրոնները, տարեցների խնամքի ծառայությունները, որոնք կարող էին թեթևացնել այս բեռը: Նրանք կամ իսպառ բացակայում են, կամ էլ առկայության դեպքում հասանելի և մատչելի չեն՝ տարբեր գործոններով պայմանավորված:
  3. **«Երկակի» և «բազմակի բեռի» խնդիր.** աշխատող կանայք աշխատանքային օրվա ավարտից հետո շարունակում են կատարել չվճարովի տնային աշխատանք և խնամքի աշխատանք, ինչի հետևանքով կուտակվում է քրոնիկ հոգնածություն և չի ապահովվում աշխատանք-կյանք հավասարակշռությունը:
  4. **Գյուղատնտեսական աշխատանքում կանանց ծանրաբեռնվածություն.** տնամերձ տարածքներում և դաշտային աշխատանքներում կանայք ևս ներգրավված են որպես աշխատուժ՝ զուգահեռ տան և աշխատանքի հիմնական պարտականություններին:
  5. **Մասնագիտական աճի խոչընդոտում.** բազմակի բեռի պատճառով կանայք սահմանափակ հնարավորություն ունեն մասնագիտական առաջխաղացման, կրթական զարգացման և եկամտի աճի համար:
  6. **Գենդերային խզվածք տնային և գյուղատնտեսական աշխատանքի.** տղամարդկանց ներգրավվածությունը տնային ու խնամքի աշխատանքներում սահմանափակ է, ինչն էլ խորացնում է կանանց տնտեսական և սոցիալական կախվածությունը և գենդերային անհավասարությունը:
-

## Լուծման հնարավոր ուղիներ

1. **Չվճարվող աշխատանքի բեռի կրճատում և խնամքի ծառայությունների համալրում.** ներդնել խնամքի ծառայությունների հասանելի և մատչելի մոդելներ և մեխանիզմներ՝ մանկապարտեզներ, ցերեկային կենտրոններ, տարեցների խնամքի ծառայություններ և ապահովել վերջիններիս հասանելիությունը:

- *Հնարավոր ռեսուրսներ.* պետական բյուջե, համայնքային բյուջեներ, միջազգային դոնորների աջակցություն
- *Պատասխանատու կողմեր և գործընկերներ.* ԱՄՀՆ, ՏԿԵՆ, ՏԻՄ-եր, միջազգային կառույցներ, ԶՀԿ-ներ
- *Հնարավոր ժամկետներ.* 2025-2030 թթ.
- *Ինդիկատորներ.* միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության առկայություն, նոր կամ ընդլայնված  $\geq 50$  համայնքային խնամքի ծառայություն՝ երեխաների, հաշմանդամություն ունեցող անձանց և տարեցների համար՝ հիմնված միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության վրա

---

2. **«Երկակի» և «բազմակի բեռի» թեթևացում.** ներդնել ճկուն զբաղվածության ձևաչափեր (հեռահար աշխատանք, կիսաժամային աշխատանք) և խրախուսել գործատուներին՝ ապահովելու ծնողների համար բարենպաստ աշխատանքային պայմաններ:

- *Հնարավոր ռեսուրսներ.* գործատուների համաֆինանսավորում, պետական խթանման ծրագրեր, օրինակ՝ պետություն-գործատու համագործակցությամբ, միջազգային գործընկերների աջակցություն
- *Պատասխանատու կողմեր և գործընկերներ.* ԱՄՀՆ, գործատուներ
- *Հնարավոր ժամկետներ.* 2025-2027 թթ.
- *Ինդիկատորներ.*  $\geq 200$  կազմակերպություն ներդրած ճկուն աշխատանքային մեխանիզմներ

---

3. **Գյուղատնտեսական աշխատանքում կանանց ծանրաբեռնվածության նվազեցում.** ապահովել կանանց հասանելիություն ժամանակակից գյուղատնտեսական տեխնոլոգիաներին և սարքավորումներին՝ զարգացնելով նաև վերջիններիս կիրառման գործնական հմտությունները:

- *Հնարավոր ռեսուրսներ.* պետական ծրագրեր, միջազգային գարգացման դրամաշնորհներ, մասնավոր ներդրումներ
  - *Պատասխանատու կողմեր և գործընկերներ.* ՀՀ Կառավարություն, ԷՆ, ՏԿԵՆ, ՔՀԿ-ներ, միջազգային կառույցներ
  - *Հնարավոր ժամկետներ.* 2025-2030 թթ.
  - *Ինդիկատորներ.*  $\geq 500$  կին ներգրավված համապատասխան ծրագրերում
- 

**4. Մասնագիտական աճի խթանում.** կանանց համար ներդնել շարունակական կրթության, վերապատրաստման և վերաորակավորման հասանելի ծրագրեր՝ հատկապես մարզերում:

- *Հնարավոր ռեսուրսներ.* պետական ծրագրեր, համայնքային բյուջե, միջազգային դրամաշնորհներ
  - *Պատասխանատու կողմեր և գործընկերներ.* ԿԳՄՄՆ, ԱՍՀՆ, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ, բուհեր և մասնավոր կրթական կենտրոններ, ՔՀԿ-ներ, միջազգային կառույցներ
  - *Հնարավոր ժամկետներ.* 2025-2028 թթ.
  - *Ինդիկատորներ.* տարեկան  $\geq 2000$  կին ՀՀ ողջ տարածքում ներգրավված վերապատրաստման և վերաորակավորման ծրագրերում
- 

**5. Տղամարդկանց ներգրավվածության խթանում տնային և խնամքի աշխատանքներում.** իրականացնել իրազեկման և կրթական ծրագրեր՝ խրախուսելով համատեղ պատասխանատվությունը խնամքի և տնային տնտեսության չվճարովի աշխատանքի նկատմամբ:

- *Հնարավոր ռեսուրսներ.* պետական բյուջե, միջազգային դոնորների տեխնիկական աջակցություն, մեդիա և կրթական ծրագրեր
- *Պատասխանատու կողմեր և գործընկերներ.* ԱՍՀՆ, ԿԳՄՄՆ, ՔՀԿ-ներ, մեդիա կազմակերպություններ, միջազգային կառույցներ
- *Հնարավոր ժամկետներ.* շարունակական՝ 2025-2030 թթ.
- *Ինդիկատորներ.*  $\geq 50$  իրազեկման արշավ,  $\geq 5000$  տղամարդ ներգրավված ծրագրերում

### Խնդիր 3. Կրթության և աշխատաշուկայի անհամապատասխանություն և տնտեսական խոչընդոտներ

**Խնդրի նկարագրություն.** զգայուն և խոցելի խմբերի ներկայացուցիչները հաճախ բավարար մասնագիտական պատրաստվածություն և մրցունակություն չունեն: Օրինակ, մասնակիցները, որոնց թվում հենց խոցելի խմբերի ներկայացուցիչներ կային, նշում էին, որ *ԼՂ-ից բռնի տեղահանված կանայք*, ովքեր հիմնականում ունեն կրթություն, և մի մասի մոտ էլ առկա է նաև աշխատանքային համապատասխան փորձ, ներկայումս Հայաստանում դժվարանում են մասնագիտական ինտեգրման հարցում և հիմնականում չեն կարողանում աշխատատեղ գտնել: Այլ կերպ ասած՝ աշխատատեղերի սահմանափակ լինելը, մյուս կողմից մասնագիտությունների անհամապատասխանությունը շուկայի պահանջներին խոչընդոտում են կանանց աշխատանքային ներառմանը:

Հատուկ խումբ են կազմում նաև *ընտանեկան բռնության ենթարկված կանայք*, որոնց համար տնտեսական անկախացումը և հզորացումը կենսական նշանակություն ունի. այդ հնարավորությունների բացակայությունը մեծացնում է բռնարար հարաբերությունների վերադառնալու վտանգը և խոչընդոտում նրանց ու իրենց երեխաների կյանքի արժանապատիվ կազմակերպմանը: Նման խոցելի խմբերի համար շարունակական կրթության ապահովումը, նոր և մրցունակ հմտություններով և գիտելիքներով ապահովելը կենսական է: Տնտեսական անկախացումը և հզորացումը կենսական նույնակերպ նշանակություն ունի մեկ այլ խոցելի խմբի՝ հաշմանդամություն ունեցող անձանց, համար:

Պետության կողմից իրականացվող ծրագրերը, ինչպես նշեցին մասնակիցները, հաճախ կարճաժամկետ են, մասշտաբային չեն և վերոնշյալ դեպքերում հիմնականում ընդգրկում են ավանդական, կարծրատիպային մասնագիտություններ՝ մատահարդար, վարասահարդար, հրուշակագործ, ծաղկի դիզայներ և այլն: Այդ ոլորտները շարունակաբար ապահովում են ցածր եկամուտ և ներկայում շուկայական պահանջն այնքան էլ մեծ չէ, ինչպես նշում են հենց մասնակիցները:

Ավելին, նույնիսկ կարճաժամկետ հմտությունների ծրագրերի դեպքում կանայք կարիք ունեն հետագա փուլերի համար՝ շարունակական կրթության, պրակտիկայի, մասնագիտական ցանցերի ստեղծման, գործիքների տիրապետման, թվային հմտությունների և այլ վերապատրաստումների: Նման շարունակական, ինտեգրված մոտեցման բացակայությունը սահմանափակում է նրանց՝ նոր թիրախային լսարաններ գտնելու, հմտությունները կիրառելու և աշխատանքի շուկայում մրցունակ լինելու հնարավորությունները:

Մասնակիցների մի մասը կարևորել է *նպատակային ուսուցման՝ թիրախային խումբ դարձնելով աղջիկ/կին սովորողներին*, և կրթական աջակցման անհրաժեշտությունը՝ ընդգծելով, որ պետությունը պետք է ապահովի ուսման վարձերի փոխհատուցում, ինչպես նաև պարտադիր պրակտիկայի կազմակերպում՝ նպատակային ուսուցման տրամաբանության շրջանակում: Նշվել է, որ արդյունավետ կլինի ընդլայնել համագործակցության շրջանակը բուհերի, արհեստագործական և միջին մասնագիտական

ուսումնական հաստատությունների, ինչպես նաև պոստենցիալ գործատուների միջև՝ ձևավորելով եռամակարդակ համագործակցություն: Այս մոտեցումը կնպաստի կանանց մասնագիտական ներուժի առավել արդյունավետ իրացմանը և նրանց տնտեսական հզորացմանը:

Որպես հաջողված փորձ՝ կանանց աշխատանքի անցնելու համատեքստում, ֆոկլուս խմբային քննարկումների մասնակիցները առանձնացրել են *Միասնական սոցիալական ծառայություն* (ՄՄԾ) կողմից իրականացված ծրագիրը, որի շրջանակում ուսանողներին տրամադրվել է երեք ամիս տևողությամբ վճարովի պրակտիկա՝ զուգահեռ աջակցություն ստանալով հիմնական աշխատանք գտնելու գործընթացում: Մասնակիցների գնահատմամբ՝ այս նախաձեռնությունը հանդիսացել է արդյունավետ մոդել, որը նպաստել է երիտասարդների մասնագիտական ներուժի բացահայտմանը և շուկայի ինտեգրմանը: Նման մոտեցումը հնարավոր է վերափմաստավորել և կիրառել ավելի նպատակային ձևաչափով՝ ներառելով կանանց տնտեսական հզորացման բաղադրիչը և տարածելով ՀՀ բոլոր մարզերում: Սա կնպաստի ոչ միայն կանանց զբաղվածության մակարդակի բարձրացմանը, այլև կծառայի որպես կայուն մեխանիզմ՝ ուսուցման, պրակտիկայի և աշխատաշուկայի կապի ամրապնդման համար: Այս մոտեցումը կրնդգրկվի սույն խնդրի հնարավոր լուծումներ բաժնում:

---

## Խնդիրների շրջանակ

- Աշխատաշուկա մուտք գործող խոցելի խմբերի կանանց մասնագիտական պատրաստվածության ցածր մակարդակ.** բազմաթիվ կանայք, հատկապես խոցելի խմբերի ներկայացուցիչներ, չունեն արդի շուկայի պահանջների համար բավարար հմտություններ և մրցունակություն աշխատաշուկայում:
- ԼԳ-ից բռնի տեղահանված կանանց մասնագիտական վերապրոֆիլավորման խնդիրներ.** նույնիսկ կրթություն կամ աշխատանքային փորձ ունեցող կանայք դժվարությամբ են գտնում համապատասխան աշխատանք Հայաստանում:
- Ընտանեկան բռնության ենթարկված կանանց տնտեսական և մասնագիտական հզորացման անհրաժեշտություն.** տնտեսական անկախությունը կենսական նշանակություն ունի՝ բռնարար հարաբերություններից դուրս գալու և արժանապատիվ կյանքի ապահովման համար, մինչդեռ նրանց համար աշխատանք գտնելը մարտահրավեր է:
- Պետական ծրագրերի կարճաժամկետ և մասնակի բնույթ.** ներկա ծրագրերը համապարփակ չեն, հաճախ ընդգրկում են միայն ավանդական մասնագիտություններ (մատահարդար, վարսահարդար, հրուշակագործ, ծաղկի

դիզայներ և այլն), որոնք ցածր եկամուտ են ապահովում և չեն համապատասխանում շուկայի պահանջներին:

5. **Շարունակական կրթության և պրակտիկայի հնարավորությունների բացակայություն.** կարճաժամկետ ծրագրերի ավարտից հետո կանանց դժվար է ապահովել հետագա կրթությամբ, պրակտիկայով, մասնագիտական ցանցերով, թվային գործիքների տիրապետմամբ և շուկայի պահանջներին համապատասխան հմտություններով:
6. **Մշտադիտարկման և գնահատման համակարգի բացակայություն.** անհրաժեշտ է իրականացնել արդեն իսկ իրականացրած ծրագրերի մշտադիտարկում և գնահատում՝ ծրագրերի արդյունավետության գնահատման և դրանց համաձայն փոփոխությունների իրականացման համար:

---

## Լուծման հնարավոր ուղիներ

1. **Շուկայի պահանջներին համապատասխան մասնագիտական վերապատրաստման ծրագրեր.** վերապատրաստել կանանց, հատկապես խոցելի խմբերի ներկայացուցիչներին, նոր և բարձր եկամտաբեր ոլորտներում՝ ներառյալ ՏՏ, թվային հմտություններ, հաշվապահություն, ինժեներական մասնագիտություններ և այլ նորարարական ոլորտներ՝ վերապատրաստումներն ավելի երկարաժամկետ պլանավորելով և իրականացնելով:
  - *Հնարավոր ռեսուրսներ.* պետական ծրագրերի ֆինանսավորում, միջազգային դոնորների աջակցություն, մասնավոր հատվածի համաֆինանսավորում, ԲՀԿ-ների տեխնիկական աջակցություն
  - *Պատասխանատու կողմեր և գործընկերներ.* ԱՍՀՆ, ԿԳՄՄՆ, ՏԻՄ-եր, ԲՀԿ-ներ, միջազգային կառույցներ
  - *Հնարավոր ժամկետներ.* 2025-2028 թթ.
  - *Ինդիկատորներ.* ծրագրի շահառուների՝ աշխատաշուկայում տեղավորվելու տոկոսը  $\geq 50\%$

- 
2. **Շարունակական կրթության և պրակտիկայի հնարավորությունների ստեղծում.** Նորաբաց ծրագրերի ավարտից հետո ապահովել հետագա ուսուցում,

մենթորություն, պրակտիկա, մասնագիտական ցանցի հասանելիություն և թվային գործիքների ուսուցում:

- *Հնարավոր ռեսուրսներ*. պետական և միջազգային դրամաշնորհներ, մասնավոր ոլորտի համագործակցություն
- *Պատասխանատու կողմեր և գործընկերներ*. ԿԳՄՄՆ, ԱՍՀՆ, ՔՀԿ-ներ, մասնագիտական համայնքներ
- *Հնարավոր ժամկետներ*. շարունակական՝ 2025-2030 թթ.
- *Ինդիկատորներ*.  $\geq 60\%$  ծրագրի ավարտած մասնակիցներ ունեն անձնական մենթոր և պրակտիկայի հնարավորություն

---

3. **Քրուչինգ կամ անհատական մենթորության իրականացում «կինը կնոջ համար» սկզբունքով**. Կազմակերպվում է անհատական քրուչինգ կամ մենթորություն՝ «կինը կնոջ համար» սկզբունքով՝ ապահովելով անհատական մոտեցում և աջակցություն մասնակից կանանց կարիերայի, կրթության և անձնական զարգացման ոլորտներում: Յուրաքանչյուր կինը հնարավորություն է ստանում աշխատել փորձառու մենթորի հետ, ստանալ ուղղորդում, խորհրդատվություն, արձագանքներ և զարգացման պլան՝ հիմնված իր առկա հմտությունների և կարիքների վրա: Ծրագիրը միտված է ոչ միայն մասնագիտական հմտությունների զարգացմանը, այլև վստահություն և ինքնուրույնություն ապահովելուն, ստեղծելով անվտանգ և աջակցող միջավայր՝ երկարաժամկետ ազդեցություն ունեցած արդյունքների համար:

- *Հնարավոր ռեսուրսներ*. միջազգային և տեղական փորձագիտական աջակցություն, պետական բյուջե, միջազգային գործընկերների դրամաշնորհներ, ՔՀԿ-ների և մասնավոր հատվածի համաֆինանսավորում, տեխնիկական/թվային հարթակներ առցանց և ներկայային հանդիպումների համար, նյութական ու տեխնիկական աջակցություն;
- *Պատասխանատու կողմեր և գործընկերներ*. ՔՀԿ-ներ, ՏԻՄ-եր, մասնավոր ձեռնարկություններ, միջազգային կառույցներ;
- *Հնարավոր ժամկետներ*. 2025-2028 թթ.
- *Ինդիկատորներ*.  $\geq 80\%$  մասնակիցների համար ձևավորված անհատական զարգացման պլան,  $\geq 65\%$  մասնակիցների ակտիվ ներգրավվածություն ծրագրի ողջ տևողության ընթացքում

4. **Կարճաժամկետ և ավանդական մասնագիտություններից ու հմտությունների ձեռքբերումից անցում դեպի նորարար և եկամտաբեր ոլորտներ՝ կանանց տնտեսական կայուն զարգացման և հզորացման համար.** ապահովել ծրագրերի վերանայում՝ կենտրոնանալով բարձր եկամտաբեր, շուկայի պահանջներին համապատասխան մասնագիտությունների վրա և հմուտությունների համալրում՝ տնտեսական ինքնավարության բարձրացման համար:

- *Հնարավոր ռեսուրսներ.* միջազգային փորձագիտական աջակցություն, պետական բյուջե, մասնավոր հատվածի ներդրումներ
- *Պատասխանատու կողմեր և գործընկերներ.* ԱՄՀՆ, ԿԳՄՄՆ, ՏԻՄ-եր, մասնավոր ձեռնարկություններ, ԲՀԿ-ներ, միջազգային կառույցներ
- *Հնարավոր ժամկետներ.* 2025-2028 թթ.
- *Ինդիկատորներ.*  $\geq 70\%$  ծրագրերի մասնակիցներ սովորում են նոր և եկամտաբեր մասնագիտություններ՝ շուկայի պահանջներին համապատասխան

---

5. **Ծրագրերի արդյունավետության շարունակական մշտադիտարկում և գնահատում.** կազմակերպել մշտադիտարկման և գնահատման համակարգ՝ ծրագրերի ազդեցության որոշման, գենդերային ազդեցության գնահատման, փոփոխությունների և երկարաժամկետ արդյունքների ապահովման համար:

- *Հնարավոր ռեսուրսներ.* պետական և միջազգային ֆինանսավորում, տեխնիկական աջակցություն
- *Պատասխանատու կողմեր և գործընկերներ.* ԿԳՄՄՆ, ԱՄՀՆ, ՀԿ-ներ, միջազգային փորձագետներ
- *Հնարավոր ժամկետներ.* շարունակական՝ 2025-2030 թթ.
- *Ինդիկատորներ.* տարեկան  $\geq 1$  գնահատման զեկույց, ծրագրից օգտվողների և աշխատաշուկայի պահանջների համընկնում թիվ/տոկոս – վիճակագրություն, վիճակագրության վարում

---

6. **Նպատակային ուսուցման և եռակողմ համագործակցության մոդելի ներդրում՝ պետության կողմից.** ապահովել աղջիկների և կանանց համար ուսման վարձերի փոխհատուցում, պարտադիր պրակտիկայի կազմակերպում և բուհերի, միջին մասնագիտական հաստատությունների ու գործատուների միջև

համակարգված համագործակցություն՝ կանանց մասնագիտական ներուժի իրացման և տնտեսական հզորացման համար:

- *Հնարավոր ռեսուրսներ.* պետական բյուջե, միջազգային ֆինանսավորում, գործատուների համաֆինանսավորում, գործատուների հետ համագործակցություն և համաֆինանսավորում
- *Պատասխանատու կողմեր և գործընկերներ.* ԿԳՄՄՆ, ԱՍՀՆ, բուհեր, միջին մասնագիտական հաստատություններ, գործատուներ, ՏԻՄ-եր
- *Հնարավոր ժամկետներ.* 2025-2028 թթ.
- *Ինդիկատորներ.*  $\geq 500$  աղջիկ/կին ուսանող ներգրավված նպատակային ուսուցման և պրակտիկայի ծրագրերում  $\ll$  ողջ տարածքում,  $\geq 60\%$  ավարտած ինտեգրված աշխատաշուկայում

---

7. **Վճարովի պրակտիկայի և աշխատանքային ինտեգրման մոդելի ներդրում կանանց տնտեսական հզորացման համար.** վերագործարկել և ընդլայնել Միասնական սոցիալական ծառայության հաջողված փորձը՝ ապահովելով կանանց և հատկապես խոցելի խմբերի համար վճարովի պրակտիկայի հնարավորություն (3-6 ամիս), գույքահեռ ապահովելով աջակցություն հիմնական աշխատանք գտնելու և աշխատաշուկայում ինտեգրվելու գործընթացում:

- *Հնարավոր ռեսուրսներ.* պետական բյուջե, միջազգային դոնորների ֆինանսավորում, գործատուների համաֆինանսավորում
- *Պատասխանատու կողմեր և գործընկերներ.* ԱՍՀՆ, ՄՄԾ, գործատուների միություններ/միավորներ, ՏԻՄ-եր
- *Հնարավոր ժամկետներ.* 2025-2028 թթ.
- *Ինդիկատորներ.* տարեկան  $\geq 1000$  աղջիկ/կին սովորող ներգրավված վճարովի պրակտիկայի ծրագրերում  $\ll$  ողջ տարածքում,  $\geq 60\%$  մասնակցողներ ինտեգրված աշխատաշուկայում մեկ տարվա ընթացքում

---

#### **Խնդիր 4. Կարծրատիպեր և խտրականություն մասնագիտության ընտրության համատեքստում**

**Խնդրի նկարագրություն.** կանանց մասնագիտական ընտրությունը շարունակում է սահմանափակվել՝ ներառյալ առկա *գենդերային կարծրատիպերով*, որոնք ուղղակիորեն

ձևավորում են հասարակության, ընտանիքի և կրթական համակարգի սպասելիքները՝ ազդելով անհատի ընտրության վրա: Այս կարծրատիպերը հաճախ ներկայացնում են որոշ ոլորտներ՝ հատկապես բարձր վարձատրվող, տեխնոլոգիական, նորարարական կամ անվտանգության բնագավառները, որպես «տղամարդկանց» ոլորտներ, ինչն առաջացնում է հոգեբանական, սոցիալական և համակարգային խոչընդոտներ կանանց համար:

Փոկուս խմբերի և համայնքային հանդիպումների ընթացքում դիտարկումները ցույց են տալիս, որ կանանց ներգրավվածությունը ավանդաբար «տղամարդկանց ոլորտներ» ընկալվող մասնագիտություններում, ինչպես օրինակ՝ ՏՏ, ինժեներական, անվտանգության և ուժային կառույցներում, աճում է, սակայն այն դեռևս նվազ ինտենսիվ և ոչ համակարգային է: Մասնակիցները նշել են, որ այս ոլորտներում կանանց առկա մասնաբաժինը հաճախ կախված է անհատական նախաձեռնություններից, տեղական ծրագրերից կամ դոնորային աջակցությունից, և աշխատանքի միջավայրերը հաճախ չեն ապահովում գենդերային զգայունություն և գենդեր-արձագանքող՝ ներառյալ առնչվող ենթակառուցվածքների, աշխատաժամանակի ճկունության և ներառման գործնական մեխանիզմների տեսանկյունից:

Բացի արտաքին միջավայրից, կանանց ընտրությունները պայմանավորված են նաև *ընդհանուր կրթական և կարիերայի խորհրդատվական միջավայրով*, որտեղ գենդերային պատկերացումները և կարծրատիպերը շարունակում են ամրապնդվել՝ անգամ կրթական մակարդակի բարձրացման դեպքում: Արդյունքում, կանայք հաճախ գերադասում են *ավանդական և «անվտանգ» մասնագիտություններ*, ինչպիսիք են մանկավարժությունը, առողջապահությունը, սոցիալական աշխատանքը կամ արվեստները:

Այս համատեքստում, գենդերային կարծրատիպերը ոչ միայն սահմանափակում են կանանց մուտքը բարձր տեխնոլոգիական և նորարարական ոլորտներ, այլև հանդիսանում են *հիմնական գործոններ աշխատանքի արդյունավետության, մրցունակության և սոցիալական ինտեգրման վրա*, ինչն ունենում է *երկարաժամկետ տնտեսական և սոցիալական հետևանքներ*:

Արդյունքում, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ խնդիրը *առնչվում է ոչ միայն անձի անհատական ընտրությանը*, այլ նաև *կրթական, քաղաքական, մասնագիտական և մշակութային միջավայրերի համակարգային կառուցվածքին*, ինչը պահանջում է համապարփակ մոտեցում՝ համատեղելով կրթական ծրագրերը, կարիերայի խորհրդատվությունը, քաղաքական նախաձեռնությունները և աշխատանքային միջավայրի բարեփոխումները:

Այս առումով իրականացվող աշխատանքները պետք է կազմակերպվեն *համակարգային, բազմաշերտ մոտեցմամբ՝ սկսելով դեռևս մանկապարտեզից՝ ներառելով մանկավարժների և կրթական անձնակազմի ծախսերն ու շարունակական վերապատրաստում*՝ նրանց վերաբերմունքի և սպասելիքների փոփոխության նպատակով: Դրանց զուգահեռ հարկավոր է իրականացնել *հանրային արշավներ և քարոզարշավներ*, որոնք ներկայացնում են կանանց հաջողված օրինակներ ավանդաբար «տղամարդկանց» ոլորտ համարվող սեկտորներում, ինչպես նաև համայնքային միջոցառումներ՝ *դրական կերպարների ներկայացման և համայնքային հանդիպումների միջոցով*:

Հանրակրթության մակարդարկում արդյունավետ կլինի մասնագիտական կողմնորոշման խմբակներում իրականացնել համապատասխան նախագծեր, այդ թվում՝ խորհրդատվական և մենթորական, և ներգրավել տարբեր ոլորտներից հյուր-խոսնակներ, մասնագետներ՝ զարգացնելու աղջիկ սովորողների մոտիվացիան և հետաքրքրությունը ոչ ավանդական մասնագիտությունների հանդեպ:

Անհրաժեշտ է, որ այս մոտեցումը դառնա *համայնքային և ազգային մակարդակի շարունակական պրակտիկա*, որը կապահովի երկարաժամկետ ազդեցություն՝ նվազեցնելով գենդերային կարծրատիպերը, ընդլայնելով երիտասարդ կանանց և աղջիկների մասնագիտական ընտրության հնարավորությունները և ստեղծելով ներառական, գենդերազգայուն և գենդեր-արձագանքող կրթական և հասարակական միջավայր:

---

## Խնդիրների շրջանակ

1. **Գենդերային կարծրատիպերի ազդեցություն.** հասարակական սպասելիքներն ու կարծրատիպերը սահմանափակում են կանանց մասնագիտական ընտրությունը՝ ներկայացնելով որոշ ոլորտներ որպես «տղամարդկանց» համար նախատեսված զբաղվածություն:
2. **Ավանդական և «ընդունված» մասնագիտությունների գերադասում.** կանայք ընտրում են մասնագիտություններ, որոնք համարվում են ավանդական և «ընդունված», ինչպիսիք են մանկավարժությունը, առողջապահությունը, սոցիալական աշխատանքը և արվեստները, ինչը սահմանափակում է բարձր վարձատրվող և նորարարական ոլորտներում նրանց մուտքն ու առաջխաղացումը:
3. **Խնդրի լուծմանը միտված հատվածային մոտեցում.** ՏՏ, ինժեներական, անվտանգության և ուժային կառույցներում կանանց ներգրավվածությունը անում է, սակայն այն դեռ անկայուն է, պայմանավորված անհատական նախաձեռնություններով, տեղական ծրագրերով կամ դոնորային աջակցությամբ, միջդեռ այն պետք է կրեր համակարգային բնույթ և իրականացվեր հիմնականում պետական մակարդակով:
4. **Աշխատանքային գենդերազգայուն և գենդեր-արձագանքող միջավայրերի բացակայություն.** աշխատանքի միջավայրերը հաճախ չեն ապահովում ենթակառուցվածքներ, ճկուն աշխատաժամանակ կամ ներառման գործնական մեխանիզմներ, ինչը նվազեցնում է կանանց մասնակցությունն ու առաջխաղացումը:
5. **Կրթական և խորհրդատվական համակարգերի ազդեցություն.** գենդերային պատկերացումները ամրապնդվում են նաև կրթական և կարիերայի

խորհրդատվական միջավայրում, ինչը աղջիկ սովորողների շրջանում սահմանափակում է ոչ ավանդական ոլորտների նկատմամբ հետաքրքրությունը:

6. **Սոցիալական խոչընդոտները և կարծրատիպերը՝ որպես անինքնավստահության հիմք.** կանանց ընտրությունները հաճախ պայմանավորված են սոցիալական սպասելիքներով և շրջանավորված կարծրատիպերով, որոնք սահմանափակում են նրանց ինքնավստահությունը և մասնագիտական հեռանկարները:
7. **Տարածքային և համակարգային ծրագրերի պակաս.** ոչ բոլոր համայնքներում և ազգային մակարդակում կան ծրագրեր կամ նախաձեռնություններ, որոնք նպաստում են գենդերային հավասար ընտրության, ներառման և բազմազան մասնագիտական հնարավորությունների զարգացմանը:

---

## Լուծման հնարավոր ուղիներ

1. **Մանկավարժների և կրթական անձնակազմի վերապատրաստում.** կազմակերպել մանկապարտեզներից մինչև հանրակրթության ոլորտ ներառյալ շարունակական և խորքային վերապատրաստումներ՝ մանկավարժների (դաստիարակ, ուսուցիչ), ինչպես նաև սպասարկող, օժանդակող, դեկավար (դայակ, բուժակ, հոգեբան, հատուկ մանկավարժ, խմբավար, մեթոդիստ, տնօրեն, տնօրենի տեղակալներ և այլ) կազմի վերաբերմունքի և ակնկալիքների փոփոխության նպատակով՝ հնարավորության դեպքում ներառելով նաև ծնողական համայնքին:
  - *Հնարավոր ռեսուրսներ.* պետական բյուջե, համայնքային բյուջե, միջազգային գործընկերների աջակցություն, ՀԿ-ների փորձագիտական ներուժ
  - *Պատասխանատու կողմեր և գործընկերներ.* ԿԳՄՍ, ՏԻՄ-եր, ԿԶՆԱԿ հիմնադրամ, Կրթական ծրագրերի կենտրոն ԾԻԳ
  - *Հնարավոր ժամկետներ.* 2025-2028 թթ.
  - *Ինդիկատորներ.*  $\geq 70\%$  մանկավարժների մասնակցություն վերապատրաստումներին, հարցումների հիման վրա բարելավված վերաբերմունք և գիտելիքներ գենդերային հավասարության վերաբերյալ՝ նախաթեստերի և ամփոփիչ թեստերի միջոցով, որակական տվյալների հավաքագրում և վերլուծություն, որակական ուսումնասիրություններ/հետազոտություններ

2. **Հանրային արշավների իրականացում.** արդեն ավանդաբար «տղամարդկանց» ոլորտներում կանանց հաջողված օրինակների հանրային ներկայացում՝ ավանդական մեդիա, սոցիալական մեդիայի, հրապարակային միջոցառումների, թատերական և արվեստային միջոցառումների տեսքով:
- *Հնարավոր ռեսուրսներ.* պետական և համայնքային բյուջե, միջազգային դոնորների աջակցություն, մեդիա գործընկերներ
  - *Պատասխանատու կողմեր և գործընկերներ.* ԿԳՄՄՆ, ՏԻՄ-եր, ՀԿ-ներ, լրատվամիջոցներ, թատրոններ
  - *Հնարավոր ժամկետներ.* շարունակական՝ 2025-2030 թթ.
  - *Ինդիկատորներ.* տարեկան  $\geq 10$  հանրային արշավ,  $\geq 50$  սոցիալական և մեդիա նյութեր, իրագրվածության բարձրացում  $\geq 30\%$  թիրախային խմբերում
- 

3. **Համայնքային միջոցառումների կազմակերպում.** հանդիպումներ, ցուցադրություններ, տեղական արշավներ՝ հաջողված կանանց և մասնագետների մասնակցությամբ:

- *Հնարավոր ռեսուրսներ.* ՏԻՄ-երի բյուջե, համայնքային ՀԿ-ների աջակցություն, միջազգային դոնորների դրամաշնորհներ
  - *Պատասխանատու կողմեր և գործընկերներ.* ՏԻՄ-եր, ՀԿ-ներ, ԿԳՄՄՆ
  - *Հնարավոր ժամկետներ.* 2025-2030 թթ.
  - *Ինդիկատորներ.* տարեկան  $\geq 30$  համայնքային միջոցառում,  $\geq 900$  թիրախային մասնակիցներ
- 

4. **Մասնագիտական կողմնորոշման խմբակների թեմատիկ ակտիվացում.** հատուկ թեմատիկ հանդիպումներ և նախագծերի իրականացում, որոնք նպաստում են գենդերային ոչ ավանդական մասնագիտությունների փորձառությանը՝ խորհրդատվական, մենթորական, սիմուլացիոն խաղերի միջոցով:

- *Հնարավոր ռեսուրսներ.* պետական բյուջե, համայնքային բյուջե, միջազգային ծրագրերի դրամաշնորհներ, մասնագիտական կազմակերպությունների աջակցություն, բիզնես միավորներ
- *Պատասխանատու կողմեր և գործընկերներ.* ԿԳՄՄՆ, հանրակրթական դպրոցներ, ՀԿ-ներ, նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ
- *Հնարավոր ժամկետներ.* 2025-2030 թթ.

- **Ինդիկատորներ.** տարեկան  $\geq 100$  մասնագիտական թեմատիկ հանդիպումներ և նախագծերի իրականացում, այդ թվում՝ հնարավոր է իրականացնել մասնագիտական կողմնորոշման խմբակների շրջանակում, տարեկան  $\geq 500$  աշակերտների ներգրավվածություն
- 

5. **Քաղաքական, պետական և համայնքային աջակցության համակարգային մոտեցում.** համակարգային քաղաքականությունների մշակում և իրականացում կրթության, աշխատանքային շուկայի և մասնագիտական խորհրդատվության ոլորտներում՝ գենդերային հավասարության ապահովման համար՝ ի նպաստ կանանց տնտեսական հզորացման:

- *Հնարավոր ռեսուրսներ.* պետական բյուջե, համայնքային բյուջե, միջազգային փորձագիտական աջակցություն
  - *Պատասխանատու կողմեր և գործընկերներ.* ՀՀ Կառավարություն, ԿԳՄՄՆ, ՏԻՄ-եր, ԲՀԿ-ներ, միջազգային կառույցներ
  - *Հնարավոր ժամկետներ.* 2025-2028թթ.
  - *Ինդիկատորներ.* ընդունված քաղաքականության/նոր ընթացակարգի առկայություն
- 

6. **Մշտադիտարկման և գնահատման մեխանիզմների ներդրում.** ինդիկատորների և չափման մեխանիզմների ներդրում՝ ծրագրերի արդյունավետությունը չափելու համար:

- *Հնարավոր ռեսուրսներ.* պետական բյուջե, միջազգային կազմակերպությունների տեխնիկական աջակցություն
  - *Պատասխանատու կողմեր և գործընկերներ.* ԿԳՄՄՆ, ՏԻՄ-եր, ԲՀԿ-ներ, միջազգային կառույցներ
  - *Հնարավոր ժամկետներ.* շարունակական՝ 2025-2028 թթ.
  - *Ինդիկատորներ.* տարեկան  $\geq 2$  տվյալների հավաքագրման գեկույց, ծրագրերի արդյունավետության գնահատում
-

7. **Գենդերազգայուն կրթական միջավայրի ապահովում.** ներառական և գենդերազգայուն կրթական միջավայրի բարեփոխում և կայունացում՝ ենթակառուցվածքների, դասընթացների և ռեսուրսների հավասար հասանելիության և բաշխվածության միջոցով:

- *Հնարավոր ռեսուրսներ.* պետական և համայնքային բյուջե, ԶՀԿ-ների աջակցություն, միջազգային դրամաշնորհներ
- *Պատասխանատու կողմեր և գործընկերներ.* ԿԳՄՄՆ, ՏԻՄ-եր, ԶՀԿ-ներ, միջազգային կառույցներ
- *Հնարավոր ժամկետներ.* 2025-2030 թթ.
- *Ինդիկատորներ.*  $\geq 80\%$  դպրոցներում/մանկապարտեզներում գենդերազգայուն և գենդեր-արձագանքող միջավայրի ապահովում, դրական փոփոխությունների փաստում՝ ուսուցիչների և աշակերտների հարցման միջոցով, վիճակագրության վարում:

---

## **Խնդիր 5. Արժանապատիվ աշխատանքի իրավական պաշտպանական մեխանիզմների թերություններ և իրազեկվածության բացեր**

**Խնդրի նկարագրություն.** չնայած վերջին տարիներին իրականացված օրենսդրական բարեփոխումներին, այդ թվում՝ ՀՀ Աշխատանքային օրենսգրքի փոփոխություններին և ԱՄԿ 190-րդ «Բռնության և ոտնձգության» կոնվենցիայի վավերացմանը, արժանապատիվ աշխատանքի իրավունքը Հայաստանում շարունակում է ունենալ խոցելի ու թերի երաշխիքներ: Մասնավորապես, կանայք շարունակում են բախվել համակարգային խտրականության, աշխատավայրում սեռական ոտնձգության դրսևորումների և աշխատանքի պայմանների խախտումների:

Ծրագրի շրջանակում համայնքային հանդիպումների ժամանակ կանայք պարբերաբար մատնանշել են այն *միջավայրերը, որտեղ խոցելիությունը առավել տեսանելի է, մասնավորապես՝ մասնավոր հատվածի փոքր արտադրամասեր, սպասարկման ոլորտի օբյեկտներ, փոքր խանութներ և կրպակներ:* Նրանց խոսքով՝ տղամարդ գործընկերների կողմից սովորական են ոչ պատշաճ արտահայտությունները, սեռական բնույթի կատակները և անեկդոտները, որոնք հաճախ չեն արժանանում դեկավարության կամ աշխատակիցների արձագանքին, իսկ երբեմն էլ հենց դեկավարության կողմից կարող են իրականացվել, ինչի արդյունքում այդ վարքագիծը դառնում է «բնական», սովորական և կրկնվող: Սա վկայում է, որ գործող իրավական մեխանիզմները գործնականում չեն ապահովում ո՛չ կանխարգելում, ո՛չ էլ արդյունավետ արձագանք:

Մարզերում հասկապես տարածված է նաև *աշխատանքային իրավունքների խախտումը*, երբ կանայք չեն ստանում օրենսդրությամբ սահմանված ընդմիջման և հանգստի լիարժեք հնարավորություններ: Ընդմիջումները սահմանափակվում են 15-20 րոպեով՝ առանց տարածքը լքելու պայմանով, իսկ աշխատանքային ժամերը հաճախ գերազանցում են օրենքով սահմանված նորմերը՝ առանց հավելավճարների տրամադրման: Նրանց մի մասը նաև չունի հաղորդակցության որևէ ձևից օգտվելու իրավունք:

Լուրջ խնդիր է նաև *աշխատանքային պայմանագրերի բացակայությունը կամ ձևականությունը*. կանանց զգալի մասը շարունակում է աշխատել չգրանցված, առանց պայմանագրի, հետևաբար գրկված է իրավական, սոցիալական և առողջապահական ասպահովագրությունից և պաշտպանությունից: Իսկ այն դեպքերում, երբ պայմանագիր կա, իրական աշխատավարձը հաճախ չի արտացոլվում պաշտոնական փաստաթղթերում: Արդյունքում կանայք ոչ միայն կորցնում են սոցիալական երաշխիքները, այլև բախվում են տնտեսական սահմանափակումների. օրինակ՝ վարկ ստանալու կամ ապահովագրական ծառայություններից օգտվելու անհնարինություն/անկարողություն:

Փոկուս խմբային քննարկումների ժամանակ կանայք ընդգծել են, որ մարզերում իրենք բախվում են կրկնակի խտրականության. նրանք [կանայք] ավելի քիչ են վարձատրվում նույն աշխատանքի դիմաց՝ ի համեմատ տղամարդկանց, իսկ մարզային աշխատավարձերն իրենց հերթին ևս զգալիորեն ցածր են քաղաքային միջինի աշխատավարձից: Մա խորացնում է կանանց սոցիալական ու տնտեսական խոցելիությունը:

Այս իրավիճակի հետևանքով արժանապատիվ աշխատանքի իրավունքը՝ որպես հիմնարար սոցիալական և տնտեսական իրավունք, Հայաստանում կանանց համար մնում է առավելապես *հռչակված, բայց ոչ երաշխավորված իրականություն*, իսկ գործող պաշտպանական մեխանիզմների թերությունները և դրանց վերաբերյալ իրազեկվածության ցածր մակարդակը խորացնում են կանանց խոցելիությունը աշխատանքի շուկայում:

---

## Խնդիրների շրջանակ

- Աշխատավայրում սեռական ոտնձգություններ և ոչ բարեվարք վարվելակերպ.** կանայք հաճախ ենթարկվում են ոչ պատշաճ արտահայտությունների, կամ ներկա են լինում նման իրավիճակների, այդ թվում՝ սեռական բնույթի կատակների ու անեկդոտների, որոնք մնում են անարձագանք և հանդուրժվում միջավայրում:
- Խտրականություն և արժանապատիվ աշխատանքի իրավունքի խախտումներ.** կանայք ավելի խոցելի են աշխատանքային հարաբերություններում, բախվում են վերաբերմունքի անհավասարության և իրավունքի թերի, ոչ պատշաճ իրացման հետ:

3. **Օրենսդրական պահանջների չկատարում մարզերում.** կանայք փոքր արտադրամասերում, խանութներում ու սպասարկման կետերում չունեն լիարժեք ընդմիջում և հանգիստ, աշխատում են ավելացված ժամերով՝ առանց հավելավճարի:
4. **Զգրանցված աշխատանք և պայմանագրերի բացակայություն.** կանանց մեծ մասը շարունակում է աշխատել առանց պաշտոնական պայմանագրի՝ գրկվելով իրավական, սոցիալական և առողջապահական ընթացիկ և երկարաժամկետ պաշտպանությունից:
5. **Պայմանագրերի թերի և ձևական բնույթ.** այն դեպքերում, երբ կան պայմանագրեր, դրանք հաճախ չեն արտացոլում աշխատավարձի իրական չափը, ինչի հետևանքով կանայք կրկին կորցնում են սոցիալական երաշխիքներ և ունեն դժվարություններ ֆինանսական ու ապահովագրական ծառայություններից օգտվելու հարցում:
6. **Իրազեկվածության պակաս կամ ցածր մակարդակ.** կանայք հաճախ տեղյակ չեն իրենց իրավունքներին, պաշտպանական և արձագանքման համապատասխան մեխանիզմներից և բողոքարկման ընթացակարգերից, ինչի հետևանքով խախտումները մնում են չբացահայտված ու չվերահսկվող:
7. **Անհավասար վարձատրություն և տարածքային խտրականություն.** կանայք նշում են, որ մարզերում ոչ միայն ստանում են ավելի ցածր աշխատավարձ նույն աշխատանքը կատարելու դեպքում, քան տղամարդ գործընկերները, այլև ընդհանուր առմամբ մարզերում աշխատավարձերի մակարդակը զգալիորեն ցածր է, քան քաղաքներում: Սա հանգեցնում է «կրկնակի խտրականության»՝ խորացնելով կանանց սոցիալական և տնտեսական խոցելիությունը:

## Լուծման հնարավոր ուղիներ

1. **Աշխատավայրում սեռական ոտնձգությունների և խտրականության կանխարգելում.** ներդնել պարտադիր ներքին կանոնակարգեր և վարքականոններ՝ արդյունավետ ու գործող մեխանիզմների համադրությամբ, բոլոր պետական և մասնավոր կազմակերպություններում՝ ապահովելով գրոյական հանդուրժողականության քաղաքականություն:
  - *Հնարավոր ռեսուրսներ.* պետական բյուջե, գործատուների համաֆինանսավորում, միջազգային գործընկերների տեխնիկական աջակցություն
  - *Պատասխանատու կողմեր և գործընկերներ.* ԱՄՀՆ, ԱԱՏՄ, Արհմիություններ, ՏԻՄ-եր, ՄԻՊ
  - *Հնարավոր ժամկետներ.* 2025-2030 թթ.

- *Ինդիկատորներ.*  $\geq 60\%$  խոշոր և միջին ընկերություններում ներդրված համապատասխան ներքին կանոնակարգեր և գործուն մեխանիզմներ
2. **Աշխատաժամերի և ընդմիջումների իրավունքի վերահսկողություն.** ուժեղացնել վերահսկողությունը մարզերում գործող փոքր արտադրամասերում և սպասարկման ոլորտի կազմակերպություններում:
- *Հնարավոր ռեսուրսներ.* պետական բյուջե, ՏԻՄ-եր, միջազգային դոնորների տեխնիկական աջակցություն
  - *Պատասխանատու կողմեր և գործընկերներ.* ԱԱՏՄ, ԱՍՀՆ, ՏԻՄ-եր, ՄԻՊ
  - *Հնարավոր ժամկետներ.* 2025-2026 թթ.
  - *Ինդիկատորներ.* տարեկան  $\geq 500$  ստուգում  $\ll$  մարզերում, հայտնաբերված խախտումների  $\geq 50\%$ -ի լուծում՝ օրենքով սահմանված ժամկետներում, վիճակագրության վարում
- 

3. **Աշխատանքային պայմանագրերի պարտադիր կիրարկում.** ապահովել, որ բոլոր աշխատողները գրանցված լինեն և ստանան իրենց փաստացի աշխատավարձի ամբողջական արտացոլումը պայմանագրում:
- *Հնարավոր ռեսուրսներ.* հարկային եկամուտներ, գործատուների ֆինանսական ներդրումներ
  - *Պատասխանատու կողմեր և գործընկերներ.* ՊԵԿ, ԱՍՀՆ, ԱԱՏՄ, Արհմիություններ
  - *Հնարավոր ժամկետներ.* 2025-2028 թթ.
  - *Ինդիկատորներ.*  $\geq 80\%$  աշխատողների գրանցվածություն պաշտոնական պայմանագրերով, վիճակագրության վարում
- 

4. **Աշխատանքային իրավունքների վերաբերյալ իրազեկման ծրագրեր.** իրականացնել թիրախային հանրային և մասնագիտական արշավներ կանանց համար՝ ընդգրկելով հատկապես խոցելի խմբերը և  $\ll$  բոլոր մարզերը:
- *Հնարավոր ռեսուրսներ.* պետական բյուջե, միջազգային կազմակերպությունների դրամաշնորհներ և ծրագրեր, ՀԿ-ների համաֆինանսավորում
  - *Պատասխանատու կողմեր և գործընկերներ.* ԱՍՀՆ, ԿԳՄՄՆ, ԲՀԿ-ներ, միջազգային գործընկերներ կառույցներ

- *Հնարավոր ժամկետներ*. շարունակական՝ 2025-2030 թթ.
  - *Ինդիկատորներ*.  $\geq 70\%$  կին աշխատողների շրջանում իրազեկված աշխատանքի իրավական պաշտպանական մեխանիզմների մասին
- 5. Բողոքարկման և աջակցության մեխանիզմների զարգացում**. ստեղծել անկախ թեժ գծեր և օնլայն հարթակներ՝ աշխատանքի իրավունքների խախտումների արագ արձագանքման նպատակով:
- *Հնարավոր ռեսուրսներ*. պետական բյուջե, միջազգային կառույցների աջակցություն
  - *Պատասխանատու կողմեր և գործընկերներ*. ԱՍՀՆ, ԱԱՏՄ, ԶՀԿ-ներ
  - *Հնարավոր ժամկետներ*. կարճաժամկետ (2025-2026 թթ.)
  - *Ինդիկատորներ*. գործարկված  $\geq 1$  ազգային թեժ գիծ և  $\geq 1$  օնլայն հարթակ, տարեկան  $\geq 500$  դիմում և արձագանք

**6. Հավասար վարձատրության ապահովում և տարածքային խզվածքների կրճատում**. ներդնել աշխատավարձի թափանցիկության մեխանիզմների մեծ, փոքր, միջին կազմակերպություններում և իրականացնել ԱԱՏՄ-ի վերահսկողության ուժեղացում հավասար վարձատրության սկզբունքի կիրառման հիմքով, ինչպես նաև խթանել քաղաք-մարզ-գյուղ տարածքային բաշխվածության անհավասարությունների կրճատմանն ուղղված պետական և ՏԻՄ խթաններ՝ մարզերում աշխատավարձերի մրցունակության բարձրացման համար, ապահովել խնդրի վերաբերյալ կանանց իրազեկվածության բարձրացումը:

- *Հնարավոր ռեսուրսներ*. պետական բյուջե, համայնքային բյուջե. /իրազեկման համար/, գործատուների համաֆինանսավորում, միջազգային կառույցների աջակցություն:
- *Պատասխանատու կողմեր և գործընկերներ*. ԱՍՀՆ, ԱԱՏՄ, ՊԵԿ, ՏԻՄ-եր, ԶՀԿ-ներ, միջազգային կառույցներ
- *Հնարավոր ժամկետներ*. 2025-2030 թթ.:
- *Ինդիկատորներ*. կայուն ցուցանիշներով կրճատում կանանց և տղամարդկանց աշխատավարձերի տարբերության մեջ մինչև 2030 թ.:  $\geq 20\%$  նվազում մարզային-քաղաքային աշխատավարձային տարբերության մեջ:

## **Խնդիր 6. Կանանց ձեռնարկատիրության զարգացման խոչընդոտներն ու սահմանափակումները. հմտություններ, միջավայր, շուկա և քաղաքականություն**

**Խնդրի նկարագրություն.** ձեռնարկատիրության ոլորտի աջակցման ծրագրերում նպատակահարմար է հատուկ շեշտադրել կանանց ձեռնարկատիրության զարգացման ուղղությունը՝ ապահովելով նրանց թվային հմտությունների և ֆինանսական գիտելիքների ընդլայնում, ինչպես նաև մատչելի խորհրդատվական և գործնական աջակցություն: Այս առումով նշենք, որ որոշ վարկային կազմակերպություններ, օրինակ՝ ՖԻՆ-ԲԱ, Արեգակ ունիվերսալ վարկային կազմակերպություններն ունեն որոշակի փորձ, և ժամանակ առ ժամանակ կանանց համար իրականացնում են անվճար հանդիպումներ, սեմինարներ, որոնք միտված են վերոնշյալ հմտությունները զարգացնելուն, սակայն դրանք չեն կրում կայուն և համակարգային բնույթ, այլ հիմնված են վարկային կազմակերպությունների «բարի կամքի» դրսևորման վրա և չեն կարող բավարարել ոլորտում առկա իրական պահանջները: Այս առումով հարկավոր է, որ ՏԻՄ-երը ևս ներգրավված լինեն և կարողանան համայնաքային նման ծրագրեր իրականացնել՝ բյուջե հատկացնելով թե իրենց իսկ բյուջեից, թե համատեղ ծրագրեր իրականացնելով տեղական ՀԿ-ների, հիմնադրամների և միջազգային կառույցների հետ: Մյուս կողմից պետությունը կարող է զարգացնել քաղաքականությունը՝ նման միջոցառումներ իրականացնելու համար և Կառավարությունը՝ միջազգային զարգացման գործընկերների հետ կարող է համատեղ մեծ ծրագրեր մշակել և ներդնել Հայաստանում:

Այստեղ կարևոր է նշել, որ կանանց ձեռնարկատիրության խթանման համար անհրաժեշտ է ոչ միայն թվային հմտությունների և ֆինանսական գիտելիքների զարգացում, այլև ավելի լայն գործարար կարողությունների ձևավորում և ներդրում: Դրա շրջանակում կարևորվում է իրավական և կարգավորող դաշտի բազային իմացությունը, բիզնեսի ռազմավարական պլանավորման ու կառավարման հմտությունները, ժամանակի և ռեսուրսների արդյունավետ օգտագործումը, հաղորդակցության և այլ փափուկ հմտությունների ձեռքբերում և կիրառում: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է ուժեղացնել շուկայավարման և վաճառքի կարողությունները, մասնավորապես՝ թվային մարքեթինգի և բրենդի կառուցման հմտությունները: Կանանց ձեռնարկատիրության կայուն զարգացման համար նույնքան կարևոր են նաև նորարարական և տեխնոլոգիական գիտելիքները (էլեկտրոնային/ թվային առևտուր, կառավարման թվային գործիքներ), ինչպես նաև ռիսկերի գնահատման և կայունության ապահովման մեխանիզմները: Այս համալիր մոտեցումը կնպաստի կանանց կողմից դեկավարվող ՓՄՁ-ների մրցունակության և երկարաժամկետ կենսունակության ամրապնդմանը:

## Խնդիրների շրջանակ

1. **Կանանց ձեռնարկատիրական աջակցության համակարգային ծրագրերի պակաս.** առկա նախաձեռնությունները (օր.՝ ՖԻՆ-ԲԱ ունիվերսալ վարկային կազմակերպություն, Արեգակ ունիվերսալ վարկային կազմակերպություն) իրականացնում են անհատական սեմինարներ և հանդիպումներ, որոնք ունեն ավելի շատ դոնորական կամ բարի կամքի բնույթ և չեն կրում պետական, կայուն ու համակարգային բնույթ:
2. **Տեղական ինքնակառավարման մարմինների ցածր ներգրավվածություն.** համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության շրջանակում կանանց ձեռնարկատիրական կարողությունների զարգացման համար ծրագրեր գրեթե չկան, կամ չեն ունենում բյուջետային և ինստիտուցիոնալ ապահովում:
3. **Պետական քաղաքականության և ռազմավարական մոտեցման բացեր.** ձեռնարկատիրության խթանումը կանանց համար հիմնականում իրականացվում է մեկնագամյա կամ հատվածային ծրագրերով՝ առանց միջգերատեսչական համակարգվածության:
4. **Սահմանափակ հմտությունների փաթեթ կանանց ձեռնարկատիրության համար.** ուշադրությունը հիմնականում կենտրոնացած է թվային և ֆինանսական գրագիտության վրա, մինչդեռ կանանց անհրաժեշտ են նաև իրավական գիտելիքներ, ռազմավարական կառավարում, ժամանակի և ռեսուրսների արդյունավետ օգտագործում, հաղորդակցական և փափուկ հմտություններ:
5. **Շուկայավարման և նորարարական գիտելիքների պակաս.** կանանց ձեռնարկատիրության կայուն զարգացման համար թերի են թվային մարքեթինգի, բրենդի կառուցման, էլեկտրոնային առևտրի, ռիսկերի կառավարման և կայունության ապահովման գործնական հմտությունները:
6. **Ֆինանսական ռեսուրսների և գրավի միջոցների անհասանելիություն.** մարզերում կանայք հաճախ չունեն դրամական հաշիվներ և գրավի միջոցներ, ինչի պատճառով չեն կարողանում ներգրավել վարկային միջոցներ բիզնեսի համար: Բացի այդ, ժառանգության իրավունքը շատ դեպքերում իրացվում է ոչ իրենց՝ կանանց օգտին. կանայք սովորաբար հրաժարվում են գույքից իրենց եղբայրների կամ ընտանիքի մյուս անդամների, մասնավորապես՝ արական սեռի ներկայացուցչի օգտին, ինչի հետևանքով զրկվում են հետագայում վարկային միջոցներ ներգրավելու հիմքից: Կամ հաճախ լինում են դեպքեր, երբ կինը հիմնում է և վարում բիզնեսը, բայց հաճախ ամուսնու անունով է գրանցված և կինը չի տնօրինում ֆինանսները, իսկ այս պրակտիկաները սահմանափակում են կանանց տնտեսական ինքնուրույնությունը, և նման պրակտիկաները, ըստ մասնակիցների պնդման, շատ տարածված են մարզերում:

## Լուծման հնարավոր ուղիներ

**1. Համակարգային և կայուն ծրագրերի ներդրում.** պետության կողմից ստեղծել և երկարաժամկետ հիմքով ներդնել կանանց ձեռնարկատիրության խթանման ազգային ծրագիր՝ միջազգային գործընկերների մասնակցությամբ: Կատարել հարկային դաշտի բարեփոխումներ. փոքր և միջին ձեռնարկատիրություն իրականացնող կանանց համար անհրաժեշտ է մշակել հարկային արտոնություններ և խթանիչ մեխանիզմներ: Խոցելի խմբերի կանանց դեպքում հնարավոր է կիրառել նպատակային առավելություններ, օրինակ՝ որոշակի ժամանակահատվածում հարկային բեռից ազատում կամ նպաստավոր պայմաններով դրամաշնորհային ծրագրերի հասանելիություն:

- *Հնարավոր ռեսուրսներ.* պետական բյուջե, համայնքային բյուջե, միջազգային գործընկերների աջակցություն
- *Պատասխանատու կողմեր և գործընկերներ.* ԱՍՀՆ, ԿԲ, միջազգային կազմակերպություններ
- *Հնարավոր ժամկետներ.* 2025-2027 թթ.
- *Ինդիկատորներ.* կանանց ձեռնարկատիրության աջակցության ազգային ծրագրի առկայություն, տարեկան  $\geq 500$  կին շահառու ողջ ՀՀ տարածքում

---

**2. ՏԻՄ-երի ներգրավվածության ապահովում.** համայնքներում ներդնել բյուջետային ծրագրեր կանանց ձեռնարկատիրական հմտությունների զարգացման համար՝ համագործակցելով ՀԿ-ների, հիմնադրամների և տեղական բիզնեսի հետ:

- *Հնարավոր ռեսուրսներ.* համայնքային բյուջեներ, ՀԿ-ների համաֆինանսավորում
- *Պատասխանատու կողմեր և գործընկերներ.* ՏԻՄ-եր, մարզպետարաններ, ՀԿ-ներ, միջազգային կազմակերպություններ
- *Հնարավոր ժամկետներ.* 2025-2026 թթ.
- *Ինդիկատորներ.*  $\geq 30$  համայնքում գործարկված կանանց ձեռնարկատիրական ծրագրեր

**3. Կրթական և խորհրդատվական փաթեթների ընդլայնում, միջազգային փորձի ուսումնասիրություն և համատեքստայնացում.** Թվային և ֆինանսական գրագիտությանը զուգահեռ տրամադրել իրավական կրթություն, ռազմավարական պլանավորման ու կառավարման դասընթացներ, հաղորդակցական և բանակցային հմտությունների զարգացում: Կանանց ձեռնարկատիրական ներուժի ամրապնդման համար կարևոր է նաև միջազգային փորձի ուսումնասիրությունը և տեղայնացումը, փորձի փոխանակման հարթակների ստեղծումը, թեմատիկ վերապատրաստումները և կյոթ-սեղան քննարկումները: Չուզահեռ անհրաժեշտ է իրազեկման մակարդակի բարձրացում թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց շրջանում՝ գենդերազգայուն մոտեցումների, սոցիալական արշավների և հաջողված փորձի օրինակների միջոցով: Կարևոր է նաև փափուկ հմտությունների զարգացումը՝ հաղորդակցություն, առաջնորդություն, բանակցություններ:

- *Հնարավոր ռեսուրսներ.* պետական ուսումնական ծրագրեր, համայնքային բյուջե, միջազգային կրթական դրամաշնորհներ
- *Պատասխանատու կողմեր և գործընկերներ.* ԿԳՄՄՆ, ԱՍՀՆ, բուհեր, մասնավոր կրթական կենտրոններ
- *Հնարավոր ժամկետներ.* 2025-2028 թթ.
- *Ինդիկատորներ.* տարեկան  $\geq 1000$  կին վերապատրաստված իրավական և կառավարման հմտությունների շրջանակում:

---

**4. Ծուկայավարման և նորարարական հմտությունների զարգացում.** ներդնել հատուկ ծրագրեր թվային մարքեթինգի, բրենդի կառավարման, էլեկտրոնային առևտրի և կայուն զարգացման գործիքների կիրառման համար:

- *Հնարավոր ռեսուրսներ.* պետական աջակցություն, ՏՏ մասնավոր ոլորտի հովանավորություններ
- *Պատասխանատու կողմեր և գործընկերներ.* ԲՏԱՆ, բիզնես միավորումներ
- *Հնարավոր ժամկետներ.* 2025-2030 թթ.
- *Ինդիկատորներ.*  $\geq 500$  կին շահառու ինտեգրված թվային առևտրի հարթակներում

---

**5. Մենթորություն և ցանցեր.** ստեղծել կանանց ձեռնարկատիրական ցանցեր և մենթորական ծրագրեր, որոնք կապահովեն փորձի փոխանակում, գործարար գործընկերությունների ձևավորում և շուկայի ընդլայնման հնարավորություններ:

- *Հնարավոր ռեսուրսներ*. միջազգային գործընկերների տեխնիկական աջակցություն, մասնավոր հատվածի համաֆինանսավորում
- *Պատասխանատու կողմեր և գործընկերներ*. ՀԿ-ներ, գործարար միավորումներ, կանանց ցանցեր
- *Հնարավոր ժամկետներ*. 2025-2027 թթ.
- *Ինդիկատորներ*. ձևավորված առնվազն մեկ ազգային մենթորական ցանց կանանց ձեռնարկատիրության համար

**6. Ֆինանսական ռեսուրսների և գրավի միջոցների հասանելիության խրախուսում և ապահովում**. ստեղծել ու ներդնել մեխանիզմներ, որոնք թույլ կտան կանանց ձեռնարկատիրությանը զարգանալ նույնիսկ այն պարագայում, երբ նրանք չունեն գույքային գրավ կամ ժառանգական սեփականություն, մյուս կողմից իրազեկելով կանանց շրջանում իրենց իրավունքներն, մասնավորապես՝ ժառանգություն ստանալու հարցում: Ապահովել բարենպաստ պայմաններով ֆինանսական վարկերի տրամադրում:

- *Հնարավոր ռեսուրսներ*. պետական ծրագրեր, համայնքային բյուջե, միջազգային ֆինանսական կազմակերպությունների և դոնորների աջակցություն, միկրոֆինանսական ծրագրեր, մասնավոր բանկերի համաֆինանսավորում, ունիվերսալ վարկային կազմակերպություններ:
- *Պատասխանատու կողմեր և գործընկերներ*. ՀՀ Կառավարություն, ԱՍՀՆ, միջազգային ֆինանսական կազմակերպություններ, միկրոֆինանսական կառույցներ:
- *Հնարավոր ժամկետներ*. 2025-2028 թթ.
- *Ինդիկատորներ*.  $\geq 20\%$  աճ կանանց ձեռնարկատիրության ֆինանսավորման ծավալներում

## **Խնդիր 7. Ենթակառուցվածքային և տարածքային անհավասարություններ կանանց տնտեսական ակտիվության համատեքստում**

**Խնդրի նկարագրություն**. կանանց տնտեսական ակտիվությունը մարզերում էականորեն սահմանափակվում է ենթակառուցվածքային և տարածքային խոչընդոտներով: Հասարակական տրանսպորտի անբավարար և ոչ կանոնավոր աշխատանքը, աշխատատեղերի սղությունն ու ցածր վարձատրությունը կանանց ստիպում են հրաժարվել կայուն զբաղվածությունից կամ իրենց եկամտի զգալի մասը ծախսել տրանսպորտի վրա:

Արդյունքում, տրանսպորտային ենթակառուցվածքների թերի լինելը, մասնավորապես՝ միջգյուղական հաղորդակցության բացակայությունը և սահմանափակ գրաֆիկով երթուղայինները, էլ ավելի նվազեցնում են կանանց հասանելիությունը մարզկենտրոնների աշխատաշուկային, որտեղ էլ կենտրոնացված են հիմնական աշխատատեղերը:

Բացի այդ, բարձրագույն կրթության հասանելիության բացակայությունը որոշ մարզերում, մասնավորապես՝ Վայոց Ձորում, սահմանափակում է երիտասարդ կանանց մասնագիտական աճի և տեղում կրթություն ստանալու հնարավորությունները: Այս գործոնները համատեղ խորացնում են կանանց սոցիալական և տնտեսական խոցելիությունը և նվազեցնում նրանց հզորացման հեռանկարները:

Մասնակիցներից շատերը նկատում են, որ համայնքներում անհրաժեշտ է ստեղծել կամ արդեն գործող զբաղվածության կենտրոնների կարողությունները զարգացնել այնպես, որ դրանք ոչ միայն ապահովեն կանանց աշխատատեղերի հասանելիությունը, այլև հնարավորություն տան ձեռք բերել նոր հմտություններ: Նման կենտրոնները կարող են հանդես գալ որպես միջանկյալ օղակ՝ մի կողմից աջակցելով կանանց մասնագիտական պատրաստվածությանը և գործատուների հետ կապի հաստատմանը, մյուս կողմից՝ ապահովելով ժամանակավոր աջակցություն երեխաների խնամքի հարցում: Սա հատկապես կարևոր է այն կանանց համար, ովքեր խնամքի պարտականությունների պատճառով սահմանափակ ժամանակ ունեն աշխատաշուկա մուտք գործելու կամ նոր հմտություններ սովորելու համար: Մինչդեռ այս պահին այդ կենտրոնները թիրախային չեն գործում:

---

## Խնդիրների շրջանակ

1. **Տրանսպորտային հասանելիության սահմանափակումներ.** մարզերում հասարակական տրանսպորտը հաճախ չի գործում կանոնավոր և տեխնիկապես անբավարար է: Վերջին երթուղայինները հաճախ ավարտում են աշխատանքը մինչև կանանց աշխատանքային օրվա ավարտը, ինչի հետևանքով կանայք ստիպված են իրենց եկամտի զգալի մասը ծախսել տաքսի ծառայությունների վրա:
2. **Աշխատատեղերի սղություն և ցածր վարձատրություն.** մարզերում տեղական աշխատատեղերը սահմանափակ են և ցածր վարձատրվող, ինչպես արդեն նշվեց: Կանայք հաճախ կանգնում են ընտրության առաջ՝ աշխատել ցածր վարձատրությամբ համայնքում կամ հրաժարվել աշխատանքից և մնալ տանը երեխաների խնամքի համար:

3. **Քարծրագույն կրթության անհասանելիություն.** որոշ մարզերում, մասնավորապես՝ Վայոց Ձորում, ի տարբերություն մյուս թիրախային մարզերի՝ Սյունիք, Տավուշ, Լոռի, Ծիրակ, որտեղ առկա են ինչպես պետական, այնպես էլ մասնավոր բուհեր, բացակայում են պետական և մասնավոր բուհերը, ինչի հետևանքով կանայք և աղջիկները զրկվում են տեղում բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունից: Երևան տեղափոխվելը ոչ բոլորի համար է ֆինանսապես կամ սոցիալապես հնարավոր կամ նախընտրելի: Սա էականորեն սահմանափակում է կանանց մասնագիտական աճն ու տնտեսական հզորացման հեռանկարները, որի արդյունքները զգալի կլինեն առաջիկա տարիների ընթացքում:
4. **Համայնքային զբաղվածության կենտրոնների թիրախային և գենդերազգայուն աշխատանքի բաց.** այս պահին համայնքներում գործող զբաղվածության կենտրոնները հիմնականում չեն գործում կոնկրետ կանանց կարիքներին ուղղված թիրախային ձևաչափով. դրանք հիմնականում չեն ապահովում թիրախային հմտությունների զարգացման ծրագրեր, ինչպես նաև չեն ապահովում ժամանակավոր աշակցություն խնամքի պարտականությունների բեռի թեթևացում: Արդյունքում, հատկապես խնամքի պատասխանատվություն կատարող կանայք ունեն սահմանափակ հնարավորություն օգտվելու նման ծառայություններից և մուտք գործելու աշխատաշուկա:

---

## Լուծման հնարավոր ուղիներ

1. **Տրանսպորտային ենթակառուցվածքների բարելավում և կանոնավորեցում.** հարմարեցնել հասարակական տրանսպորտի ժամանակացույցերը համայնքներում աշխատողների կարիքներին՝ հատկապես կանանց: Ներդնել նոր երթուղիներ և ապահովել գնային մատչելիություն:
  - *Հնարավոր ռեսուրսներ.* պետական բյուջե, համայնքային բյուջե, միջազգային զարգացման գործընկերների ֆինանսավորում
  - *Պատասխանատու կողմեր և գործընկերներ.* ՏԿԵՆ, ՏԻՄ-եր, մասնավոր փոխադրող ընկերություններ
  - *Հնարավոր ժամկետներ.* 2025-2027 թթ.
  - *Ինդիկատորներ.*  $\geq 20$  նոր կամ բարելավված երթուղի մարզերում,  $\geq 30\%$  աճ կանանց կողմից հասարակական տրանսպորտի օգտագործման համատեքստում

2. **Տեղական աշխատատեղերի ստեղծում և վարձատրության մրցունակության բարձրացում.** ՏԻՄ-երի և պետական ծրագրերի միջոցով խրախուսել փոքր և միջին բիզնեսների զարգացումը մարզերում, ինչպես նաև աշխատավարձերի մրցունակության բարձրացման նպատակով ներդնել մարզային/տարածքային հարկային և ֆինանսական խթաններ գործատուների համար, մարզերում առկա բայց չգործող գործարանները սկսել վերաշահարկել կամ վերաօգտագործել՝ ըստ նպատակի, հնարավորության դեպքում նաև տրամադրելով կանանց մասնագիտական գործունեության համար՝ դրանցից որոշ հատվածներ-տարածքներ՝ առանց վարձակալություն որոշակի ժամանակով:

- *Հնարավոր ռեսուրսներ.* պետական բյուջե, միջազգային դոնորների դրամաշնորհներ, մասնավոր ներդրումներ
- *Պատասխանատու կողմեր և գործընկերներ.* ԷՆ, ՏԻՄ-եր, գործատուներ, ՀԿ-ներ
- *Հնարավոր ժամկետներ.* 2025-2030 թթ.
- *Ինդիկատորներ.*  $\geq 15$  նոր տեղական ծրագիր թիրախային մարզերում,  $\geq 30\%$  ան կանանց ներգրավվածության մեջ տեղական աշխատաշուկայում

---

3. **Բարձրագույն կրթության հասանելիության ընդլայնում մարզերում**

- Վայոց Ձորում և այլ մարզերում նոր բուհական կամ մասնաճյուղային հաստատությունների բացում կամ վերաբացում/գործարկում:
- Հեռավար կրթական ծրագրերի հասանելիության ապահովում՝ տեխնիկական ու ֆինանսական աջակցությամբ:
- *Հնարավոր ռեսուրսներ.* պետական բյուջե, միջազգային կրթական ծրագրեր, տեղական և միջազգային բուհական համագործակցություն
- *Պատասխանատու կողմեր և գործընկերներ.* ԿԳՄՄՆ, բուհեր, ՏԻՄ-եր, միջազգային կրթական հիմնադրամներ
- *Հնարավոր ժամկետներ.* 2025-2029 թթ.
- *Ինդիկատորներ.*  $\geq 1$  գործող բուհական հաստատություն մարզերում

---

4. **Գենդերազգայուն զբաղվածության կենտրոններ՝ հմտությունների զարգացում, ժամանակավոր խնամքի ծառայություններ և գործատուների հետ կապ.** հարմարեցնել գործող զբաղվածության կենտրոնների ծառայությունները

կանանց կարիքներին՝ ընդգրկելով ոչ միայն աշխատանքի տեղաբաշխում, այլև հմտությունների զարգացում (թվային, ֆինանսական, փափուկ հմտություններ): Կենտրոնների աշխատանքում ներդնել ժամանակավոր խնամքի բաղադրիչ՝ մանկապարտեզի կամ ցերեկային խնամքի փոքր խմբերի միջոցով, որպեսզի ծնողները, մասնավորապես՝ մայրերը, կարողանան մասնակցել վերապատրաստումների և աշխատանք փնտրել: Ինչպես նաև զբաղվածության կենտրոնները դարձնել միջանկյալ օղակ՝ կանանց կապելով գործատուների հետ, կազմակերպելով հանդիպումներ, պրակտիկա և աշխատատեղերի մասին թիրախային տեղեկություն:

- *Հնարավոր ռեսուրսներ*. պետական բյուջե, համայնքային բյուջեներ, միջազգային դրամաշնորհային ծրագրեր, գործատուների համաֆինանսավորում:
- *Պատասխանատու կողմեր և գործընկերներ*. ԱՍՀՆ, ՏԻՄ-եր, Չբաղվածության պետական գործակալություն, ԲՀԿ-ներ, միջազգային կառույցներ:
- *Հնարավոր ժամկետներ*. 2025-2028 թթ.
- *Ինդիկատորներ*.  $\geq 20$  համայնքային զբաղվածության կենտրոն թիրախային ծրագրերով,  $\geq$  կանանց թիվ ներգրավված հմտությունների զարգացման և զբաղվածության ծրագրերում,  $\geq 15$  համայնքում ներդրված ժամանակավոր խնամքի ծառայություններ

---

## **Խնդիր 8. Զգայուն և խոցելի խմբերի կանանց տնտեսական ներառման սահմանափակումներ**

**Խնդրի նկարագրություն.** Թեև վերոնշյալ տարբեր խնդիրների քննարկման շրջանակում բազմիցս անդրադարձ է կատարվել նաև զգայուն և խոցելի խմբերի կանանց իրավիճակին, այնուամենայնիվ, անհրաժեշտ ենք համարում այս խմբի խնդիրները դիտարկել որպես առանձին հարց: Նրանց սոցիալական և տնտեսական խոցելիությունը բազմաշերտ է ու խաչվում է տարբեր ոլորտների խոչընդոտների հետ՝ կրթություն, զբաղվածություն, ձեռնարկատիրություն, սոցիալական ծառայություններ, ենթակառուցվածքներ: Այդ պատճառով նպատակահարմար է առանձնացնել նրանց խնդիրները մեկ միասնական բաժնում՝ ձևակերպելով ենթախնդիրները և առաջարկելով համակարգային լուծումներ, որոնք կխթանեն խոցելի խմբերի կանանց լիարժեք տնտեսական ներառումը:

Զգայուն և խոցելի խմբերի կանայք՝ ներառյալ էթնիկ փոքրամասնություններին պատկանող կանայք, փախստականի կարգավիճակ ունեցողները, ԼԳ-ից բռնի տեղահանվածները, հաշմանդամություն ունեցող կանայք, ընտանեկան բռնության ենթարկված կանայք և հղի կանայք, շարունակում են մնալ տնտեսական ակտիվությունից

դուրս կամ մասնակցում են մասնակի չափով: Նրանց հիմնական խոչընդոտներն են սահմանափակ մուտք կրթական ու վերապատրաստման ծրագրերին, աշխատաշուկայում խորական վերաբերմունք, աշխատատեղերի ոչ բավարար ճկունություն և անհարմար պայմաններ, սոցիալական ու ենթակառուցվածքային ծառայությունների (օրինակ՝ մատչելի տրանսպորտ, խնամքի ծառայություններ) բացակայություն, ֆիզիկական միջավայրի ոչ ներառականություն:

Արդյունքում այս կանայք հաճախ գրկվում են արժանապատիվ աշխատանքի և կայուն եկամուտ ունենալու հնարավորությունից՝ մնում են սոցիալական և տնտեսական կախվածության մեջ:

## Խնդիրների շրջանակ

- 1. Կրթության և վերապատրաստման սահմանափակ հասանելիություն.** խոցելի խմբերի կանայք հաճախ դուրս են մնում կրթական և մասնագիտական վերապատրաստման ծրագրերից, այդ թվում՝ ֆինանսական, լեզվական կամ ֆիզիկական խոչընդոտների և գործոնների պատճառով:
- 2. Աշխատաշուկայում խորականություն.** Էթնիկ փոքրամասնություններին պատկանող, հաշմանդամություն ունեցող կամ բռնի տեղահանված կանայք բախվում են բացասական վերաբերմունքի, ինչի հետևանքով նրանց մրցունակությունը նվազում է նույնիսկ բավարար հմտությունների պարագայում:
- 3. Աշխատավայրի ոչ ճկուն պայմաններ.** հղի կանանց, հաշմանդամություն ունեցող կանանց և խնամող պարտականություններ ունեցող կանանց համար բացակայում են ճկուն աշխատանքային ձևաչափերը (հեռահար աշխատանք, կիսաժամային զբաղվածություն, հարմարեցված գրաֆիկ):
- 4. Սոցիալական ծառայությունների սահմանափակում.** խնամքի ծառայությունների (մանկապարտեզներ, ցերեկային կենտրոններ), մատչելի տրանսպորտի և առողջապահական ծառայությունների բացակայությունը խոչընդոտում է կանանց մասնակցությանը տնտեսական կյանքին:
- 5. Ֆիզիկական միջավայրի ոչ ներառականություն.** հաշմանդամություն ունեցող կանայք հաճախ գրկված են ֆիզիկական մատչելիությունից՝ աշխատավայրերում, կրթական հաստատություններում և հասարակական տարածքներում:
- 6. Տնտեսական կախվածության խորացում.** վերը նշված խոչընդոտների հետևանքով խոցելի խմբերի կանայք հաճախ մնում են կախված ընտանիքի անդամներից կամ պետական նպաստներից՝ գրկվելով տնտեսական ինքնավարության հեռանկարից:

## Լուծման հնարավոր ուղիներ

**1. Կրթության և վերապատրաստման հասանելիության ապահովում.** զարգացնել թիրախային կրթական և վերապատրաստման ծրագրեր խոցելի խմբերի կանանց համար՝ ներառյալ լեզվական, մասնագիտական և թվային հմտությունների դասընթացներ:

- *Հնարավոր ռեսուրսներ.* պետական բյուջե, միջազգային կրթական դրամաշնորհներ, ԲՀԿ-ների աջակցություն
- *Պատասխանատու կողմեր և գործընկերներ.* ԿԳՄՄՆ, ԱՍՀՆ, ԲՀԿ-ներ, բուհեր և մասնավոր կրթական կենտրոններ, միջազգային կառույցներ
- *Հնարավոր ժամկետներ.* 2025-2028 թթ.
- *Ինդիկատորներ.*  $\geq 2000$  խոցելի խմբի կին ներգրավված կրթական և վերապատրաստման ծրագրերում՝ ՀՀ ողջ տարածքում

---

**2. Աշխատաշուկայում խտրականության նվազեցում.** իրականացնել հակախտրականության քաղաքականություններ և հատուկ ծրագրեր գործատուների համար՝ խթանելու խոցելի խմբերի կանանց ընդունումը աշխատանքի:

- *Հնարավոր ռեսուրսներ.* պետական բյուջե, համայնքային բյուջե, միջազգային կառույցների տեխնիկական աջակցություն
- *Պատասխանատու կողմեր և գործընկերներ.* ԱՍՀՆ, ԱԱՏՄ, գործատուներ, ՄԻՊ, ԲՀԿ-ներ, միջազգային կառույցներ
- *Հնարավոր ժամկետներ.* 2025-2028 թթ.
- *Ինդիկատորներ.*  $\geq 30\%$  աճ խոցելի խմբերի կանանց աշխատանքային զբաղվածության մեջ՝ ՀՀ ողջ տարածքում

---

**3. Ճկուն աշխատանքային պայմանների ներդրում.** օրենսդրական և գործնական մեխանիզմներով իրախուսել հարմարեցված աշխատանքային մոդելներ հղի կանանց, հաշմանդամություն ունեցող կանանց և խնամքի բեռ ունեցող կանանց համար:

- *Հնարավոր ռեսուրսներ.* գործատուների համաֆինանսավորում, պետական խթանման ծրագրեր
  - *Պատասխանատու կողմեր և գործընկերներ.* ԱՍՀՆ, ԱԱՏՄ, գործատուներ, միջազգային զարգացման գործընկերներ
  - *Հնարավոր ժամկետներ.* 2025-2028 թթ.
  - *Ինդիկատորներ.*  $\geq 100$  կազմակերպություն ներդրած ճկուն աշխատանքային մեխանիզմներ
- 

**4. Սոցիալական ծառայությունների ընդլայնում.** մարզերում ստեղծել և զարգացնել խնամքի, առողջապահական և տրանսպորտային մատչելի ծառայություններ՝ ապահովելու խոցելի խմբերի կանանց մասնակցությունը տնտեսական կյանքին:

- *Հնարավոր ռեսուրսներ.* պետական բյուջե, համայնքային ներդրումներ, միջազգային զարգացման գործընկերներ
  - *Պատասխանատու կողմեր և գործընկերներ.* ԱՍՀՆ, ՏԿԵՆ, ՏԻՄ-եր, միջազգային կազմակերպություններ, ԶՀԿ-ներ
  - *Հնարավոր ժամկետներ.* 2025-2030 թթ.
  - *Ինդիկատորներ.* նոր կամ ընդլայնված խնամքի և սոցիալական ծառայությունների թիվ ՀՀ մարզերում
- 

**5. Ֆիզիկական միջավայրի ներառականության ապահովում.** հասարակական և մասնավոր ենթակառուցվածքների հարմարեցում՝ ֆիզիկական հաշմանդամություն ունեցող կանանց համար կրթական հաստատություններում, աշխատավայրերում և հանրային վայրերում:

- *Հնարավոր ռեսուրսներ.* պետական և համայնքային բյուջեներ, մասնավոր հատվածի ներդրումներ, միջազգային կառույցների աջակցություն
  - *Պատասխանատու կողմեր և գործընկերներ.* ՏԿԵՆ, ԱՍՀՆ, ԷՆ, ՏԻՄ-եր, մասնավոր բիզնես, միջազգային կառույցներ
  - *Հնարավոր ժամկետներ.* 2025-2030 թթ.
  - *Ինդիկատորներ.*  $\geq 70\%$  կրթական հաստատություններ և  $\geq 50\%$  աշխատավայրեր ապահովված ներառական ենթակառուցվածքներով
-

**6. Տնտեսական անկախության խթանում.** զարգացնել ֆինանսական գրագիտության, վարկային հասանելիության և ձեռնարկատիրական ծրագրեր՝ ուղղված խոցելի խմբերի կանանց տնտեսական ինքնավարության ապահովմանը և հզորացմանը:

- *Հնարավոր ռեսուրսներ.* միջազգային դրամաշնորհներ, բանկային և վարկային կազմակերպությունների մասնակցություն
- *Պատասխանատու կողմեր և գործընկերներ.* ԷՆ, ԱՍՀՆ, ԿԲ, ՔՀԿ-ներ, ֆինանսական կազմակերպություններ
- *Հնարավոր ժամկետներ.* 2025-2028 թթ.
- *Ինդիկատորներ.*  $\geq 1000$  կին ստացած վարկային և ձեռնարկատիրական աջակցություն և գիտելիք

## **ԱՄՓՈՓԻՉ ԳԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

### **Դիտարկումներ**

- 1. Համակարգային մոտեցման անհրաժեշտություն.** կանանց տնտեսական մասնակցության խթանման ներկայիս քաղաքականություններն ու ծրագրերը հաճախ լինում են հատվածային և կարճաժամկետ, ինչի հետևանքով չեն ապահովում երկարաժամկետ և կայուն արդյունքներ և ընդգրկուն չեն իրենց ծավալով, այլ կերպ ասած՝ լայնամասշտաբ չեն:
  
- 2. Ռազմավարական հաղորդակցման պակաս.** ներկայիս ծրագրերը հաճախ իրականացվում են տարանջատված և միմյանցից հետ չփոխյրացվող մոտեցմամբ, ինչի հետևանքով սահմանափակվում է դրանց արդյունավետությունն ու կայունությունը: Անբավարար համակարգված հաղորդակցությունը նաև բերում է ռեսուրսների ոչ օպտիմալ օգտագործման: Հետևաբար, անհրաժեշտ է զարգացնել և ապահովել ռազմավարական հաղորդակցություն, որպեսզի քաղաքականությունները, ծրագրերը և նախաձեռնություններն առավելի արդյունավետ լինեն, միմյանց հետ փոխկապացված, միմյանցից տեղեկացված՝ ապահովելով կայունություն և ռեսուրսների ճիշտ բաշխում և օգտագործում: Ռազմավարական հաղորդակցությունը պետք է զարգացնել տարբեր պատաստախանաստու և շահակից խմբերի միջև:
  
- 3. Մշտադիտարկման և գնահատման համակարգերի թերի մեխանիզմներ.** կանանց տնտեսական հզորացմանն ուղղված գործող ծրագրերի և քաղաքականությունների մեծ մասը չի ենթարկվում հետևողական մշտադիտարկման և գնահատման: Արդյունքում դժվարանում է ծրագրերի արդյունավետության չափումը, ցուցանիշների համեմատումը, ընթացիկ բարելավումը և քաղաքականությունների երկարաժամկետ ազդեցության գնահատումը:
  
- 4. Գենդերային վերլուծության և գենդերային ազդեցության գնահատման բացակայություն.** առկա և նոր ծրագրերի և նախաձեռնությունների զգալի մասը չի անցնում գենդերային վերլուծություն և գենդերային ազդեցության գնահատում ոչ պլանավորման և մշակման փուլերում, ոչ էլ իրականացման, ինչի հետևանքով կանանց կարիքները, խոչընդոտներն ու ներուժը ամբողջությամբ չեն արտացոլվում:
  
- 5. Միջաժամկետ և երկարաժամկետ միջոցառումների պակաս.** քաղաքական նախաձեռնությունների մեծ մասը կենտրոնացած է կարճաժամկետ լուծումների

վրա՝ առանց երկարաժամկետ կենսունակության ապահովման: սա սահմանափակում է կանանց տնտեսական ակտիվության շարունակականությունը:

**6. ՏԻՄ-երի դերակատարության սահմանափակում կանանց տնտեսական հզորացման գործընթացում.** մարզերում և համայնքներում ՏԻՄ-երի քաղաքական ու տնտեսական որոշումների կայացման գործընթացներում կանանց ներգրավվածությունը շարունակում է մնալ սահմանափակ. ՏԻՄ-երի կազմավորած հանձնաժողովներում և աշխատանքային խմբերում կանանց ներկայացվածությունը թերի է, ինչի հետևանքով կանանց կարիքներն ու առաջնահերթությունները բավարար չափով չեն արտացոլվում տեղական մակարդակի քաղաքականություններում և բյուջետային որոշումներում: Բացի այդ, ՏԻՄ-երը հաճախ չեն իրականացնում համայնքային կարիքների համակարգված գնահատում, հատկապես՝ կանանց, խոցելի խմբերի և երիտասարդների շրջանում: Սա խոչընդոտում է կանանց տնտեսական ներուժի բացահայտմանը և տեղական զարգացման ծրագրերում հավասարաչափ ընդգրկմանը: Այս պարագայում, իր հերթին, հենց ՏԻՄ-երի ներգրավվածությունը կանանց տնտեսական հզորացման քաղաքականությունների իրականացման գործընթացում դառնում է թերի, ինչը բերում է համակարգային բացերի: Այս առումով կարևոր է դառնում ամրապնդել ՏԻՄ-երի կարողությունները՝ ապահովելով կանանց ներգրավվածությունը հանձնաժողովներում և համայնքային կարիքների գնահատման գործընթացներում, ինչպես նաև ձևավորելով համաֆինանսավորման և գենդերազգայուն բյուջետավորման կայուն մեխանիզմներ:

**7. Միջազգային և միջմարզային փորձի փոխանակման և ճանաչողական այցերի պակաս ՏԻՄ-երի մակարդակում.** ՏԻՄ-երը հիմնականում գործում են մեկուսացված ձևով՝ չունենալով բավարար հարթակներ և հնարավորություններ փորձի փոխանակման, միմյանց՝ (միջ)մարզային, և միջազգային մակարդակով հաջողված փորձառություններից օգտվելու ու կիրառվող մոդելներին ծանոթանալու համար, այս պարագայում՝ համայնքային մակարդակում կանանց տնտեսական հզորացմանը նպաստելու նպատակով: Սա հանգեցնում է նրան, որ նույնանման խնդիրները տարբեր մարզերում լուծվում են հատվածային և տարբեր մոտեցումներով՝ առանց համակարգային փոխկապակցվածության: Արդյունքում՝ հաջողված նախաձեռնությունները չեն տարածվում ոչ միայն երկրի ներսում, այլ նաև միջազգային լավագույն փորձը հաճախ չի ներմուծվում և համատեքստայնացվում, և ՏԻՄ-երը շարունակում են գործել սահմանափակ փորձով ու ռեսուրսներով, մինչդեռ ապակենտրոնացման ռազմավարական գործընթացների շրջանակում փորձի փոխանակումը ամբողջությամբ համահունչ կլիներ և ի նպաստ քաղաքացու՝ հատկապես կանանց:

## Առաջարկություններ

- 1. Գենդերային մեյնսթրիմինգի ապահովում.** բոլոր նոր և գործող ծրագրերն ու նախաձեռնությունները, ինչպես նաև քաղաքականությունները պետք է հիմնված լինեն գենդերային վերլուծության և գենդերային ազդեցության գնահատման վրա՝ ապահովելով կանանց տնտեսական ներուժի լիարժեք իրացում: Սա ենթադրում է նաև համապատասխանաբար գենդերազգայուն բյուջետավորում: Գենդերային մեյնսթրիմինգը սահմանված է օրենքով, ինչպես նաև տվյալ ծրագրի շրջանակում իրավիճակի գնահատականի արդյունք է:
- 2. Ռազմավարական հաղորդակցման ապահովում.** Անհրաժեշտ է, որ կանանց տնտեսական հզորացմանն ուղղված բոլոր ծրագրերը և քաղաքականություններն իրականացվեն փոխկապակցված, տեղեկատվության փոխանակման և համակարգված համագործակցության միջոցով՝ ապահովելով ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործում և ծրագրերի կայունությունը:
- 3. Մշտադիտարկման և գնահատման արդյունավետ համակարգերի ներդրում.** բոլոր ծրագրերի համար անհրաժեշտ է մշակել և ներդնել միասնական, գործող, արդյունաքիեն ու չափելի մշտադիտարկման և գնահատման մեխանիզմներ՝ գենդերազգայուն ցուցանիշներով: Սա կապահովի քաղաքականությունների, ծրագրերի և նախաձեռնությունների թափանցիկությունն ու հաշվետվողականությունը, ինչպես նաև հնարավորություն կտա բարելավել ծրագրերը՝ հիմնվելով իրական արդյունքների և ազդեցության վրա:
- 4. Երկարաժամկետ ազդեցություն ունեցող ծրագրեր.** անհրաժեշտ է մշակել ու ներդնել երկարաժամկետ կենսունակ միջոցառումներ և նախաձեռնություններ, որոնք կապահովեն կանանց տնտեսական ակտիվության կայուն աճը, նրանց ներառումը և մասնագիտական ինքնահաստատումը:
- 5. ՏԻՄ-երի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում կանանց տնտեսական ներուժի իրացման համար.** ՏԻՄ-երի արդյունավետության և կանանց տնտեսական ներուժի իրացման համար անհրաժեշտ է միաժամանակ իրականացնել մի քանի փոխկապակցված քայլեր: Նախ, անհրաժեշտ է ապահովել կանանց համաչափ ներգրավվածությունը ՏԻՄ հանձնաժողովներում և վերահսկողության մարմիններում՝ նրանց ձայնը լսելի դարձնելով տեղական որոշումների կայացման գործընթացում: Չուզահեռաբար կարևոր է պարբերաբար իրականացնել համայնքային կարիքների գնահատում կանանց ակտիվ մասնակցությամբ, որի արդյունքները պետք է դառնան համայնքային բյուջետավորման հիմք: Այս մոտեցումը պետք է լրացվի բյուջետային և համատեղ ֆինանսավորման ծրագրերով, երբ ՏԻՄ-երը հատկացնում են միջոցներ կանանց տնտեսական ներուժի զարգացման համար և համագործակցում ԲՀԿ-ների,

հիմնադրամների ու միջազգային կազմակերպությունների հետ՝ համաֆինանսավորման հիման վրա նպատակային ծրագրեր իրականացնելու նպատակով: Վերջապես, անհրաժեշտ է կազմակերպել վերապատրաստումներ ՏԻՄ աշխատակազմի և համայնքային ավագանու անդամների համար՝ գենդերային հավասարության և գենդերազգայուն բյուջետավորման թեմաներով, ինչը կբարձրացնի ինստիտուցիոնալ կարողությունները և կապահովի կանանց կարիքների ներառումն ու հաշվի առնելը տեղական քաղաքականություններում:

- 6. Մարզային և միջազգային փորձի փոխանակում և ցանցային համագործակցություն՝ ՏԻՄ-երի արդյունավետության բարձրացման համար.** ՏԻՄ-երի կարողությունների ամրապնդման համար կարևոր է կազմակերպել պարբերական ճանաչողական այցեր ոչ միայն մարզերից մարզեր, այլև դեպի միջազգային հաջողված մոդելներ կիրառող համայնքներ՝ տեղում ծանոթանալու փորձառություններին և կիրառվող մոտեցումներին: Չուգահեռ անհրաժեշտ է ստեղծել մշտական ազգային ցանց կամ հարթակ, որտեղ ՏԻՄ-երը կարող են կիսվել ծրագրերով, մարտահրավերներով և լուծումներով՝ ներգրավելով նաև միջազգային գործընկերներին: Այս գործընթացում էական է համագործակցությունը ՔՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների հետ՝ փորձի փոխանակման համակարգման, լավագույն փորձերի ադապտացիայի և ներդրման համար: Արդյունքում, հաջողված փորձերը թե՛ մարզային, թե՛ միջազգային մակարդակից կարող են տեղայնացվել և ներդրվել այլ համայնքներում՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի առանձնահատկությունները:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կանանց տնտեսական հզորացումը պետք է դիտարկվի ոչ միայն որպես գենդերային հավասարության և սոցիալական արդարության առաջնահերթություն, այլև որպես ազգային և պետական կայուն զարգացման առանցքային ուղղություն՝ ի շահ քաղաքացու, հասարակության և պետության: Վերհանված խնդիրները և առաջարկությունների փաթեթը ցույց են տալիս, որ Հայաստանում կանանց տնտեսական ներուժի լիարժեք իրացման համար անհրաժեշտ են համակարգային ու ռազմավարական լուծումներ՝ հիմնված տվյալների վրա, ամրագրված քաղաքական կամքով և ամրապնդված ինստիտուցիոնալ հիմքերով, արդյունավետ մեխանիզմների կիրառմամբ և արդյունքահեն տվյալներով ու ցուցանիշներով:

Ուսումնասիրության արդյունքները փաստում են, որ կանանց տնտեսական ներգրավվածության սահմանափակումը պայմանավորված է ինչպես կարծրատիպերով և չվճարվող աշխատանքի անհամաչափ բաշխմամբ, այնպես էլ կրթության և աշխատաշուկայի անհամապատասխանությամբ, խնամքի ծառայությունների սահմանափակ հասանելիությամբ, արժանապատիվ աշխատանքի իրավունքների թերի պաշտպանությամբ և ինստիտուցիոնալ բացերով: Այս մարտահրավերները պահանջում են համապարփակ մոտեցում՝ համատեղելով պետության, ՏԻՄ-երի, մասնավոր հատվածի, ՔՀԿ-ների և միջազգային գործընկերների ջանքերը:

Առաջարկվող լուծումները ընդգրկում են քաղաքականության, ծրագրերի և մեխանիզմների այնպիսի բարելոխումներ, որոնք միտված են ստեղծելու հավասար հնարավորություններ, նվազեցնելու խոչընդոտները և ապահովելու կանանց տնտեսական ներառման կայուն հիմքեր: Դրանց իրականացումը կապահովի ոչ միայն կանանց տնտեսական ինքնավարությունը և հզորացումը, այլև երկրի տնտեսական մրցունակության և համայնքային զարգացման աճը:

Այսպիսով, կանանց տնտեսական հզորացումը պետք է դառնա Հայաստանի զարգացման օրակարգի առանցքային բաղադրիչ, որը կծառայի որպես երկարաժամկետ ներդրում հասարակության և պետության կայունության, ներառականության և բարգավաճման համար:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

*Ըստաբախմանության փաստաթղթի կառուցվածքի մշակման համար*

- Anderson, James. *Public Policymaking*. 2nd ed., Princeton, NJ: Houghton Mifflin, 1994.
- Bardach, Eugene. *A Practical Guide for Policy Analysis*. New York: Chatham House Publishers, 2000.
- Patton, Carl V., David S. Sawicki, and Jennifer J. Clark. *Basic Methods of Policy Analysis and Planning*. 3rd ed., Routledge, 2016.
- Fischer, Frank, Gerald J. Miller, and Mara S. Sidney, editors. *Handbook of Public Policy Analysis: Theory, Politics and Methods*. Taylor & Francis Group, 2007.
- Smith, Catherine F. *Writing Public Policy*. Oxford UP, 2010.
- Young, Eoin, and Lisa Quinn. *Writing Effective Public Policy Papers*. Open Society Institute, 2002.

### Առցանց աղբյուրներ

*Ստորև ներկայացված առցանց աղբյուրները հասանելի՝ 01.08.2025:*

- Bartle, Phil. *Preparing a Community Development Policy Paper: Guidelines for Ministry Leaders*. 2002. <http://www.scn.org/ip/cds/cmp/modules/en-pol.htm>
- Collins, Joseph J. *Policy Paper Format*. 1993. <https://bit.ly/35Ho6Lv>
- Glover, David. *What Makes a Good “Policy Paper”?* Ten Examples. 2002. <https://bit.ly/>
- Herman, Luciana. *Tips for Writing Policy Papers*. Stanford University, 2013. <https://law.stanford.edu/wp-content/uploads/2015/04/White-Papers-Guidelines.pdf>
- International Development Research Centre. *How to Write a Policy Brief*. IDRC, <https://idrc-crdd.ca/en/funding/resources-idrc-grantees/how-write-policy-brief>
- Milovanovich, Mihaylo. *Guide to Policy Analysis*. European Training Foundation, 2018. <https://bit.ly/3sETfID>
- “Policy Writing for Decision Makers.” Harvard Kennedy School, DPI 820M. Luciana Herman. <http://isites.harvard.edu/icb/icb.do?keyword=k91384>
- Scotten, Ali G. *Writing Effective Policy Papers: Translating Academic Knowledge into Policy Solutions*. 2011. <https://bit.ly/3vBTnKB>
- The Hume Center for Writing and Speaking. <https://undergrad.stanford.edu/tutoring-support/hume-center/writing/graduate-students/graduateworkshops>
- Harvard Kennedy School. *The Policy Analysis Exercise: The Writing Guide*. 2009. <https://shorensteincenter.org/wp-content/uploads/2012/07/PAE-WRITING-GUIDE-2009.pdf>

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

### *Քաղաքականության փաստաթղթի բովանդակության մշակման համար*

- World Economic Forum. *Global Gender Gap Report 2021*. Հասանելի՝ [https://www3.weforum.org/docs/WEF\\_GGGR\\_2021.pdf](https://www3.weforum.org/docs/WEF_GGGR_2021.pdf) (մուտք՝ 14.09.2025):
- World Economic Forum. *Global Gender Gap Report 2023*. Հասանելի՝ [https://www3.weforum.org/docs/WEF\\_GGGR\\_2023.pdf](https://www3.weforum.org/docs/WEF_GGGR_2023.pdf) (մուտք՝ 14.09.2025):
- World Economic Forum. *Global Gender Gap Report 2024*. Հասանելի՝ [https://www3.weforum.org/docs/WEF\\_GGGR\\_2024.pdf](https://www3.weforum.org/docs/WEF_GGGR_2024.pdf) (մուտք՝ 14.09.2025):
- World Economic Forum. *Global Gender Gap Report 2025*. Հասանելի՝ [https://reports.weforum.org/docs/WEF\\_GGGR\\_2025.pdf](https://reports.weforum.org/docs/WEF_GGGR_2025.pdf) (մուտք՝ 15.09.2025):
- ՀՀ կառավարության որոշում №482-Ն (2025թ., ապրիլի 23). ՀՀ *Գենդերային քաղաքականության իրականացման ռազմավարությունը 2025–2028 թթ.* Հասանելի՝ [https://www.e-gov.am/u\\_files/file/decrees/kar/GVDE-DCF5-5E9E-F31C/482.1.pdf](https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/GVDE-DCF5-5E9E-F31C/482.1.pdf) (մուտք՝ 20.09.2025):
- ՀՀ կառավարություն. ՀՀ «Չբաղվածության 2025–2031 ռազմավարական ծրագիր»:
- Ազգային վիճակագրական ծառայություն (ԱՐՄՍՍԱՏ). *Սոցիալ-տնտեսական վիճակագրություն, 2020, 2022, 2023 թթ.*:
- Ազգային վիճակագրական ծառայություն (ԱՐՄՍՍԱՏ). *Գործազրկության ցուցանիշներ ըստ կրթական մակարդակի, 2020 թ.*:
- Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով կոմիտե (CEDAW). *Հայաստանի յոթերորդ պարբերական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ (CEDAW/C/ARM/CO/7), 2022:*
- Հայաստանի Հանրապետություն և Եվրոպական Միություն. *Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր (CEPA), 2017:* Հասանելի՝ [https://www.mfa.am/filemanager/eu/CEPA\\_ARM\\_1.pdf](https://www.mfa.am/filemanager/eu/CEPA_ARM_1.pdf) (մուտք՝ 01.09.2025):
- Համաշխարհային բանկ. *Հայաստանի գյուղատնտեսության արդիականացում և առևտրայնացում. ոլորտի բարեփոխումների և ներդրումների գերակայությունների սինթեզման զեկույց, 2017:* Հասանելի՝ <https://documents1.worldbank.org/curated/en/619011497437361947/pdf/106933-ARMENIAN-PUBLIC-Synthesis-Final-%20Arm-June4-EDIT-M-final-06-12-17.pdf> (մուտք՝ 10.09.2025):

## ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

### Հավելված 1

#### ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐ/ ՑԱՆԿ

ԿԱՏԵԳՈՐԻԱ	ԵՆԹԱԿԱՏԵԳՈՐԻԱ	ԹԻՐԱԽԱՅԻՆ ԽՈՒՄԲ
<ul style="list-style-type: none"> <li>Տեղական բնակչություն և շահառու կանայք</li> </ul>	Տեղի համայնքային բնակիչներ	Գյուղական և քաղաքային համայնքներից բնակիչներ, մասնավորապես՝ կանայք
<ul style="list-style-type: none"> <li>Տեղական բնակչություն և շահառու կանայք</li> </ul>	Տարբեր տարիքային խմբերի կանայք	Երիտասարդ կանայք, միջին տարիքի, տարեց կանայք
<ul style="list-style-type: none"> <li>Տեղական բնակչություն և շահառու կանայք</li> </ul>	ԼՂ-ից բռնի տեղահանվածներ	ԼՂ-ից բռնի տեղահանված կանայք
<ul style="list-style-type: none"> <li>Տեղական բնակչություն և շահառու կանայք</li> </ul>	Հաշմանդամություն ունեցողներ	Հաշմանդամություն ունեցող կանայք
<ul style="list-style-type: none"> <li>Տեղական բնակչություն և շահառու կանայք</li> </ul>	Խոցելի սոցիալ-տնտեսական խմբեր	Սոցիալապես անապահով խմբեր
<ul style="list-style-type: none"> <li>Տնտեսապես ակտիվ կանայք</li> </ul>	Կին ձեռներեցներ	Գործող բիզնես ունեցող կին ձեռներեցներ
<ul style="list-style-type: none"> <li>Տնտեսապես ակտիվ կանայք</li> </ul>	ՓՄՁ հիմնադիրներ/ ղեկավարներ	Փոքր և միջին ձեռնարկատիրության կին հիմնադիրներ/ ղեկավարներ
<ul style="list-style-type: none"> <li>Տնտեսապես ակտիվ կանայք</li> </ul>	Սկսնակ ձեռներեցներ/ ստարտափ հիմնադիրներ	Նոր սկսող կին ձեռներեցներ
<ul style="list-style-type: none"> <li>Տնտեսապես ակտիվ կանայք</li> </ul>	Տնային բիզնես վարողներ	Տնային տնտեսության հիման վրա բիզնես վարող կանայք

<ul style="list-style-type: none"> <li>Մասնագիտական և փորձագիտական համայնք</li> </ul>	Տնտեսական զարգացման փորձագետներ	Տնտեսական զարգացման/ տնտեսական զորեղացման ոլորտի փորձագետներ, հետազոտողներ
<ul style="list-style-type: none"> <li>Մասնագիտական և փորձագիտական համայնք</li> </ul>	Բիզնես խորհրդատուներ	Բիզնես խորհրդատուներ, ինկուբատորների ներկայացուցիչներ
<ul style="list-style-type: none"> <li>Մասնագիտական և փորձագիտական համայնք</li> </ul>	Ֆինանսական ոլորտի ներկայացուցիչներ	Բանկերի, վարկային կազմակերպությունների ներկայացուցիչներ, ֆինանսական գրագիտության փորձագետներ
<ul style="list-style-type: none"> <li>Մասնագիտական և փորձագիտական համայնք</li> </ul>	Գյուղատնտեսական ոլորտի խորհրդատուներ	Գյուղատնտեսական ոլորտի խորհրդատուներ
<ul style="list-style-type: none"> <li>Մասնագիտական և փորձագիտական համայնք</li> </ul>	ՔՀԿ ներկայացուցիչներ	Կանանց տնտեսական զորեղացման ծրագրերով զբաղվող հիմնադրամների և ՀԿ-ների ներկայացուցիչներ
<ul style="list-style-type: none"> <li>ՏԻՄ/ Պետական կառույցներ</li> </ul>	Մարզպետարանների ներկայացուցիչներ	Տնտեսական զարգացման և սոցիալական քաղաքականության բաժինների ներկայացուցիչներ
<ul style="list-style-type: none"> <li>ՏԻՄ/ Պետական կառույցներ</li> </ul>	Համայնքապետարանների ներկայացուցիչներ	Համայնքային զարգացում/ համայնքային բիզնես ծրագրեր
<ul style="list-style-type: none"> <li>ՏԻՄ/ Պետական կառույցներ</li> </ul>	ՏԻՄ ավագանու անդամներ	ՏԻՄ ավագանու անդամներ, մասնավորապես՝ կանայք
<ul style="list-style-type: none"> <li>ՏԻՄ/ Պետական կառույցներ</li> </ul>	Զբաղվածության պետական գործակալության ներկայացուցիչներ	Զբաղվածության պետական գործակալության/ մարզային կենտրոնների ներկայացուցիչներ
<ul style="list-style-type: none"> <li>Մեդիա և հանրային կարծիք ձևավորողներ</li> </ul>	Լրագրողներ	Տեղական/ մարզային լրագրողներ, խմբագիրներ

<ul style="list-style-type: none"> <li>• Այլ հնարավոր խմբեր</li> </ul>	<p>Կրթական հաստատությունների ներկայացուցիչներ</p>	<p>Միջին մասնագիտական ուսումնական կենտրոնների/ քոլեջների ներկայացուցիչներ, կին ուսանողներ</p>
<ul style="list-style-type: none"> <li>• Այլ հնարավոր խմբեր</li> </ul>	<p>Երիտասարդ կանանց նախաձեռնություններ</p>	<p>Երիտասարդ կանանց նախաձեռնությունների/ խմբերի ներկայացուցիչներ, կանանց համայնքային խմբեր, ակումբներ, տեղում գործող միջազգային կառույցների տեղական գրասենյակների ներկայացուցիչներ, մասնավորապես՝ տնտեսական զարգացման և կանանց հարցերով բաժիններից</p>

## Հավելված 2 (ա)

### ՖՈԿՈՒՄ ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԱԾԱՐ

**Թեմա՝** Կանանց տնտեսական հզորավում. խնդիրներից մինչև հնարավորություններ, լուծումներ և առաջընթաց.

**Վայր՝** XXX-ի մարզ

**Մասնակիցներ՝** 12-16 շահակից տարբեր ոլորտներից

**Տևողություն՝** 90 րոպե

**Փորձագետ՝** Անի Կոչոյան

#### Բաժին 1. Ներածական հատված (Ներկայացում և համատեքստի սահմանում)

- Ողջունել և ներկայացնել ծրագիրը մասնակիցներին (ՎԻՆՆԵԹ Գորիս, ՕԶսԵՁԵՆ հիմնադրամ)
- Քննարկման սկիզբ, ՖԻՍ աշխատանքի շրջանակի ներկայացում և տեղեկատվական ու համաձայնության թերթիկների ստորագրում (Անի Կոչոյան)

## ՀԱՐՑԵՐ

---

### Բաժին 1. Ներածություն

1. Խնդրում եմ հակիրճ ներկայանալ և նշել՝ ինչ գործունեությամբ եք զբաղվում:
  2. Ի՞նչ նշանակություն ունի «կանանց տնտեսական հզորացում»-ը Ձեր մարզի համար:
- 

### Բաժին 2. Խնդիրներ և խոչընդոտներ կանանց տնտեսական հզորացման ճանապարհին

3. Որո՞նք են կանանց տնտեսական ակտիվության հիմնական խնդիրները և խոչընդոտները Ձեր մարզում՝ հաշվի առնելով նաև սոցիալական և մշակութային արգելքները և ոչ միայն, ինչպես նաև խոցելի խմբերի՝ միայնակ մայրերի, հաշմանադամություն ունեցող կանանց, ընտանեկան բռնության ենթարկված կանանց, երիտասարդ, տարեց կամ տեղահանված կանանց իրավիճակը, մինչև

2 տարեկան երեխա ունեցող կանանց, գյուղաբնակ կանանց իրավիճակը՝ հաշվի առնելով մարզային առանձնահատկությունները:

---

### **Բաժին 3. Հնարավորություններ և բարելավման ուղղություններ**

4. Ինչպիսի՞ տեղական /համայնքային, պետական, ոչ պետական, մասնավոր ծրագրեր կամ մեխանիզմներ (օրինակ՝ վերապատրաստում, մենթորություն, ֆինանսական գրագիտության դասընթացներ, բիզնես պլանի մշակման սեմինարներ, խորհրդատվություններ կամ այլ) կարող են առավել արդյունավետ լինել կանանց զբաղվածության և մասնագիտական առաջխաղացման խթանման համար Ձեր մարզում, մասնավորապես՝ ՏԻՄ-երի աջակցությամբ:
  5. Ի՞նչ հաջողված փորձերի, օրինակ, պետական քաղաքականությունների, ծրագրերի կամ տարբեր համագործակցությունների մակարդակում, օրինակներ կարող եք նշել:
- 

### **Բաժին 4. Ինստիտուցիոնալ միջավայր. ՏԻՄ-երի դերը**

6. Ի՞նչ դեր կարող են խաղալ ՏԻՄ-երը և գործատուները կանանց տնտեսական իրավունքների պաշտպանության, հավասար հնարավորությունների և զբաղվածության խթանման ուղղությամբ:
- 

### **Բաժին 5. Քաղաքական առաջարկների հավաքագրում**

7. Եթե Դուք հնարավորություն ունենայիք մշակելու քաղաքական առաջարկ, որն ուղղված կլինի բարելավելու հենց տնտեսական զարգացման, խթանման և հզորացման հատվածը, մասնավորապես՝ կանանց համար, ապա ինչպիսի՞ փոփոխություններ, ծրագրեր, մոդելներ կամ նախաձեռնություններ կներառեիք կանանց տնտեսական հզորացմանն ուղղված պետական քաղաքականության մեջ: Այլ կերպ ասած՝ որո՞նք են այն ծրագրերը կամ մոդելները, որոնք ըստ Ձեզ կարող են արդյունավետ լինել հենց Տավուշի մարզի համատեքստում
  8. Ի՞նչ աջակցություն (կարող է լինել ծառայություն, փորձի փոխանակում, տեխնիկական-փորձագիտական աջակցություն և այլն) պետք է ապահովեն տեղական մարմինները (գուցե նաև՝ կառավարությունը) և միջազգային գործընկերները՝ կանանց հզորացման ուղղությամբ:
-

## **Քաժին 6. Տեղային առանձնահատկություններ**

9. Որո՞նք են Ձեր մարզի յուրահատուկ մարտահրավերներն ու առավելություններն այս ոլորտում, եթե այդպիսին հայտնի են Ձեզ:
- 

## **Քաժին 7. Եզրափակիչ բաց հարց մասնակիցներին**

10. Կա՞ որևէ հարց կամ խնդիր, որը կարևոր է այս քննարկման համար, բայց դեռևս չի խոսվել դրա մասին, և Դուք կցանկանայիք անդրադառնալ դրան:
- 

*Շնորհակալություն: Ձեր կարծիքներն ու մտքերը շատ կարևոր են մեզ համար: Դրանք հիմք են հանդիսանալու քաղաքականության առաջարկությունների փաթեթ մշակելու համար, որպեսզի կարողանանք միասնական ջանքերով փոփոխություններ բերել մարզում:*

## Հավելված 2 (բ)

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ ՀԱՐՑԱՇԱՐ

**Թեմա՝** Կանանց տնտեսական հզորացում. խնդիրներից մինչև հնարավորություններ, լուծումներ և առաջընթաց.

**Վայր՝** XXX մարզ

**Մասնակիցներ՝** 25 շահակից տարբեր ոլորտներից

**Խմբեր՝** 5 (յուրաքանչյուր խմբում՝ 5 հոգի, բազմապրոֆիլ կազմով)

**Տևողություն՝** 90 րոպե

**Ծրագրի փորձագետ, մոդերատոր՝** Անի Կոչոյան

#### **Ողջույնի խոսք և ներածական մաս.**

- Ողջունել մասնակիցներին և ներկայացնել ծրագիրը (ՎԻՆՆԵԹ Գորիս, ՕԶսԵՉԵՆ հիմնադրամ) /15 րոպե/

#### **Վարման համար անհրաժեշտ կարգ.**

- Ցանկալի է յուրաքանչյուր խմբում ապահովել մասնակիցների բազմազանություն (համայնքի կին բնակիչներ, ՏԻՄ, ՔՀԿ, ձեռներեցներ, խոցելի խմբերի կին ներկայացուցիչներ և այլն):
- Խմբերն աշխատում են 40 րոպե, ապա յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր արդյունքները 10 րոպեում:
- Ներկայացման ժամանակ հարկավոր է խնդրել, որ յուրաքանչյուր խումբ ընդգծի միայն ամենահետաքրքիր, կարևոր կամ յուրահատուկ դիտարկումներից մեկերկուսը:

### ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ԲՈՒՈՐ ԽՄԲԵՐԻՆ

Խնդրում ենք աշխատել խմբով և պատասխանել հետևյալ հարցերին գրավոր և պատկերավոր կերպ (**առաջադրանքի այս հատվածի համար տրվում է 40 րոպե**): Յուրաքանչյուր խումբ պետք է ունենա ֆասիլիտատոր, որը կհամակարգի խմբային աշխատանքը:

Եթե քննարկման ժամանակ խմբերն ունենում են տեխնիկական և բովանդակային հարցեր, ապա այդ պահին կարող են դիմել ծրագրի փորձագետին:

Աշխատանքի վերջում յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր աշխատանքի արդյունքը (առաջադրանքի այս հատվածի համար յուրաքանչյուր խումբ ունի 10 րոպե):

### ԽՄԲԱՅԻՆ ԱՃԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ ՀԱՐՑԵՐ

Թեմա	Հարցեր
<p><b>Խոչընդոտներ, հնարավորություններ և խոցելի խմբեր</b></p>	<p>1. Որո՞նք են Ձեր մարզում կանանց տնտեսական հզորացման՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• հիմնական 2 խնդիրները/ խոչընդոտները, այդ թվում՝ խոցելի խմբերի կանանց համար, օրինակ՝ ԼՂ տեղահանված կանայք, ընտանեկան բռնության ենթարկված կանայք, հանդամություն ունեցող կանայք, տարեց կանայք, միայնակ մայրեր և այլն:</li> <li>• հիմնական 2 լուծումները/ հնարավորությունները ձեր նշած խնդիրները լուծելու համար:</li> </ul>
<p><b>Մարզի առանձնահատկությունները</b></p>	<p>2. Ո՞ր տեղային/մարզային առանձնահատկությունն է (առանձնահատկություններն են) ամենաշատը ազդում կանանց խնդիրների/ խոչընդոտների հնարավորությունների վրա՝ տնտեսական հզորացման և տնտեսապես ակտիվ լինելու տեսանկյունից, եթե այդպիսին հայտնի է Ձեզ: Օրինակ՝ սահմանամերձություն, գյուղատնտեսական ներուժ, աշխատանքային միգրացիա կամ այլ և ինչպե՞ս կարելի է այս առանձնահատկություններն օգտագործել կանանց հզորացման համար:</p> <p>Հատուկ ուշադրություն դարձրեք նաև խոցելի խմբերին, այդ թվում՝ ԼՂ տեղահանված կանայք, հաշմանդամություն ունեցող կանայք, տարեց կանայք, միայնակ մայրեր, ընտանեկան բռնության ենթարկված կանայք և այլն:</p>

<p><b>Հաջողված փորձեր և քարելավում</b></p>	<p>3. Ի՞նչ գործող /պետական, համայնքային, ոչ պետական ծրագրեր կամ նախաձեռնություններ են այսօր օգնում կանանց հզորացմանը Ձեր մարզում, և դրանցից որո՞նք կարելի է ընդլայնել:</p>
<p><b>ՏԻՄ-երի դերը և ռեսուրսները</b></p>	<p>4. Ինչպե՞ս կարող են համայնքային իշխանությունները (ավագանի, համայնքապետարան և այլ) առավել արդյունավետ ներգրավվել կանանց տնտեսական ակտիվացման հարցում, օրինակ, կոնկրետ մոդելների, մեխանիզմների, ծրագրերի, նախաձեռնությունների, համագործակցության, աջակցության և այլ ձևաչափերով ՏԻՄ-երի մակարդակում:</p> <p>Այս առումով ի՞նչ առաջարկ ունեք, մեկը՝ ՏԻՄ-երի, մյուսը՝ պետական կառույցների համար՝ որպես լուծում:</p>
<p><b>Քաղաքական առաջարկներ և գործիքներ</b></p>	<p>5. Եթե մի բան առաջարկեիք ՏԻՄ-երի մակարդակով քաղաքականության փոփոխման մակարդակում, ինչպես նաև ազգային մակարդակում քաղաքականությունների ու օրենսդրական փոփոխությունների հետ կապված, ի՞նչը կլիներ: Այլ կերպ ասած՝ ի՞նչ կարելի է առաջարկել որպես քաղաքական լուծում կամ պետական քաղաքականության ուղղություն՝ հիմնված տեղային կարիքների վրա:</p>

### Հավելված 3

- ՄԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ Համայնքային քննարկում

### ՄԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ Համայնքային քննարկում

**Թեմա՝** Կանանց տնտեսական հզորացում. խնդիրներից մինչև հնարավորություններ, լուծումներ և առաջընթաց. Տավուշ

**Վայր՝** XXX մարզ

**Մասնակիցներ՝** 25 շահակից տարբեր ոլորտներից

**Խմբեր՝** 5 (յուրաքանչյուր խմբում՝ 5 հոգի, բազմապրոֆիլ կազմով)

**Տևողություն՝** 90 րոպե

**Ծրագրի փորձագետ, մոդերատոր՝** Անի Կոչոյան

#### Նպատակ

Համայնքային քննարկումը (town-hall) նպատակ ունի բացահայտել Տավուշի մարզում կանանց տնտեսական հզորացման հիմնական խոչընդոտները, հնարավորությունները, տեղային առանձնահատկությունները, ՏԻՄ-երի դերը և քաղաքական բարելավման ուղղությունները՝ շահակիցների լայն շրջանակի մասնակցությամբ:

#### Մասնակիցներ

Ընդհանուր՝ 25 մարդ: Ներկայացված են՝ համայնքի բնակիչ կանայք, ՏԻՄ ներկայացուցիչներ, պետական մարմիններ, ՔՀԿ-ներ, փորձագետներ, ձեռներեցներ, խոցելի խմբերի ներկայացուցիչներ, մեդիա:

#### Կառուցվածք

Փուլ	Տևողություն	Նկարագրություն
Ողջույն և ներածություն	5 րոպե	Ծրագրի ներկայացում, ձևաչափի բացատրություն
Խմբային աշխատանք	40 րոպե	5 խումբ, յուրաքանչյուրը՝ 5 մասնակից

Ներկայացումներ	40 րոպե	Յուրաքանչյուր խումբ՝ 10 րոպե
Ամփոփում	5 րոպե	Գլխավոր մտքերի ամփոփում

### Խմբերի ձևավորում

Կարևոր է ապահովել բազմապրոֆիլ խմբեր, որպեսզի յուրաքանչյուրում լինեն՝

- Համայնքի կին բնակիչներ
- ՏԻՄ կամ պետական ներկայացուցիչներ
- ՔՀԿ ներկայացուցիչներ
- Բիզնես կամ ՓՄՁ ոլորտից
- Խոցելի խմբերի կին ներկայացուցիչներ

### Խմբային առաջադրանքի շրջանակ

Բոլոր խմբերը աշխատում են նույն առաջադրանքի վրա՝ հիմնված հետևյալ 5 թեմատիկ ուղղությունների վրա.

1. Խոչընդոտներ, հնարավորություններ, խոցելի խմբեր
2. Տավուշի տեղային առանձնահատկություններ
3. Հաջողված փորձեր և ընդլայնելի նախաձեռնություններ
4. ՏԻՄ-երի դերը և ռեսուրսները՝ 2 առաջարկով
5. Քաղաքական առաջարկ՝ տեղային կամ ազգային մակարդակով

Յուրաքանչյուր խմբում ֆասիլիտատորը համակարգում է քննարկումը և գրանցում է արդյունքները:

### Ներկայացման մեթոդաբանություն

Յուրաքանչյուր խումբ ընտրում է ֆասիլիտատոր: Ֆասիլիտատորն ընդգծում է միայն ամենահետաքրքիր, խնդրին լուծում տվող/առաջարկող կամ ինքնատիպ դիտարկումները:

**Հավելված 4.**

**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅԱՆ ԹԵՐԹԻԿ**

**ՖՈԿՈՒՄ ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ**

**XX.XX.2025**

Վայր՝ ... մարզ

*Հարգելի՛ մասնակից,*

- Շնորհակալ ենք այս քննարկմանը մասնակցելու նախնական համաձայնության համար: Ձեր կարծիքը շատ արժեքավոր է և կարևոր է մեր հետազոտության համար:
- Ձեր տրամադրած տեղեկատվությունն անանուն է, և Ձեր տեսակետները չեն կապվելու Ձեր անվան հետ, այդ իսկ պատճառով մենք միմյանց հետ չենք հաղորդակցվի անուններով, այլ՝ համարներով՝ 1-2-3-4-5-6-7-8:
- Սովորաբար նման հանդիպումները ձայնագրվում են: Մենք ևս ցանկանում ենք ձայնագրել ֆոկլուս խմբային քննարկումը՝ վստահ լինելու համար, որ բաց չենք թողնի խմբում հնչեցրած կարևոր մտքերը, կարծիքները և գաղափարները: Ձայնագրությունը չի կապվի մասնակիցների անունների հետ, և ձայնագրությունների հասանելիությունը խստորեն փակ է և կիրառելի միայն այս հետազոտության շրջանակում՝ վերլուծական նպատակներով:
- Դուք կարող եք հրաժարվել պատասխանել ցանկացած հարցի և, եթե ցանկանաք, կարող եք կասեցնել Ձեր մասնակցությունը քննարկման ցանկացած պահին՝ դրա մասին բարձրաձայն հայտնելով:
- Անհրաժեշտ է, որ քննարկման մասնակիցները հարգեն միմյանց և մեկը մյուսի պատասխանը գաղտնի պահելու սկզբունքը: Եթե անգամ այստեղ որևէ կարծիք է հնչում, որն էականորեն տարբերվում է Ձեր պատկերացումներից, հարկավոր է հարգել մյուսի կարծիքը և թույլ տալ, որպեսզի վերջինս ևս այն լսելի դարձնի:
- Եթե հարցեր ունեք հիմա կամ հարցեր կունենաք ֆոկլուս խմբային քննարկման ավարտից հետո:
- Խնդրում ենք ստորև ստորագրել՝ համաձայնելով մասնակցել այս ֆոկլուս խմբային քննարկմանը և ապահովել մեր հետադարձ կապը Ձեզ հետ:

Համաձայն եմ մասնակցել՝ \_\_\_\_\_

## Հավելված 5.

### ՖՈՎՈՒՄ ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

#### Ներածություն

Նախքան ֆոկլուս խմբային քննարկում սկսելը.

- Մոդերատորը ողջունում է մասնակիցներին:  
Ես Անին եմ Կոչոյան՝ ծրագրի փորձագետ և քննարկման մոդերատոր:
- Մոդերատորը ներկայացնում է
  - ◆ *Ծրագրի անվանումը և կազմակերպության անվանումը:*
  - ◆ *Ծրագրի նպատակը և խնդիրները:*
  - ◆ *Ծրագրի արդյունքների կիրառման շրջանակն ու նպատակը:*
- Մոդերատորը համառոտ ներկայացնում է նաև **ֆոկլուս խմբային քննարկումների նպատակն ու շրջանակը:**
- Խրախուսում է բոլոր ներկա մասնակիցների ակտիվ ներգրավվածությունը և մասնակցությունը քննարկմանը՝ նշելով, որ չկան ճիշտ ու սխալ պատասխաններ, բոլոր դիտարկումները ողջունելի են, իսկ կարծիքները՝ շատ կարևոր: Եթե որևէ մեկն ակտիվ է ավելի, քան մյուսները, սովորաբար հենց այսպես էլ լինում է, ապա մոդերատորը փորձում է պահել մասնակիցների ակտիվության հավասարակշռությունը:
- **Մոդերատորը պետք է ուշադիր լինի և քննարկման ընթացքում մասնակիցներին պարբերաբար խնդրի և հիշեցնի օրինակներ բերել:** Ընդհանրապես, քննարկումը գնում է մասնակիցների կողմից երկու ուղղությամբ՝ բացատրելով կամ օրինակներ բերելով: Ցանկալի է, որպեսզի երկուսն էլ լինի՝ սկզբում բացատրեն, հետո փորձեն օրինակներ բերել:
- **Մոդերատորը նշում է, որ քննարկման գաղտնիությունն ապահովված է,** որևէ տեղեկություն այդ քննարկումից դուրս չի կարող գալ և բացահայտվել այլ շրջանակում, և որ այդ պատճառով էլ անուններ չեն գործածվելու, իսկ անձնական տվյալները չեն տրամադրվելու այլ անձանց: Չայնագրությունը կօգտագործվի միայն հնչեցրած գաղափարները և կարծիքները ճիշտ վերարտադրելու, վերլուծություն կատարելու և զեկույց պատրաստելու համար:
- Մոդերատորը խնդրում է, որ մասնակիցները ևս ներկայանան (անուն, համայնք/մարզ, գրավածություն, կրթություն), որից հետո նշում է, որ համարներով կդիմի մասնակիցներին (հարմարները նախապես տեղադրված կլինեն սեղանին՝ մասնակիցների դիմաց, որպեսզի մոդերատորը և մասնակիցները հեշտությամբ հիշեն, թե որ մասնակցին որ համարով է պետք դիմել):
- Մոդերատորը միացնում է ձայնագրիչը: